

516 I
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՆ

ԶԵՂՈՒԱՐԴ

Մշաբերի են ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶՊԱՆՈՒԽԻՆԵՐԻ ՀԱՅԱՐ

ԱՇԽԱՑՈՒԹԻՒՆ

Բ. ԼԵԿՈՒ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ

ЭРИВАЛЬ

Типографія Эмина Теръ-Григорянцъ.

1897

Հ. գ. 5

2001

հ. 9 8

ՄԱԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՆ

ՀԵՌՆԱՐԿ

ՄԱՅՐԵՐԻ ԵՒ ՄԱՆԿԱԿՈՆ ՊԱՐՏԵԶՊԱՆՈՒՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

I

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Բ. ԼԵՒՈՆ ՑԻԳՐԱՆԵԱԾՑ



ԷՐԻՎԱՆ


ՏԻՊՈԳՐԱՖԻ ՏԵՐԵ-ԳՐԻԳՈՐՅԱՆ | ՏԻՊՈԳՐԱՖ. Է. ՏԵՐԵ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑ

1897

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՌԱՋԱԲԱՆ



Պրեօքէլեան մանկական պարտէզը սովորական ուսումնարանների նման մի ուսումնարան է, ուր երեխաներին ընդունելուց յետոյ, իսկոյն սկսում են սովորցնել գրել, կարգալ և գրանից յետոյ գիտութիւններ աւանդել: Դա մի այնպիսի ուսումնարան է, ուր ընդունելով չորս տարեկան մանուկին, ամենից առաջ սկսում են համաշւասար զարգացնել նրա բոլոր ընդունակութիւններն առանց մի որ և է ձանձրութիւն պատճառելու նրան և տալիս են նրա հասակին համապատասխան ամենայն տեսակ նպատակայարմար զուարձութիւններ:

Մարմնամարզութիւնը գլխաւոր առարկաներից մէկն է, որ կատարւում է զանազան զուարձալի, բայց կանոնաւորուած խաղերով: Խաղը մեծ գեր է կատարում մանկական պարտէզում, որովհետեւ խաղը և առհասարակ շարժողութիւնն երեխայի համար բնական պահանջներ են, որոնցից նրան չի կարելի զրկել, այլ նաև պէտք է օգնել նրան խաղալու և շարժողութիւններ անելու համար: Մանկական պարտէզի խաղերը և շարժողութիւնները բոլորն էլ յարմարեցրած են երեխայի մարմնի և նրա զանազան ընդունակութիւնների զարգացման համար: Խաղը երեխայի համար բնական պահանջ է, որովհե-

Дозволено Цензурою. Тифлисъ. 7 Ноября 1896 года.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳՈՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

5-97
44 6

տեւ նա խաղալով աշխատում է իր թոյլ մարմինն ամրացնել և շարժողութեանց մեջ փորձուել։ Նոյն ձգտումն էլ ունեն բոլոր անասունների մատաղահաս ձագերը։

Մանկական պարտէզը խաղերով, երգերով, փոքրիկ և զուարձալի պատմութիւններով, երեխաների համար դիւրըմբունելի հետաքրքիր եղանակներով ծանօթացնում է նրանց զանազան գիտութիւնների հետ, սովորցնում է կանոնաւոր խօսելու, պատմելու ձեերը, կանոնաւորում է և ուղղութիւն է տալիս նրանց ձգտումներին և ընազդմանցը (որոնք համախ բնականապէս լինում են վայրենաբարոյ, որոնք կարող են յետոյ հասարակութեան համար վնասակար լինել), սովորցնում է իրազննութեան, աշխատասիրութեան, ինքնուրոյնութեան, հնարագիտութեան, կարգապահութեան։

Կրօնը առաջին տեղն է բռնում այդ ուսումնարանում։ Բոլոր գիտնական մանկավարժները, որոնք Ֆրէօբէլից առաջ աշխատել են մանկական պարտէզի իրագործման համար և ինքը Ֆրէօբէլը միաձայն պնդում են, որ անհրաժեշտ է հենց սկզբից ներմուծել մանուկների հոգում մէջ աստուածային օրէնքները, կրթել նրանց այդ օրէնքներին համաձայն։ Այդ նպատակին համնելու համար մանուկներին ծանօթացնում են բնութեան և դրա օրէնքների հետ, որոնք նախասահմանուած են Աստուծուց, ինչպէս և ինքը, մանուկը, ստեղծուած է Աստուծուց։ Ի՞նչ մարդկային լեզու կարող է այն տեսակ ակներե և հասկանալի կերպով բացագրել Աստուծոյ գոյութիւնն, էութիւնը, մեծութիւնը, մշտնջենաւորութիւնը՝ քան ինքը բնութիւնը, որ Աստուծ է ոտեղծել։ Ծանօթանալով բնութեան հետ՝ մարդս ինքը տեսնումէ, որ ամեն ինչ էնթարկուած է բնական, խիստ որոշ օրէնք-

ների, որոնցից շեղուազն անպատիժ չի կարող մնալ։ Ահա այդ օրէնքներն են, որոնց անուանում են աստուածային օրէնքներ։ Դրանց հետ ծանօթացնում են մանուկներին մանկական պարտէզում բնութեան մասին տեղեկութիւն տալու և աստուածպաշտութեան համար, որ մարգուս գլխաւոր և միայնակ զեկավարն է, որովհետեւ ամեն բանի սկիզբն է ինքն Աստուած։

Նատերը կարծում են, որ մանկական պարտէզում չեն սովորցնում գրել և կարգալ։ Այդ կարծիքը սխալ է։ Գրել—կարգալը միացրած է գծագրութեան և նկարչութեան հետ, որոնք երեխաների համար մի բնական ձգտումներ են, որոնց նա ուսումնասիրում է սկզբում որպէս նկարչութիւն, որպիսի առարկան նա սիրում է և վերջապէս ինքը աեսնում է, որ առանց մի զգալի աշխատութեան գիտէ գրել և կարգալ։

Մաթեմաթիքական գիտութիւնները մեծ տեղ են բռնում մանկական պարտէզի դասընթացքում։ Այդ գիտութիւնները սովորցնում են զանազան տեսակ խաղալիկներով։

Մանկական պարտէզի բոլոր զբաղմունքներն այնպիսի ընտրողութեամբ են կատարուած, որ զարգացնում են մանուկների բոլոր ընդունակութիւնները, զգայարանները, մարմինը, սովորցնում են իրազաննութեան, աշխատասիրութեան, բարոյականութեան, ինքնուրոյնութեան, ինքնաճանաչութեան, աստուածպաշտութեան, որպէս զի մանուկները ժամանակին կարողանան պիտանի անդամներ լինել հասարակութեան համար։

Կրթութեան նպատակն է զարգացնել երեխայի ֆիզիքական, բարոյական, մտաւոր, հոգեկան ընդունակութիւնները, նրա բնազդումները, որոնց սերմերը աստուածային օրինաց համաձայն ցանած են նորա մէջ։ Կըր-

թութիւնը չի կարող տալ երեխային նոր ընդունակութիւններ, այլ կարող է միայն եղածը զարգացնել և նրան կեանքի համար պիտանի դարձնել:

Կեանքի համար երեխային հարկաւոր կլինեն նրա բուռոր ոյժերը, որոնց նա պէտք է կարողանայ կանոնաւոր կերպով գործադրել իր և հասարակութեան բարօրութեան համար։ Եթէ ոյժերից մէկն անզարգացած մնայ, նա կեանքի մեջ պակասութիւն կըզգայ, նրան կըթուի որպէս թէ նա իր կարեւոր անդամների մէկից զրկուածէ։ Ուրեմն ոյժերի և ընդունակութիւնների համահաւասար զարգացումն անհրաժեշտ է։ դրա համար էլ պէտք է զարգացնել երեխայի ֆիզիքական, մուաւոր, բարոյական, հոգեկան ոյժերը համահաւասար կերպով։

Երեխան չի ծնուել միայն գիտութիւն ձեռք բերելու համար, այլ գործելու և աշխատելու։ Նա առաջ պէտք է գաղափարների հետ ընտելանայ և յետոյ դրանց գործադրի։ Մի կրթութիւն, որ երեխային չի սովորցնում մտածելու, աշխատելու, մտաւոր կեանք վարելու, կատարեալ ապարդիւն է։

Ճանաչել պէտք է ամեն ինչ, որ կայ տիեզերքում և եկրագնոտի վրայ, այն է՝ իրեր, էակներ, ձեեր, օրէնքներ և դրանց յարաբերութիւնները, ընութիւնը, և այլն։ Այս բոլոր ճանաչելու համար երկու միջոց ունենք. այն է՝ դասախոսութիւնը և իրազննութիւնը։ Եթէ մարդուս համար դրանք են միայնակ միջոցներն, երեխաների համար էլ նոյնն է մնում, միայն զանազանութիւնը նրանումն է՝ որ երեխայի ըմբռնելու ոյժերն աւելի նուազ են, որոնց պէտք է հէնց այդ միջոցներով և գլխաւորապէս իրազնութեամբ զարգացնել, ամրացնել։ Առաջ պէտք է սովորցնել մտածելու և յետոյ քննելու, զննելու եղանակը։

Այդ կերպով ոչմիայն կարող ենք ուղղութիւն տալ երեխային, այլ և այն աստիճանին հասցնել, որ նա կարող լինի ժամանակով ինքը նոր տեղեկութիւններ ձեռք բերել, սովորել ինքնագործունէութեան։

Իրազննութիւնը կրթում է, կատարելագործում է երեխայի ընդունակութիւնները, սովորցնում է տեսնելու, քննելու, համեմատելու, բաղադրելու և այդ բոլորը ընդհանրացնելու։

Մտածել նշանակում է մտքեր համեմատել, կցել, գաղափարներ համեմատելով՝ ստեղծել նոր գաղափարներ և ուղիղ եզրակացութեանց հասնել։ Մտածելով ընդունակութիւնները զարգանում են ինչպէս և բոլոր այլ ընդունակութիւնները փորձով։ Այդ պատճառով էլ պէտք է երեխային սովորցնել քննութեան, զննութեան, որպէս զի ինքը կարողանայ ամեն բանի պատճառը որոնել, գտնել։ Պէտք է երեխային իրականից ուղեսորել դէպի գաղափարականը և անհատականից դէպի ընդհանուրը։ Պէտք է նրա գատողութիւնը հիմնուած լինի դրական փաստերի վրայ, ուրեմն իրական և դրական փաստերը պէտք է գատողութեան հիմքը կազմեն, որ զարգացման ամենառուղիղ և բնական ճանապարհն է։ Այս տեսակ ուսումնասիրութիւնն ամենահեշտն է, որովհետեւ նա բնական է, և այդ է պատճառը, որ հետաքրքրում է երեխային, թարմացնում և մարզում է նրա ընդունակութիւնները։

Կը գտնուեն անձինք, որոնք զարհուրելով կասեն. այդքան բան սովորցնել երեխային, շատ է։ Դրանց կարելի է պատասխանել. աշխատութիւնները փոփոխել չի նշանակի ծանրաբեռնել։ Այդ կախուած է վարժուհու հմտութիւնից։ Ամենազուարձալի զբաղմունքը կարող

է ծանրաբեռնել երեխային, եթէ նա չը փոփոխումէ
Ամենազուարձալի խաղը չի կարելի խաղալ մի երկու ժամ՝
շարունակ: Ամեն մի զբաղմունք փոփոխելով դառնում է
գիւրըմբռնելի, հետաքրքիր, զուարձալի:

Ինչ որ սովորցնում են մանուկին մանկական պարտէ-
զում՝ պէտք է սովորցնել ցուցական եղանակով, այսինքն
ամեն բան ցոյց տալով, բացատրելով, լուծելով կրկին
միացնելով: Ցուցական եղանակի համար բնական գիտու-
թիւնները տալիս են մեծ պաշտօ:

Պատմութիւնը չի կարելի սովորցնել այն եղանակով,
որ ընդունուած է, որովհետեւ երեխայի յիշողութիւնը
կր ծանրաբեռնուի անցեալ փաստերով: Պէտք է երեխային
հասցնել որոշ զարգացման և երբ նա ընտելացած լինի
այժմեան հասարակութիւնների դրութեանն, այն ժամա-
նակ կարելի է անցեալի մասին խօսել նրա հետ: Անցեալը
թողել է հետքեր, սովորութիւններ, արհետներ, արձան-
ներ, հնութիւններ: Համեմատելով դրանց պատկերները
կարելի է պատմութեան մասին իսկ գաղափար տալ
երեխային:

Մանկական պարտէզի պարապմունքներն երբէք ձան-
ձրալի չեն կարող լինել երեխայի համար, որովհետեւ
ամեն մի դաս, որ տեսում է 15 րոպէ, որից յետոյ, խա-
ղը, մարշը կամ մարմնամարզութիւնն երգեցողութեամբէ
կատարւում, որ նոյնպէս մօտաւորապէս 15 րոպէ է տե-
սում՝ թարմացնում, ամրացնում, զուարձացնում է նրան:

Ֆրէօբէլը նայում է երեխայի վրայ որպէս մի բոյսի
վրայ, որին պէտք է խնամել, միջոց տալ զարգանալու:
Նա դնում է երեխային բնութեան մէջ, շրջապատում է
նրան բնութեան զարգերով, այն է՝ ծաղիկներով, ծառե-

րով, կանաչով, ուր նրա երեսին ամեն ինչ ժպտում է,
ուր նա կարող է ազատութեամբ զարգացնել իր բազմա-
կողմանի ընդունակութիւնները:

Մեր հայ երեխաներն անպատճառ, առանց սկզբնա-
կան զարգացման, մտնում են ուսումնարան և միայն
առանձին ընդունակութեանց շնորհով և մեծ դժուա-
րութեամբ են կարողանում դասընթացքին հետեւել: Նա-
տերը նաև աշխատութեան սովոր չեն և հասարակ բա-
ները ըմբռնել չեն կարողանում: որովհետեւ ուսումնա-
րանն ենթադրում է մի որոշ աստիճանի զարգացում:
որ մեր երեխան չունի:

Ծնողները միշտ անբաւական են, երբ նրանց որդիքը
չեն կարողանում մտնել ուսումնարան, որովհետեւ ապար-
գիւն են անցրել իրենց 4—8 տարիները: Նատ անգամ
էլ մտնում են ուսումնարան, բարեկամութեան, անվերջ
խնդիրքների և աղաջանքների շնորհով: Այդպէս երե-
խաները մտնելով ուսումնարան՝ անբաղդութեան են
մատնւում, որովհետեւ զրանց համար ուսումնարանը
գառնում է տանջանարան այն պատճառով, որ անպատ-
ճառ են գասերին հետեւելու: Դրա հետեւանքը լինում է
ծուլութիւն, մարմնի տկարութիւն, և վերջապէս այդ-
պիսիները տարիներ շարունակ մնալով ուսումնարա-
նում, չեն կարողանում վերջացնել: Ծնողներն այդ ան-
յաջողութիւնը վերագրում են երեխայի ծուլութեանը,
այն ինչ պէտք է վերագրէին սկզբնական անպատճառ-
տականութեանը, որ ուսումնարանում ուղղելը կամ
պակասը լրացնելն անկարելի է լինում:

Պէտք է գիտենալ, որ ամեն մի ուսումնարան հիմ-
նուած է ոչ առանձին գեղեցիկ ընդունակութիւն ու-
նեցողների համար, այլ միջակ ընդունակութիւնների հա-
2

մար, այդ պատճառով այդ վերջինները պէտք է հեշտութեամբ կարողանան վերջացնել իրենց ուսումն, այն ինչ կարողանում են վերջացնել միայն առանձին լաւ ընդունակութիւն ունեցողները. պատճառն այն է, որ նախապատրաստուած չեն դասերին հետեւելու:

Ասածիցս պարզ երեսում է՝ թէ որքան կարեոր է սկզբնական կրթութիւնը, զարգացումը, նախապատրաստութիւնը, որպէս զի ամբողջ տարիների մտաւոր աշխատանքը երիտասարդի համար իզուր անցած չը լինի: Այդ նախապատրաստութիւնը հեշտ ձեռով տալիս է մանկական պարտէզը 4—8 տարեկան հասակում:

Մէկ մարդ չի կարող մշակել մի ամբողջ գիտութիւն, կրթութեան մի ամբողջ եղանակ, ինչպէս մանկական պարտէզի եղանակն է: Ամեն մի գիտնական եղանակի զարգացման մէջ աշխատում են շատ անձինք: Վերջին անձինք օգտուում են առաջընթացների գիտութիւնից, հմտութիւնից, գաղափարներից, դրանց վրայ էլ աւելացնում են իրենց գիտեցածը և այդ կերպով գիտութիւնը, եղանակը կազմակերպում է:

Ֆրէօբէլի մանկավարժական վարդապետութիւնը միայն նրա գործը չի, այլ առաջընթաց նշանաւոր գիտնական մանկավարժների աշխատանքն էլ է զետեղուածնրա վարդապետութեան մէջ:

Ի հարկէ կարելի է ընդունել մի հակամանկավարժական եղանակ (մէտօդ) վստահութեամբ, առանց ուսումնասիրելու շարժառիթներն, առանց տեսնելու թէ այդ եղանակն ինչպէս է հետզհետէ կազմակերպուել, բայց աւելի լաւ է գոնեա համառօտ տեղեկութիւն ունենալ եղանակի կազմակերպութեան ընթացքի մասին:

Այն անձինք, որոնք նորագոյն քաղաքակրթութեան

ընթացքում առաջարկել են գործնական դաստիարակութեան սկզբունքներ, կարելի է ասել, որ դրանցից առաջին սկզբունք տուողն եղել է ֆրանսիացի Մօնտէյն փիլիսոփան, որին պատմաբաններն անուանում են հայր նորագոյն մանկավարժութեան:

Մանկական պարտէզն ամենակարեւոր ուսումնարանն է մարդուս համար, որովհետեւ այդ տեղ է, որ երեխան ստանում է իր սկզբնական կրթութիւնը և զարգացումն, ուր ապագայ կեանքի և գործունէութեան համար հասուատ հիմք է դրւում:

Ֆրէօբէլը սկզբնական կրթութիւնը յանձնում է մայրերին և այդ կրթութեան եղանակն անուանում է «Մայրէնի»: Ֆրէօբէլն առաջարկում է ամեն մի գերգաստուն մանկական պարտէզ գարձնել: Որպէս զի երեխաները կրթուեն իրենց նմանների հասարակութեան մէջ, ֆրէօբէլն առաջարկում է ծանօթներից վերցնել այնքան հասակակից երեխաներ, որ նրանց թիւն համնի առնուազն 4—5-ի: Ասածիցս հետեւում է, որ ամեն մի օրիորդ ուսման ժամանակ պէտք է ուսումնասիրի մանկական պարտէզը, որպէս զի կարող լինի իր ապագայ զաւակներին տալ սկզբնական կրթութիւն և զարգացում ու դրանով կանոնաւորի իր զաւակների կեանքն ու ապագան:

Չը պէտք է մոռանալ, որ մայր լինել կը նշանակէ կրթիչ էլ լինել: Կրթութիւնն սկսում է իսկապէս երեխայի ծննդեան րոպէից: Ով որ հասկանայ այս երկու օրէնքների կարեռութիւնը, նա անշուշտ ամուսնութիւնից առաջ պէտք է ուսումնատուիլի նանկան պարտէզը:

Մի օրիորդաց ուսումնարան, ուր տեսականապէս և գործնականապէս չեն սովորցնում մանկական պարտէզի եղանակն, այդպիսի օրիորդաց ուսումնարանը չի կարող

Համապատասխանել իր նպատակին։ Ո՞ր աղջիկը կարող է կրթուած համարուել, որ ընդունակ չի կրթել իր զաւակներին։ Ո՞ր արհեստաւորը կարող է արհեստաւոր համարուել, որ ընդունակ չի իր արհեստն ուրիշին էլ սովորցնելու։

Որպէս զի ամեն մի օրիորդ կարող լինի ուսումնասիրել մանկական պարտէզը, պէտք է որ ամեն մի օրիորդաց ուսումնարանի նախապատրաստական դասատունները մանկական պարտէզ լինեն, այն ժամանակ փոքրիկ աղջիկն անձամբ կրթուելով մանկական պարտէզում և յետոյ վերջին դասարանում անցնելով մանկական պարտէզի տեսական մասը և վերջապէս գործնականապէս դասատութեամբ պարապելով իրենց ուսումնարանի մանկական պարտէզում նա մեծ հեշտութեամբ ձեռք բերած կը լինի այդ «Մայրերի ժիառանիւնը», որ ամենակարեւոր գիտութիւնն է նրա համար։ Ուրեմն այդ նպատակին հասնելու համար՝ հարկաւոր է մեր օրիորդաց ուսումնարանների ի բնէ կրթութեան անհամապատասխան նախապատրաստական դասարանները փոխել մանկական պարտէզների, որ մի շատ հեշտ գործ է, եթէ սկսելու համար ամեն մի օրիորդաց ուսումնարանի համար մէկ մանկական պարտիզպանուհի պատրաստած լինենք։ Այդ գործին կարող են ձեռնարկել Թիֆլիսում տիկին Սօփիա Բաբայեանը, որ հմուտ է այդ գործին, իսկ Կ. Պոլսում տիկին Գայիանէ Մատակեանը, որ այդ գործն երկար տարիներ ուսումնասիրում է։ Ունենալով այդ երկու կենդրունը՝ կարճ միջոցում կը տարածուի մանկական պարտէզի եղանակը և մեր օրիորդաց ուսումնարանները հասած կը լինեն իրենց այդ կարեւոր նպատակին։ Մանկական պարտէզն ես ուսումնասիրեցի արտասահ-

մանում իմ երեխաների համար, բայց հասկանալով դրա կարեւորութիւնը մեր մանուկների համար՝ աշխատեցի գրել մանկական պարտէզի տեսական մասը, ձեռքիս տակ ունենալով բարօնուհի Բէրտա Մարէնհօլց-Բիւլօյի, Առողութ Կէոլլէրի, Դըլօնի գիրքը և լսածս դասխօսութիւնները։

Մանկական պարտէզի այս առաջին մասը պարունակումէ տեսական բաժինը։ Սկզբում զետեղել եմ պատմական մասը, որ շատ կարեւոր է, որպէս զի իմանան թէ ինչ գիտնականներ են աշխատել մանկական պարտէզի իրագործման համար և իւրաքանչիւրն ի՞նչ գաղափարներ է յայտնել։ Պատմական տեսութեանը հետեւում է Ֆրէօբէլի կրթական վարդապետութիւնը։

Երկրորդ մասը պարունակումէ մանկական պարտէզի գործնական մասն, այն է մաթեմաթիկա և գեղարուեստ, որ ֆրանսիերէնից թարգմանել եմ։ Այս գործնական մասն աշխատասիրել են և պարոն Դըլօն։

Մնացած դասագրքերը, որոնք վերաբերում են բնագիտութեանց, երաժշտութեանը ելն։ Թարգմանւում են։



ՊԱՏՄԱԿԵՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶԻ ՄԱՍԻՆ

ՅօնծէՅնի, որ 19-րդ դարու ֆրանսիական վիլիսոփայ է, բարոյական կրթութեանը տալիս է առաջին տեղը: Նա մեղադրումէ իր ժամանակակից մանկավարժներին իմաստակութեան (պէտանտիզմ) մէջ: Այդ միջոցին իմաստակութիւնն արտայայտում էր երկու տեսակ, աշխատումէին սովորցնել, ոյժ տալ նուրբ և փրկուն մտածողութեան և յիշողութիւնը ծանրաբեռնում էին զանազան բաներով, անուշագիր թողնելով գիտակցական խելամտութիւնը: Մօնտէյնը որոշումէ թէ ինչպէս էր կամենում բարեփոխել կրթութիւնը և ինչպէս էր մտադիր փոխել այն կրթական եղանակը (մետօդ), որ արգելք էր դառնում խորհեցողութեան և դատողութեան, զարգացնում էր միայն յիշողութիւնը: Նա ասումէ, որ երեխային պէտք է պատուաստել այն ընդհանուր յատկութիւնները, որոնք մարդուն դարձնում են ողջամիտ և կորովամիտ: Մօնտէյնը հաստատումէ, որ կրթութիւնը չը պէտք է նպատակ ունենայ պատրաստել մասնագէտներ, զոր օրինակ արուեստաւորներ, պրօֆէսօրներ, այլ երեխային կատարեալ մարդ դարձնել: Քէպէտե Մօնտէյնը փոքր ինչ սիրումէր աղատութիւն տալը և բնաւորութիւնը յարգում է, բայց այնուամե-

նայնիւ չի կարծում: որ երեխային կարելի է իր կամքին թողնել և իր «կրթութեան փորձում» ասում է, որ երեխային պէտք է յանձնել մանկավարժին կրթելու: Նա շեշտելով ասումէ, որ պէտք է գլխաւորապէս զարգացնել աշակերտի բարոյական սկզբունքը և դատողութիւնը: Հետեւաբար նա խորհուրդ է տալիս ուսուցիչներին զարգացնել աշակերտի գիտակցական ինքնուրոյնութիւնը, նախաձեռնութիւնը: Այդ ցանկութեանը հասնելու միջոցներից մէկն է երիտասարդին վազորօք գցել մարդկային կեանքի հոսանքի մէջ (!): Առարկաներ գիտելը, որ այժմ անուանւում է իրազննական ուսում (leçon de choses) Մօնտէյնն անուշագիր չի թողել իր կըրթական ծրագրի մէջ: Պատմութիւն գիտենալուն Մօնտէյնը մի մեծ կարևորութիւն չի տալիս: այլ ասում է, որ կարեւոր է պատմութիւնից եզրակացնել այն բարոյական հիմունքը, որ պիտանի է: Որքան խօսուեց Մօնտէյնի մասին, բաւական է, որ մի ճիշտ գաղափար ունենանք նրա խելացի կերպով բարեփոխած մանկավարժական եղանակի վերաբերմամբ: Գիգօն հետեւեալ գովասանական խօսքերն է ասում նրա մասին. թո՛ղ կատարեն ինչ որ Մօնտէյնն առաջարկումէ, թո՛ղ հետեւն նրա խորհուրդներին, կարելի է դրանց վրայ ելի բան աւելացնելու հարկաւորութիւն լինի, եթէ աշակերտին աւելի սովորցնելու կարեւորութիւն լինի, քան թէ նա Մօնտէյն է առաջարկում, բայց պէտք է ընթանալ նրա առաջարկած ճանապարհով. թէեւ նա շատ բան չի ասել, բայց ինչ որ ասել է՝ ուղիղ է. ուրեմն առաջ պէտք է Մօնտէյնի գաղափարներն ուսումնասիրել և յետոյ միայն նրանից յաջորդողներինը:

Ըսթէ: Ֆրանսիական վերածնութիւնը չի ունեցել կըր-

թութեան գործում մտաւոր զարգացման աւելի ազդունողութիւն, աւելի ինքնուրոյն հնարագէտ մարդ՝ քան Շաբաւէն։ Նրա շարադրութիւնը «Գարգանտիւա» և «Պանտագրիւէլ» պարունակում են նորագոյն մտաւոր զարգացման առաջին ծրագիրը, թէպէտե ունեն իրենց անհաջոյ և տարօրինակ կողմերը, Շաբլէն իր ամբողջ կեանքում ունեցել է մի ցանկութիւն, այն է՝ ձշմարտութեան ուսումնասիրութիւնը և գիտութեան սէրը։ Գարգանտիւայի և Պանտագրիւէլի մէջ ուսուցիչը և աշակերտը զբաղուած են աւելի տեսական կեանքով, որպէս գիտնականներ և բանաստեղծներ և ոչ իրական կեանքով։ Նա ձգուումէ գէպի գաղափարականը, որ չը պէտք է արհամարհել, որ և միշտ բարձր է դասուել։

Նրա ծրագիրն ուղղած էր մարդուս ամբողջութեան վրայ, նա մենակեաց չէր իր գրադարանում, բայց նա ասումէր, թէ այն մարդը, որ նշանակուած է գործնական և քաղաքացիական կեանքի համար, ունի պարտաւորութիւններ գէպի իր ազգը։ Նրա վերոյիշեալ հեղինակութեանց մէջ՝ աշակերտը յանձնուած է պատուական ուսուցիչ Պանքրատին, ուրեմն չի կրթում այնպէս, ինչպէս սովորաբար կրթումէն մի ուսումնարանում, բայց հիմնական սկզբունքը, որի վրայ նա հիմնումէ այդ կրթութիւնը, կարելի է իրագործել միայն մի ուսումնարանում։ Նա ընդունել է որպէս կրթութեան եղանակ կեանքի բնական ընթացքը, տնային կերպով օգտումէ առօրեայ գէպքերից, իսկ կրթութեան ընթացքի կանոնագրութիւնը գտնում է Պանքրատի հայրական տրամադրութեան ներքոյ։ Այդ իսկ Սոկրատական կրթութիւն է, ուր մարդկային և աշակերտական խելքը թափանցում են մէկը միւսի մէջ։ Ուսումնէ

կատարւումէ խօսակցութեամբ զբօսանքի ժամանակ, որ մի է գիտողութեամբ և օգտաւէտ խորհրդածութեամբ ու յաճախակի պատահմամբ գիտնականների հետ։

ԵԱՆ ԿՕՄԷՆԻՈՒԾԼ (Կօմէնսկի) 1592—1671. ծնուեց Մօրաւիայում՝ Ունգարիայի սահմանի մօտ։ Կօմէնսկին աւելի յայտնի է Կօմէնիուսի անունով։ Պէստալոցցունախընթաց մանկավարժներից ամենաեռելին է։ Միշլէն նրան անուանումէ, «իսկ գործնական կրթութեան հայր»։ Մեծ մանկավարժի անունը նա ստացել է գրելով հետեւեալ երեք աշխատութիւններն, այն է։ — Մեծ վարդապետութիւն (Didactica Magna), Լեզուների գոււն (Janua linguarum) և Պատկերազարդ աշխարհ (Orbis pictus)։

Կօմէնիուսի «Մեծ վարդապետութիւնն ամենանշանաւոր աշխատանքներից մէկն է, որ գրուել է մանկավարժական գիտութեան մասին։ Առաջին 12 գլուխներում հեղինակը բացատրումէ իր վարդապետութեան ընդհանուր սկզբունքը։ Նա ասումէ, մարդը պէտք է ունենայ գիտութիւն և բարոյական ու կրօնական զգացմունք։ Դրանց սերմերը կան մարդուս մէջ, բայց կրթութիւնը հարկաւոր է գրանց զարգացման համար։ Երկու սեռի երեխաներն էլ հարկաւորութիւն ունեն կրթուելու։ Այդ կրթութիւնը պէտք է գրանց տան հասարակաց ուսումնարաններում։ որոնք պէտք է նոյնպէս կազմակերպուած լինեն, որ երեխաները կարողանան ստանալ կատարեալ կրթութիւն։ Հետեւեալ գլուխներում Կօմէնիուսը պարզում է իր ծրագիրը և կրթական եղանակը։ Դաստիարակչական հմտութիւնը նա պահանջում է իրերի և ժամանակի կանոնաւոր գործադրութեան համար։ Ամենից առաջ նա պահանջում է Փիզիքական կրթութեան իրագործումը, յետոյ նա բացատրում է իր մանկավար-

ժական եղանակի մասնաւոր սկզբունքը՝ նա ասում է, ուսուցանելը պէտք է լինի դիւրին, հիմնաւոր, արագ, պէտք է համապատասխանի ողջմութեանը, տայ աշակերտին գործնական տեղեկութիւններ առարկաների մասին։ Կօմէնիուսը յաճախ կրկնումէ այն երեւլի կարծիքը՝ թէ մտախոհութեան մէջ չը կայ ոչինչ, որ չանցնի մարդուս մտքով, այսինքն չը կայ ոչ մի գաղափար, որ ծագի առանց զգայարանների միջնորդութեան, ամեն մի առարկայ պէտք է այնքան անգամ ցոյց տալ աշակերտին, որ նա ըմբռնի նրա որպիսութիւնը աչքով՝ ականջով, մտքով, հոտառէտ իրերը՝ հոտառութեամբ, կարծր իրերը՝ համով, շօշափելու իրերը՝ շօշափմամբ և այլն։

Խօսքեր սովորելը պէտք է կատարուի իրեր անուանելիս, բարոյական և կրօնական ուսումը պէտք է կատարուի որոշ կերպով, այն է աշակերտը պէտք է սովորի զսպել իրեն, ուղղութիւն տալ իր ցանկութիւններին, սիրէ բարին յանուն բարեսիրութեան։

«Պատկերազարդ աշխարհ» ամենից աւելի հռչակեց Կօմէնիուսի անունը։ Սկզբում գտնւումէ մի այբբենարան, որի իւրաքանչիւր տառը համապատասխանումէ մի որևէ անասունի ճշին կամ երեխային ծանօթ մի որևէ ձայնի։ Գրքի գլուխները պատկերազարդ են, ունեն համարներ, որոնք համատասխանումէն բնագրի որոշ խօսքերին և կարճ գարձուածներին։

Յառաջաբանի մէջ հեղինակն ասում է. «Հմտութիւնը կայանումէ նրանում, որ առարկան ներկայացնուի աշակերտի զգայարաններին այնպէս, որ նա հեշտութեամբ ըմբռնի»։ Այս է մանկավարժական գործունէութեան հիմքը, որովհետեւ մենք չենք կարող ոչ գործել, ոչ խելք խօսել՝ եթէ չը գիտենանք, թէ ինչ ենք ցանկանում»

անել կամ ասել։ Ի հարկէ իմացութեան մէջ չը կայ ոչինչ, որ առաջուց մտքով անցած չը լինէր, այդ պատճառով էլ այդ է հիմքը բոլոր իմաստութեան, ճարտարութեան, բարի և խելացի գործողութեան, հէնց այդ պատճառով էլ պէտք է խնամքով վարժել խելքը, միտքը, զգայարանները, որ աշակերտը լաւ ըմբռնի քնական իրերի զանազանութիւնները և յատկութիւնները, հէնց այդ է, որ այժմեան ուսումնարաններում սովորաբար անուշագիր է թողնւում։ Երբեմն աշակերտին սովորցընումեն այնպիսի բաներ, որ նա չի կարողանում ըմբռնել և այդ պատահումէ այն պատճառով, որ չեն ներկայացնում նրա զգայարաններին, նրա երեակայութեանըն այդ իրերը ինչպէս հարկն է։ Այդ է պատճառը, որ մի կողմից սովորցնելը գժուարանումէ, իսկ միւս կողմից էլ լինումէ անպտուղ։

Պէտք է ասել, որ Կօմէնիուսը չը կարողացաւ բաւարար կերպով իրագործել իր ծրագիրը, որ շատ լաւ նախագծած էր։ Բացի այդ Կօմէնիուսը ոչինչ հաստատ և վերջնական մի բան չը ստեղծագործեց, նա միայն մի զարմանալի առաջընթաց մարդ էր։

Լ.ՕՔ. Սա գլխաւորապէս մի կատարելագործուած մարդէր, քննումէր հոգու տարրերը։ Հոգերանութիւնից մանկավարժութեան անցնելը հեշտ բան է և նա չէր կարող գժուարութեանց հանդիպել, եթէ ցանկանար իր գիտութիւնը կանոնաւոր կերպով գործադրել։ Մարդկային խելքը, բնական եղանակով կրթելու, ուղղութիւն տալու համար 1693 թ. նա հրատարակեց «Իմ կարծիքը մանկավարժութեան մասին», անունով գիրքը։ Այդ աշխատանքի համար նա պատրաստուած էր երկարամեայ փորձառութեամբ։ Իր ծանօթ ընտանիքներում, ուր նա

յաճախումէր, լաւ ուսումնասիրեց երեխաներին և կորովամոռութեամբ ուսումնասիրելով նրանց բնաւորութեան զարգացումն, հոգին, կարողացաւ մանկավարժական փորձառութիւնն ձեռք բերել և գրել «իր կարծիքը մանկավարժութեան մասին»։ Այդ գրուածքից կարելի է եղարկացնել 3 սկզբունք.—1, ֆիզիքական կրթութեան մէջ մարմնի ամրապնդութեան սկզբունքը. 2, բարոյական կրթութեան մէջ պատուոյ զգացմունքի սկզբունքը որպէս կանոն քաղաքացիական կեանքի. 3, գործնականութեան սկզբունքը։

Լօքէն չէ կամենում պատրաստել մասնագէտներ, գիտնականներ, այլ գործնական մարդիկ, որոնք ունենալով զանազան տեսակ կարեոր գիտութիւններ, կարողանան մաքառել կեանքի գժուարութիւնների դէմ, կարողանան կառավարել իրենց ունեցածը, հմուտ լինեն իրենց արուեստում վերջապէս կարողանան կատարել իրենց պարտականութիւնները որպէս քաղաքացի։

Լօքէն առանձին խնամքով մշակել է իր գրուածքի այն մասը, որ վերաբերումէ բարոյական կրթութեանը։ Լոկ գիտութիւնը նրան համար առանձին նշանակութիւն չունի։

Նա ասումէ, մի ազնուական բացի իր որդուն թողած հարստութիւնից՝ պէտք է աշխատի, որ նրա որդին լինի առաքինի, խոհեմ, գիտուն, ունենայ նաև շարժուածքի լաւ ձեւեր։

Լօքէն ընդունեց նաև Մօնտէյնի հետեւալ սկզբունքը, թէ անաշառ մեղմութիւնը պէտք է լինի մանկավարժական կանոն։ Այս կանոնին համաձայն պէտք է առ պատիարակչին եղիր անաշառ, մեղմ, երբեմն խիստ որ կարողանաս բարի լինել։

ԺԱՆ ԺԱՅ ԲՈՒՍՍՈ, Բուսսոն ծնուեց Փընէվում 1712 թ. յունիսի 28-ին։ Նա գրեց մի ամենակարեւոր, ամենագեղեցիկ գիրք իր գարու մանկավարժութեան մասին։ Դա այն մարդկանցից է, որոնք խիստ ներգործել են մարդկանց խելքի և մանկավարժութեան եղանակների վրայ, ոչ միայն ֆրանսիայում, այլ և Զուիցարիայում։ Գերմանիայում, ամբողջ Եւրոպայում, նաև Ամերիկայում։

Խօսել Բուսսօյի մասին մանկավարժական տեսակէտից կը նշանակէ խօսել նրա «Էմիլ» անուն գրքի մասին։ Այս գիրքը, որ բաղկացած է 6 գլխից՝ տպագրուել է հետեւալ վերնագրով։ «Էմիլ կամ կրթութեան մասին, աշխատութիւն Ժ. Ժ. Բուսսօյի—Փընէվի քաղաքացու»։

Դժգոհ լինելով այն հասարակութիւնից, որ շրջապատումէր նրան և ցանկանալով տեսնել այդ հասարակութիւնը բարեփոխուած, նա չի բաւականանում խիստ մեղադրանքներով, նա սկսումէ պտռել և գտնումէ մի ազդու միջոց հասարակութեան բարւոքման համար։ Այդ միջոցը կրթութիւնն է։

Հասարակութեան ուշագրութիւնը դարձնելով ժամանակակից ընդունուած կրթութեան վատ եղանակի վըրայ, ձեռնարկելով Բարլէի և Մօնտէյնի հազիւ նախագծած փորձերին, վերածելով կրթութեան գործը պարզ և խելացի սկզբունքի, սովորցրեց հետազոտել ընութիւնը, ուսումնասիրել կարեոր պահանջները և երեխայի մտքի ու հոգւոյ զօրութիւնը։ Բուսսօն մեծ ծառայութիւն արեց՝ նորագոյն մանկավարժութեան համար։

Ուրիշներն էլ կարող էին ուսումնասիրել այդ առարկան, բայց ոչ ոք չէր կարող գործադրել նոյն եռանդը, փայլուն ոճը, սէրը, պերճախօսութիւնը։

Բուսսօն չի գրել իր «Էմիլը» ի նկատի ունենալով նա-

Խակրթական գործը։ Նա չի մտածում ուսումնարանի մասին։ Նրա կարծիքներն ուղղվեն, և կարելի է մասնաւոր կերպով օգտուել նրա այդ գրուածքից և գործադրել ուսումնարանների համար։

«Եմիլն» է մի հարուստ, ազնուատոհմ որբ տղայ, դաստիարակչին յանձնուած, որ նրան պահում է գիւղում՝ ձեռքը գիւրք չի տալիս, ուսումնարան չի ուղարկում։ Թողնում է առանց ուսուցչի, առանց ընկերների, դնում է իր աշակերտին մի այնպիսի ան'ել գրութեան մէջ, որ ոչ մի յայտնի աշակերտական գրութեան չի համապատասխանում։ Աշակերտը ինքը գտնումէ, աւելի ճիշտ ասել, հնարում է այն ամենը, որ գարեր շարունակ մարդիկ հնարել են, այն է՝ գիտութիւններ, բարոյական սկրզբունքներ, կրօն և այլն։

Չը նայելով որ այդ կրթական եղանակը շատ տարօրինակ է, բայց և կարելի է օգտուել Ռուսսոյի մանկավարժական գիտուղութիւններից։ Այդ գիտողութիւնները զարմանալի կերպով նպաստեցին հասարակաց և մասնաւոր կրթութեան եղանակների բարեռքմանը։ Մանկավարժները հանեցին այդ գրքից այն հիւթը, որ գործադրելի էր։

«Ուսսոյի կարծիքով ամենակարեռն է ուսումնասիրել երեխային, որ կարելի լինի նրան ուղղութիւն տալ։ Երեխայի բնաւորութիւնը քիչ են ճանաչում և այն սըխալ գաղափարները, որ ունեն երեխայի մասին՝ գցում են աւելի մեծ սխալների մէջ։ Գիտնականները զբազուած են նրանով, թէ մարդս ինչ պէտք է գիտենայ, առանց մտածելու թէ երեխան դեռ կատարեալ մարդ չէ։ Ռուսսոն ասում է, թող իմ աշակերտին գարձնեն եկեղեցական, փաստաբան, ինձ փոյթ չէ։ Այդ կոչումը

ներից առաջ բնութիւնը մարդուս կանչում է դէպի կեանքը։ Իմ ցանկութիւնն է սովորցնել նրան կանոնաւոր կեանք վարելու։ Ես համոզուած եմ որ երիտասարդը գուրս գալով իմ ձեռքի տակից, չի լինի ոչ պաշտօնեայ, ոչ զինուոր, ոչ էլ քահանայ, նա ամենից առաջ կը լինի մարդ՝ ինչպէս հարկն է։ Հենց դրան էլ ամենից առաջ պէտք է ձգտի մարդս։ Յետոյ նա կարող է գառնալ՝ ինչ որ կամենում է և ամեն տեղ էլ նա իր տեղումը կը լինի։ Ահա այս նպատակին պէտք է ձգտեն բոլոր ուսուցիչները։ Այդ մի այնպիսի գաղափար է, որի դէմ չի կարելի վիճել, որև կարող է մանկավարժական եղանակի մէջ մեծ փոփոխութիւններ ներմուծել։ Ամենակարեռն, ասում է Ռուսսոն, կրթութեան մէջ՝ մարմնի մարզումն ու ամրացումն է։ Ամրացումը, որից կախուած է բոլոր մնացածը՝ միշտ արհամարուած է եղել, գատապարտուած է եղել արգելման առողջապահական վատ կանոններով, ճնշողութեամբ, երկարատեղ գասերով, գրագրութեամբ, որոնց ժամանակ խեղճ երեխան թուլացել, գունատուել է։ Ռուսսոն բարձրացնումէ իր ձայնը այս տիսուր երեսոյթի դէմ և հանդիսանումէ երեխայի պաշտպան, մատնացոյց անելով այդ անբնական երևոյթի վրայ։ Նա ասում է. «մարզեցէք, ամրացրէք երեխայի մարմինը, պահպանեցէք նրան առողջ, որ կարելի լինի գարձնել նրան զգաստ, խելացի։ Նա պէտք է պարապի ձեռագործութեամբ, աշխատի, վարժուի, բղաւի, շարժողութեան մէջ լինի, որպէս զի իր ուժերով մարդու նմանի և դրանից յետոյ նա մարդ կը լինի խելքով։ Ռուսսոն ասում է, որ բաւական չէ միայն ամրապնդել մարմինը, այլ խելքն էլ պէտք է մարզել՝ նրան ուղիղ ընթացք տալով։

Պուսսօն արգելումէ երեխայի ձեռքը գիրք տալը մինչև նրա 12 տարեկան հասակը, նրա գիրքը բնութիւննէ: Բնութեան մասին պէտք է տալ նկատողական դասեր: Նրան շրջապատող դրութիւնը պէտք է զարգացնէ նրան, տեսնելով սովորի, հարկաւոր չէ, որ նա գիտութիւններ սովորի, այլ պէտք է նրան սովորցնել, որ նա գիտութիւնները սիրի, սովորցնել ուսումնասիրելու եղանակներին (մէտոդ): Երբ գիտութիւններ ուսումնասիրելու ճաշակն արդէն զարգացած լինի՝ նա ինքը կ'ուսումնասիրէ գիտութիւնները: Այդ կերպով կը զարգացնեն երեխայի մէջ սկզբունքի ոգի, բնաւորութիւն, ինքնածանաչութիւն, գործող խելք, բանաւոր կամք և արթուն խիզճ:

Պուսսօն կամենումէ, որ ամեն մարդ, ինչ դասակարգի էլ որ նա պատկանելիս լինէր՝ սովորի մի արհեստ, որով նա կարողանայ իր համար հաց աշխատել: Նայեցէ՞ք թէ նա ինչ ուղութիւն է տալիս երեխայի հետաքրքրութեանը, նրա խելքին, հնարագիտութեանը, նախատեսութեանը: Տեսէ՞ք թէ ինչպէս է կամենում կազմակերպել նրա ընդունակութիւնները, որ նա կարողանայ ամեն բան տեսնել, կտարել: Այդ կերպով երեխայի մէջ ցանկութիւն կը ծագի ամեն բան ճանաչելու, ամեն բանի պատճառը գիտենալու, նա ոչինչ չի ենթագրի և չի ընդունի մի բան, որը նա չի հասկանում:

Սրանից հետեւումէ, թէ նա ինչ կարեորութիւն է տալիս իրերի ուսումնասիրութեանը: Սկսելով ամրապնդել երեխայի մարմինը և զարգացնել նրա զգայարանները, յետոյ նա զարգացնումէ նրա խելքը, դատողութիւնն, այդ կերպով նա զարգացնումէ նրա մարմինը և մոտաւոր ու հոգեկան կարողութիւնները: Ուրեմն նա

երեխայից կազմումէ մի էակ, որ գործումէ, մտածում է և մարդ գառնալու համար նրան մնում է միայն, որ նա կարողանայ սիրել և ունենալ ազնիւ զգացմունքներ:

Ըուսսօն զարմանալի է, երբ խօսում է կրթութեան ողջմուռթեան և ընդունակութիւնների բնական զարգացման մասին, երբ նա պնդումէ, որ հարկաւոր է ամրացնել երեխայի հոգին և մարմինը, որ ձնշում է տգէտ վարժապետը:

Նա իրաւացի է, երբ քակում է երեխայի կապանքը, մերժում է անգիր անելը, լոկ խօսքեր անգիր սերտելը, սովորելու մեքենական ձեւերը, գիտութիւնները վազաժամ սովորցնելը, որոնք չեն կարող արմատ բռնել երեխայի ուղեղի մէջ: Նա իրաւացի է, որ պահանջում է, թէ վարժապետը պէտք է միջոց տայ աշակերտի բնութեանը, որ ինքնուրոյն աճի, զարգանայ, որ վարժապետը լաւ ուսումնասիրի նրա բնաւորութիւնը, աշխատի նրան հետաքրքրել, ցոյց տայ, հասկացնի նրան ուսումնասիրութեան օգուտը, տայ նրան գիտողական ուսումնանօթացնի նրան կեանքի պիտոյքների հետ, գրքերից գուրս նրան ուրիշ կեանք էլ ցոյց տայ, հասկացնի ամեն բանի կարեորութիւնը, օգտակարութիւնը, տայ երեխային գաղափարները, զգացմոնք, սովորցնի կարգապահութեան, օրինաւորութեան և մարդաճանաչութեան:

Երեխայի կեանքը նմանում է հասակն առած մարդու կեանքին, նա ընդունակ է ունենալ նոյն զգացմունքները: Երեխաների աշխարհն էլ մի փոքրիկ աշխարհ է, ուր պատահումեն նոյն վտանգները, հրապոյրքը և նոյն մըրցումը: Երեխաները պէտք է զինուած լինեն նոյն զէնքերով, պէտք է ունենան խիզճ, սէր գէպի բարին, պարտաճանաչութեան զգացմոնք, անհաշիւ եռանդ գէպի

առաքինութիւնը։ Մարդս այդ բոլորին ընդունակ է, երեխան նոյնպէս։ Գլխաւոր բանն է, որ ուսուցիչը կարողանայ չափել գործադրութիւնը ոյժը, գործ դնել համապատասխան լեզու և պահանջ երեխայի հասակին համաձայն։

Աչա սրանք են Ռուսոի գրուածքից յաջող ընտրուած իրաւայի գաղափարները, որ ներկայացրինք այսուել՝ որպէս ընդհանրացած գաղափարներ, որոնք մեծ ծառայութիւն են արել նորագոյն մանկավարժական գործը հաստատ հիմքի վրայ դնելու համար։ Այդ գաղափարներն արձագանք գտան ամեն տեղ, որովհետեւ հարկաւոր ժամանակին ծնուեցին։ Սկզբից՝ մինչև Պէստալոցցին և Ֆրէօբէլն՝ այդ գաղափարները նպաստել են Գերմանիայում մանկավարժական եղանակները վերանորոգելու։ Տիկին Նեկար Դը Սոսիւրը, Հայր Ֆիրարը և բոլոր Ֆրանսիական հեղինակները, որոնք պարապել են մանկավարժութեամբ՝ ընթացել են նոյն ճանապարհովը, որ ցոյց է տուել Ռուսոն։ Ինչ որ Կօմէնիուսը, Ռաբլէն, Մօնտէյնը նախագուշակել, ասել են, Ռուսոն գրանց մասին խօսել է աղաղակելով, կրքով։ Նա յաջող կերպով համաձայնեցրել է ճշմարտութիւնը նոր կարծիքների և առաքինութեան հետ, նա գրգուել է մանկավարժների ուշագրութիւնը, կազմուել են կուսակցութիւններ և գրանցով առաջացել է մի ամբողջ գրականութիւն։ Թէպէտե Պարիզի արքեպիսկոպոսը դատապարտել էր և ֆընէվում այրել էր տուել Ռուսոի Էմիլ անունով գրուածքը և հեղինակին բանտարկութեան դատապարտել, Բէրնից էլ աքսորել էին նրան, այնուամենայնիւ նրա հակառակորդների և համամիտների աչքում էմիլն այնպիսի մի պատուական գրուածք էր համարւում, որ մանկավար-

ժական գրականութեան մէջ առաջնակարգ տեղ էր բըռնում, ուստի Ռուսոի մի քանի մտքերը միշտ օրինակելի կը մնան մարդկացին կրթութեան գործի համար։

Պէստալոցը։ Արա գործերի ընդհանուր գնահատութիւնն երեսում է այն մահարձանից, որ գրուած է նրա գերեզմանի վրայ՝ Բիէրում որ գտնւում է Զուկոցարիայի Արգաու կանտօնում Նոյհօֆի մօտ։ Այդ մահարձանի վրայ գրուած է։ «Այս տեղ հանգչում է Հէյնրիխ Պէստալոցին, որ ծնուել է Ֆիւրիխում 12 յունուարի 1746 թ. վախճանուել է Բրուգում 17 փետրուարի 1827 թ. Նա է փրկիչ աղքատ երեխաների Նոյհօֆում, որբերի հայր Ստանցում, հիմնագիր Ժողովրդական ուսումնարանի Բէրտուլում և Միւնիսէնբուքսէնում, սա է համաշխարհային կրթիչ Խվերդօնում, քրիստոնեայ, գաղաքայի, աշխատել է միայն ուրիշների համար, իսկ իր համար ոչինչ չի արել։ Հանգիստ նրա սակերաց։»

«Մեր Պէստալոցցուն՝ երախտագէտ Արգաու։»

Մի ուրիշ տապանագիր էլ կայ Խվերդօնում Պէստալոցու կնոջ գերեզմանի վրայ, որ Նուլդհէյսի աղջիկն է։ Այդ տապանագիրն է։ «Աննա Նուլդհէյսին արժանաւոր ամուսնուն Պէստալոցու, որ աղքատների բարեկամն էր։ Ժողովրդների բարերարն էր, մանկավարժութեան վերանորոգողն էր, 46 տարի շարունակ անձնուիրաքար պարապում էր կրթական գործով։»

Ինչ աւելի գեղեցիկ նկարագիր կարելի էր տալ մի մարդու կեանքի մասին քան վերոյիշեալը։

Հետեւենք Պէստալոցու մանկավարժական գործունէութեանը և կը տեսնենք թէ նա ինչ է ասել մարդկային կրթութեան համար։

Պէստալօցցին հազիւ և տարեկան էր դարձել, որ նրա հայրը, Փան Բապտիստ Պէստալօցցին, որ հմտութ ակնառոյժ էր՝ վախճանուեց: Այս հանգամանքն առանց հետևանքի չը մնաց նրա յառաջագիմութեան համար, որովհետեւ նրա գերդաստանը հարուստ չէր: Երիտասարդ Հէյնրիխն այդ ժամանակից սկսած տեսնում էր, թէ որքան նրա մայրը նուիրուած էր իր գերդաստանին, որին մի օրինակելի աղախին—հաւատարիմ Բաբլէն անձնութեաբար օգնում էր: Գտնուելով ամենագժուար հանգամանքներում և պահպանելով իր հասարակական դրութիւնը, Հէյնրիխի մայրը հոգում էր իր երկու զաւակների մասին: Պէստալօցցին պահպանեց իր անձնուրաց և քաղցրաբարոյ մօր համար անջնջելի յիշատակ, որ նրա համար մի տեսակ գաղափար գարձաւ կրթութեան գործում, ինչպէս մայրը գործում էր իր շրջանում, Հէյնրիխն կամենում էր յետոյ այդպէս գործել մարդկութեան բարօրութեան համար: Բայց որպիսի հիմաթափումն էր սպասում նրան աշխարհական: Աշխարհը չը տուեց նրա ներքին զգացումներին ոչ մի բաւարարութիւն: Նա զգայուն բնաւորութեան տէր էր և երեւակայութիւնը վառ, այդ պատճառով էլ պէտք է հանդիպէր տիսուր և գառն իրականութեանը:

Արձակուրգների ժամանակ երիտասարդ Հէյնրիխը լինում էր իր պապ Անդրէ Պէստալօցցու մօտ, որ պաստօր էր Հօնգում, Յիւրիխի մօտ: Հէյնրիխի բարեսրտութիւնն առատ պաշար էր գտնում այդ եկեղեցականի տանն, ուր կարելի էր տեսնել միայն անձնութրութիւն և այնպիսի սերմեր, որոնք նշանակուած էին տալ ամենագեղեցիկ պատուղներ:

Զարմանալի չը պէտք է թուի, որ հետեւելով այդ աս-

տուածապաշտ պաստօրին՝ նա սկզբում մոածեց հոգեւորական դառնալ:

Պէստալօցցին ուսանող դառնալով պէտք է հրապուրուէր այն ժամանակուայ ուղղութեամբ: Այդ միջոցին պրօֆէսօրներից շատերը մեծ փայլ էին գցում «մարդկութեան ընկերութեան» (collegium humanitatis) վրայ: Դրանք ձգտում էին վերադարձնել իրենց համաքաղաքացւոց դէպի հասարակ կենցաղավարութիւնը, մօտեցնել քնութեանը (Պուսսօ), ներշնչել անկախութեան հետ իսկական և ազնիւ սէր դէպի բարին: Պէստալօցցին գտնուելով այդ բոլոր ազգեցութիւնների տակ՝ շարունակում էր ուսումնասիրել աստուածաբանութիւնը, բայց քարոզի առաջին փորձում՝ անյաշողութեան հանդիպելով (քարոզելիս ծիծաղել էր) հրաժարուեց հոգեւոր պաշտօնից և մոածեց իրաւաբանութիւն ուսանել, որպէս զի կարողանայ ուղղել այն ժամանակուայ հասարակութեան սարսափելի մոլորութիւնները և չարագործութիւնները: Նա բորբոքուած էր ազգասիրութեամբ, բայց իրաւաբանական ասպարէզը շուտով փակուեց նրա համար, որ ուղղած էր ինքը ժողովրդի օգտին և ենթարկեց նրան այն ժամանակուայ ազնուագետական ուժեղ կառավարութեան բոլոր խստութիւններին: Այդ պատճառուով նա մոածեց ուսումնասիրել երկրագործութիւնը, որի վրայ մեծ ջանք գործ գրեց: Այս գործում նա գըտնուում էր Պուսսօի գաղափարների ներգործութեան տակ, որոնք ընդունուած և ջերմ առաջարկուած էին պրօֆէսօրների կողմից: Երկրագործութիւնը որպէս մասնագիտութիւն ընտրելու նպատակն էր ծառայել հասարակութեանը և օգտաւէտ լինել իր համաքաղաքացւոց: Նա ցանկանում էր կատարելագործել երկրագործական

միջոցները և ներմռւծել հողի նոր ձեկի մշակութիւն։ Նա գնաց յայտնի երկրագործ՝ Զիֆէլիի մօտ, որ բնակումէր Քիրխքէրգում՝ Բէրնի մօտ և վերջացնելով իր գործն այդ ուսումնականի մօտ, գնեց Արգառւ կանունում Բիրֆէլդի մօտ մի հող, ուր և հիմնեց իր Նոյհօֆ-անուանուած կալուածքը։ Իր ապագայի մասին գեղեցիկ ծրագիր կազմելով՝ նա ամուսնացաւ Աննա Շուլդհէյսի հետ, որ երկար տարիներ շարունակ լինելու էր նրա հաւատարիմ ընկերը։ Որպէս երկրագործութեան վերանորոգիչ, համաձայն իր դիրքին և այդ ձեռնարկութեանը պէտք է օրինակելի դառնար իր համաքաղաքացւոց բարորութեան համար։

Պէստալոցցու նախագծերը տարաբաղդաբար ձախորդութիւնների էին հանդիպում և նա ընկաւ պարոքի տակ ու մնաց իր կալուածքում համարեա առանց մի կտոր հացի։

Հենց այդ ժամանակն է լինում (1775 թ.), որ նա Նոյհօփում բացումէ իր մանկավարժական հիմնարկութիւնը։ Նրջակայքից ժողովումէ այդ տեղ աղքատ երեխաներ, սկսումէ նրանց կրթել, աշխատանքի սովորցնել և զարգացնել նրանց բարոյական ընդունակութիւնները։ Պէստալոցցին անդադար աշխատումէր։ Նոյհօփը թէ ուսումնարան էր և թէ գործարան՝ առանց ծրագրի։ Այդ տեղ մանում էին կանեփի և կտաւատի թելեր, պարապումէին հողագործութեամբ և այլն։

Զը նայելով որ Պէստալոցցին իր բոլոր ուշագրութիւնը լարել էր այդ հիմնարկութեան վրայ և իր բարեկամներիցն էլ մասնաւոր օգնութիւն էր ստանում, այնուամենայնիւ նրա գործերը յաջող ընթացք չունեցան։ Այդ միջոցին Պէստալոցցին մի առանձին աշխատժով պա-

րապումէր իր որդու—Եակոբլիի սկզբնական կրթութեամբ։ Նա կամենումէր, որ իր որդու գաստիարակութիւնը կատարուի կարեւոր ազատութեամբ, ինքն իրեն, առանց մի որ և է ծանրաբեռնութեան։

Այս տեղ երեան է գալիս Պէստալոցցու մանկավարժութեան ամենաբեղմնաւոր գալափարը, որ վճռական յաղթութիւն էր գործելու մանկավարժական հին եղանակների (մէտօդ) վրայ։

Պէստալոցցին ասում է, գիտութիւնովդ մի՛ ծանրաբեռնի երեխայիդ, բայց աշխատիր, որ նա իր խելքով ձանաչի ճշմարտութիւնը, յաճախակի ցոյց տուր նրան այն առարկաները, որոնք կարող են նրան ուսուցանել, զարգացնել։ Երեխայիդ ձեռքից բռնած առաջնորդիր նըրան գէպի բնութեան մեծ դաշտավայրը և յետոյ ճըշտութեամբ ապացուցիր՝ թէ բնութիւնն է, որ ուսուցանում է նրան, որ գու քո արուեստով նրա աշակերտն եռ լինելու։

Այս գալափարն արտայայտում է Պէստալոցցու բազմաթիւ գրուածքների մէջ բազմազան կերպով, որոնց մէջ մի շատ նշանաւոր նկատողութիւն է անում, այն է՝ որ կրթութիւնը պէտք է կատարուի կանոնաւորութեամբ և կատարեալ կերպով։

Պէստալոցցու որդի Եակոբլին, որ ծնուել էր 1770 թ. վախճանուեց 1797 թ. թողնելով մի զաւակ, որի անունն էր Գուլիբ, որ գնդապետ Պէստալոցցու հայրն էր։ Այս վերջինը Ցիւրիխի պոլիտեխնիկումի պրօֆէսօրն է։

Նոյհօփի գործն անյաջողութեան պատահելով, Պէստալոցցին իր բարեկամների խորհրդով սկսեց պարապել գրականութեամբ և մանկավարժութեանը վերաբերեալ գալափարները գրի վերածել։ Նա գրեց «Ճգնաւորի եղալափարները» գրի վերածել։

բեկոյ, «Ահնհարդ և Գերտրուդ»։ Այս վերջինը մի գերգաստանի և մի գիւղաքաղաքի բարգաւաճման պատմութիւնն է։ Այդ տեղ երեսում է թէ ի՞նչ կարող է անել մի գերգաստանի մայր և թէ ի՞նչ կարող են անել մի քաղաքի խելացի կառավարիչներ եկեղեցու և ուսումնարանի օգնութեամբ։ Այդ գրքում բարոյականութեան գեղեցկութիւնը երեսում է խիստ որոշ կերպով և մեծ հրապոյրքով։ Այդ գիրքը մեծ թնդիւն հանեց ամբողջ աշխարհում; բայց նրա միւս գրուածքները յայտնուեցին համարեա աննշան կերպով։

Ստանալով նոյչօֆում «աղքատների փրկիչ» տիտղոսը, նա արժանի է, որ նրան անուանէին նոյնպէս Ստանցի որբերի հայր։

Շտապֆէրի առաջարկութեամբ 1798 թ. գեկտեմբերին Պէստալոցցուն հրաւիրեցին կառավարելու այն որբանոցը, որ հիմնել էին Ունտէրվալդէնում։ որ գեներալ նառէնբուրգը զէնքի ուժով հպատակեցրեց։ Այդ տեղ Պէստալոցցին մեծ ջանք գործ գնելով աշխատեց 7—8 ամիս և կարողացաւ այդ որբանոցը հասցնել յաջող գըրութեան, բայց 1799 թուի յունիսին այդ որբանոցի շէնքը դարձրին հիւանդանոց ֆրանսիացիների երկրորդաշաւանքի պատճառով։ Այդ ժամանակ Պէստալոցցին շատ աշխատելուց հիւանդանալով գնաց Գուրնիժէլ իրառողջութիւնը վերակադնելու համար։

Նրա փորձառութիւնը Ստանցում կարելի է հետեւալ կերպով համառօտել։—

1. Ամենայն տեսակ գիտնական, բարոյական և կրօնական տեղեկութիւնները պէտք է հիմնուած լինեն գիտողութեան վրայ։

2. Ուսումնի պէտք է համսպատասխան լինի երեխայի ոյժերին, որպէս զի նա կարողանայ զարգանալ։

3. Ակզբնական ուսումնա եղանակն այն աստիճանն պէտք է հեշտ լինի, որ ամեն մի մայր կարողանայ գործադրել։

4. Կարգին և ճշմարտութեամբ գործ կատարելու կարեսութիւնը, որ նա սկզբում առաջարկել էր՝ հաստատաւում են փորձերով,

Փոփոխ (mutuele) և զանազան եղանակներով ուսուցանելը, որ կարող է մանկավարժութեան փորձառութեանը ծառայել, նա գործադրել էր, որ մասամբ ծանօթացնում է Պէստալոցցու մանկավարժական եղանակի հետ։

Պէստալոցցուն կարելի է տնօւանել Բէրտուի ժողովրդական ուսումնարանի հիմնագիր։ Այդ քաղաքը գալով նա խնդրեց թոյլ տալ իրեն դասեր տալու մի սկզբնական ուսումնարանում։ Ակզբում նրան մերժեցին, յետոյ մի ուսումնարանում մի քանի դաս տուին։

Վերջապէս յանձնեցին նրան ժողովրդական ուսումնարանի պատրաստական գաստրառունը, ուր կային մինչև 8 տարեկան երեխաներ։ Իր գործունէութեան համար շուտ վարչութիւնից մի շնորհակալութեան թուղթ ստացաւ։ Ութն ամիս հազիւ անցած՝ Պէստալոցցին Բէրտուի ուսումնարանի յանձնաժողովից մի նամակ ստացաւ, որի մէջ գովարանելով նրա մանկավարժական եղանարի հրաւիրում էին նրան այդ քաղաքի երկրորդ ուսումնարանի համար ուսուցիչ, ուր 8—15 տարեկան աշակերտներ կային։ Թէև նա ամեն կերպ աշխատում էր կերտներ կային։ Թէև նա ամեն կերպ աշխատում էր փորձառութեան ենթարկելով գործադրել իր մանկավարժական եղանակը (մէտօդ), բայց այդ տեղ էլ նրա աշխատանքն անյաջող ելք ունեցաւ։ Նրա աշակերտներից մէտաքանիչ անյաջող ելք ունեցաւ։

կը, որ 10 տարեկան էր՝ զարմանալի գոյներով է նկարագրում այդ ուսումնարանը:

Պէտք է ասել, որ գործնական վարժութիւնները կատարումէին ամենահասարակ կերպով և Պէտալօցցին արդէն այն ժամանակ թուերի ձեւերի հետ, լեզուն էր կցում, որ նրա կարծիքով կազմումէին կրթութեան ամբողջ նիւթը: Իսկ միւս ուսումնաքնները նա անկախ բաներ չէր համարում, այսպէս զոր օր՝ թուերի հետ կըցումէր նա հաշուելը, ձեւերի հետ՝ երկրաչափութիւնը, նկարչութիւնը, և առ հասարակ ամենայն տեսակ միտք պէտք է շուտ արտայայտուէր:

Փոքր ինչ յետոյ, զանազան հանդամանքների պատճառով, որոնց մասին պատմելու կարեօրութիւնը չըկայ այս տեղ՝ Պէտալօցցին հաստատուել էր Բէրտու ամրոցում որպէս ուսումնարանի տեսուչ և ունէր շատ աշխատակիցներ: Այդ տեղ կառավարութիւնը հովանաւորում և օգնումէր նրան: Այդ ուսումնարանը, որ հետզհետէ ուսուցչաց դպրոցի ձև ստացաւ՝ իր գործնական բժանմունքն ունէր: Այդ տեղ Պէտալօցցու աշխատակիցներն էին, Կրիւսին, Ապէնցէլը, Տօրլէրը, Բուսսը, Նաէֆը: Դրանք բոլորն էլ մանկավարժական եղանակները կատարելագործելու համար աշխոյժով աշխատում էին: Պէտալօցցին իր մանկավարժական ընդհանուր հայեցակէտը հետեւեալ կերպով է ձեւակերպում իր գըրուածում: — մարդկային բնութեան զարգացումը ենթարկուած է բնական օրէնքներին, որոնց հետ կանոնաւոր դաստիարակութիւնը պէտք է համերաշխութեամբ ընթանայ: Ահա նրա գաղափարներից մի քանիսը: —

1. Բնութիւնը միաժամանակ չի զարգացնում մեր բոլոր ընդունակութիւնները:

2. Այդ զարգացումը հետեւաբար է և ծանրընթաց ու միշտ բնաւորութեան անհատական գործն է:

3. Վարժութիւնը կրթութեան ամենամեծ միջոցն է: Բնութիւնը կրթում վարժումէ մեր ընդունակութիւններն այն բաներով, որոնց մենք հետազօտում ենք:

4. Կրթութեան գործը հիմնուելով կանոնաւոր վարժութիւնների վրայ, կառավացնի մարդկային բոլոր ընդունակութիւնների ներդաշնակ, ազատ, առաջադէմ զարգացումը:

1804 թ. Բէրնի կառավարութիւնն առաւ Պէտալօցցուց՝ Բէրտու ամրոցը ուր հիմնեցին մի ապաստանարան, իսկ Պէտալօցցուն Միւնխէնբուքում մի հին վանք յանձնեցին նոր ուսումնարան հիմնելու:

1805 թ. Պէտալօցցին հրաւէր ստացաւ Իլէրդօնից և չը կարողանալով մաքառել երկաթի կամքի տէր Ֆէլլէնբէրգի հետ՝ որ իր աշխատակիցներից մէկն էր, գնաց Իլէրդօն, ուր նրան հետեւեցին Միւնխէնբուքի ուսուցիչները և աշակերտները: Դրանք բոլորն էլ տեղաւորուեցին Իլէրդօն ամրոցում, որ քաղաքը յանձնել էր Պէտալօցցուն:



ՊԵՍԱԼՈՅՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

ԻՎԵՐԴՈՆՈՒՄ

Պը նայելով, որ Պէստալոյցին արդէն եւրոպական հռչակ էր ստացել, որ պէտք է նրան մարդկութեան գաստիարակչի տիտղոսը տար՝ ընկաւ և թշուառ վախճան ունեցաւ այն ուսումնարանը, որ նա հիմնեց Իվերդոնում։ Այդ անկման պատճառները յիշումէ Հայր Ժիրարը։ Ներքին պատճառները բարդուեցին ուսուցիչների անհամաձայնութեանց հետ։ Այն սէրը, որ իշխում էր մեր մէջ, ասումէր Պէստալոյցին իր աշխատակիցներին, անյետացել է և պէտք է անյետանար։ Մենք չը չափեցինք այն ոյժը, որ պահանջումէր սէրը։ Սարսափելի վիճաբանութիւնները ստիպեցին Պէստալոյցը նաև հեռանալ այդ տեղից։

1825 թ. երբ նա 80 տարեկան էր՝ գնաց նոյչօֆ։ Տիկին Պէստալոյցին, որ շարունակ խրախուսումէր ամուսնուն՝ վախճանուել էր 1814 թուին Իվերդոնում։ Պէստալոյցին ապրելով նոյչօֆում՝ գրեց «Կարապի երգ» և «Իմ ճակատագիրը»։ Նա այդտեղ հանգստանում էր օրական 6 ժամ, իսկ մնացած ժամանակ գնում, այրութէն էր սովորցնում Բիերի ուսումնարանում։ Վերջապէս այդ պատկառելի ծերունին վախճանուեց 81 տարեկան հասակում այն տիրութիւնից, որ պատճառեց

նրան Բիերի գրութիւնները։ Բիերն այդ գրուածներում յարձակումէր նրա բնաւորութեան, կրօնական զգացմանց և մանկավարժական եղանակի վրայ։

Այս աշխարհում այդ եղաւ նրա վարձատրութրւնն այն անսպառ և անձնուրաց աշխատութեան համար, որ նա կատարեց յօգուտ մարդկութեան բարօրութեան։

Խորհուրդ ենք տալիս կարդալ Պէստալոյցու կենսագրութիւնը, որ նկարագրում է նրա մանկավարժական գործունէութիւնը, նրա կրօնական և բարոյական նուրբ զգացմունքները և այն ժամանակի կը տեսնէք, որ նրան կարելի է համարել կատարեալ մարդու մի գեղեցիկ տիպար։

ՀԱՅՐ ԳՐԵԳՈՐ ՖԻՐԱՐԸ ՃՆՈՒԵց ԶՈՒՒցարիայի ՖՐԷՋ-ՔՈՒՐԳ քաղաքում 17 գեկտ. 1765 թ.։ Սկզբնական կը թութիւնն ստացաւ հայրական տանը, և այն յիշողութիւնները, որոնք տպաւորուել էին նրա մէջ իր հօր տան՝ շատ վառ էին մնացել նրա սրտում։ Կասկած չը կայ, որ այդ յիշողութիւնները ներգործած կը լինէին նրա գաղափարների վրայ։ Կրթութիւնը նրա համար միայն մէկ նպատակ ունէր, այն է՝ երեխային գիտակցաբար բարձրացնել և հասցնել մայրական բնազդմանը։ Նատ քիչ մարդիկ կան, որոնք հասկացած լինէին այն կարեւոր գերը, որ Աստուած նշանակել է գերդաստանի համար։ Նա ասումէր, որ հաւատը կապուած է գերհամատանի հետ, որովհետեւ յայտնումէ որպէս որդիական զգացմունք և բարձրացնումէ գէպի երկնային հայկան Պէտք է մտաբերել, որ այդպէս էր կարծում նաև Պէստալոյցին։

Փիրաբը երբէք չէր կարողանում բաւականանալ նոր գիտութիւններ ձեռք բերելով, նա միշտ կարեւոր էր հագիտութիւններ ձեռք բերելով, նա միշտ կարեւոր էր հա-

մարում մտախոհութիւն, սեպհականութիւն դարձնել այն բոլորը՝ ինչ տալիս են գիտութիւնները և զնութիւնը:

1804 թ. Ֆ. Ֆրէյբուրգի վարչութիւնը Հայր Ֆիրարին նշանակեց տեսուչ նախապատրաստական ուսումնարանի, որ սկզբում 40 աշակերտ ունէր: Հայր Ֆիրարի յաջող վարչութեամբ աշակերտների թիւը հասաւ 300—400-ի: Հայր Ֆիրարը օրիորդաց ուսումնարաններ էլ բանալ առւեց, որոնց մէջ աշակերտուհիների թիւը շուտով նոյնպէս 300—400-ի հասաւ:

1809 թ. Պէտական խնդրեց դաշնակցական աւագ ժողովից նշանակել մի յանձնաժողով իվէրգոնի ուսումնարանը քննութեան ենթարկելու: Հայր Ֆիրարը մասնակցումէր այդ յանձնաժողովին և հէնց ինքն էլ պէտք է զեկուցումը տար: Այդ հանգամանքը մեծ ներգործութիւն ունեցաւ Ֆիրարի մանկավարժական հայեցակէտի վրայ: Իվէրգոնում նա կարողացաւ ըմբռնել Պէտականութեամբ գաղափարները և մտախոհութիւնը, որ բացեց նրա առջև մի նոր հորիզոն: Հայր Ֆիրարը Ֆրէյբուրգ վերադառնալով գործադրեց Պէտականութեամբ ամենայն յաջողութեամբ: Կրթութիւնն ենթարկեց նա բանական կարգադրութեան քայլ առ քայլ հետեւելով խելքի զարգացմանը, որ Պէտականութեամբ գրել էր որպէս հիմք իր գաստիարակչական ձևի: Կրօնի գասատութիւնն սկսումէր Աստուծոյ յայտնութիւններով և յետոյ աւելի լրացնում ու վերջապէս տալիս էր հասակաւոր աշակերտին կարեւոր բացատրութիւններ: Նոյնը կատարւում էր թուաբանութեան վերաբերութեամբ: չորս գործողութիւնը սովորյնում էին միևնոյն թուերով, յետոյ նոյնը աւելի մեծ թուերով, և վերջապէս միևնոյնը՝ կատա-

րումէին զանազան թուերով: Լեզուն ուսանելու համար հէնց առաջին դասում սկսումէին երեխայի ուշադրութիւնը բեւեռել մէկ նախադասութեան վրայ, որ արտայայտուէր մի ամբողջ միտք և յետոյ կարելի էր լինում տեսնել թէ ինչպէս մարդկային խորհումները հետզհետէ բարդւում են, որի ամբողջ կազմակերպութիւնները, հէնց սկզբից որոշած և նախագուշակած էին: Հայր Ֆիրարի ուսումնարանում, համաձայն Պէտական օցցու տուած ծրագրին, գասատութիւնն աստիճանաբար կարգադրուեց և բայցի այդ՝ Ֆիրարի առաջնորդութեամբ այդ ուսումնարանն ունեցաւ գործնական և բարոյական կառավարիչ: Թուաբանական խնդիրները վերաբերումէին կեանքի պահանջներին և ծանօթացնում էին տնային տնտեսութեան հետ: Պատմութեան գասերից եզրակացնում էին բարոյական հիմունք, աշխարհագրութիւն դաս տալիս զարգացնումէին ողորմածութեան, բարեգործութեան զգացմունքը գէպի մարդկային սերունդը և բացատրումէին քրիստոնէութեան շնորհն, օգուտը: Բնագիտութիւնն ուսուցանելիս կենդանի կերպով ցոյց էին տալիս, ապացուցանում էին Աստուծոյ իմաստութիւնը և մեծութիւնը: Լեզուն, որպէս մեր մտքերի և զգացմանց արտայայտիչ՝ պէտք է ենթարկուէր ընդհանուր, ներգաշնակ զարգացման և լինէր ամենաազգութիւնը, որով պէտք է ներմուծուէր երեխայի խելքի մէջ բարի և օգտաւէտ գաղափարներ, զգացմունք և բարոյական ու կրօնական գաղափարներ:

Հայր Ֆիրարը ցանկանալով մարզել երեխայի խելքը, կամենում էր մատակարարել նրան օգտաւէտ գիտութիւններ և տալ երեխայի մոածելու եղանակին, զգացմունքին, կամքին լաւ ուղղութիւնն: Այս տեղից հետեւ

ւումեն նրա հետեւեալ խօսքերը, որոնք վերնագիր դարձան նրա մանկավարժական գրուածքի և որոնք նրա մանկավարժական գաղափարներն են ամփոփում։ «Խօսքերը մոքի համար են, իսկ մոքերը սրտի և կեանքի համար»։ Մանկավարժութեան մէջ իւրաքանչիւր խօսքը պէտք է հասկացուի և իւրաքանչիւր գաղափար պէտք է յարմարեցրած լինի կեանքի զանազան պահանջներին։

Հայր Ժիրարն իր պատուական աշխատասիրութեան մէջ, որի վերնագիրն է «Մանկավարժական գաղափարներ մայրենի լեզուի մասին», ընդունումէ որպէս սկզբակէտ մայրական բնագդումը, և որովհետեւ այդ մի բնական զգացմունք է, այդ պատճառով էլ արժանի է մեր ամբողջ ուշադրութեանը։ Երեխային խօսել սովորցնելիս՝ մայրը ցոյց է տալիս առարկաներ և նրանց անունը տալիս է, նա երբէք չի ծռմուռմ խօսքերն։ Այդ խօսքերը երեխային միշտ մի բան են սովորեցնում։ Մայրը չի սովորեցնում նրան այդ խօսքերի արտասանութիւնն, այլ ցանկանումէ միայն մը բան սովորեցնել, նա կանգչի առնում լեզուի տարրերի վրայ, նա աշխատումէ միայն սովորցնել։ Բարեպաշտ և քրիստոնեայ մայրը կըրթումէ իր զաւակն այնպէս, որ նա լինի բարի, առարինի, աստուածապաշտ։ Ահա գրանք են մայրական կրթութեան և սիրոյ գլխաւոր և իսկական դրօշմը։ Հայր Ժիրարն օգտումէ այդ բնական տուրքից և իր Մանկավարժական գաղափարներում՝ բացատրումէ այդ բնագդումը, որ յարմարեցրած պէտք է լինի երեխայի բոլոր պիտոյքների համար։

Ահա թէ Հայր Ժիրարն ինչպէս է կազմակերպում իր յօրինակարգը (սիստէմ) «Կամքը կրթելու ուղիղ ձանապարհը միշտ բաց չէ, ուրեմն մի ուրիշ ձանապարհ էլ

պէտք է գտնել»։ Հոգեբանութիւնը դրա վերաբերութեամբ առաջարկումէ մեզ հետեւեալ մի նշանաւոր գործնական սկզբունքը (մաքսիմ), այն է՝ մարդս գործումէ ինչպէս նրան հաճելի է և ինչպէս նա ճառագում է։ Այս երեք խօսքը յայտնումեն մեզ այն գաղափարը, որ մեզ համար կարեւոր է կանոնաւորելու այն աշխատանքը, որ մենք սկսելու ենք։ Յանկանումէ էք իմանալ թէ ի՞նչ պէտք է անէք, որ երեխան աստուածապաշտ, բարի և ազնիւ լինի, ներշնչեցէք նրան մաքուր, բարեսէք, ազնիւ ձգտումներ, որովհետեւ մարդ ձգտումէ այն բանին, որ նրան հաճելի է։ Ի՞նչպէս պէտք է ներշնչել նրանց այս ձգտումները։ Ծանօթացրէք աշակերտներին այդ գաղափարների հետ, բացատրեցէք օրինակներով դրանց կարեւորութիւնը և օգուտը կեանքի համար։ Գաղափարները և վարքը մտածողութեան արդիւնքն են, այս մի օրէնք է։ Սակայն այս օրէնքը բացատրութեանց է կարօտ, որովհետեւ աղատութիւնը չի կարելի կաշկանդել, այլ միայն պէտք է նրան ուղղութիւն տալ։ Ուղղութիւն տալու աշխատանքն երբէք չի լինի բոլորովին անյաջող, արդիւնքը չի լինի անվրէպ (անսխալ)։ Այդ լաւ միջոց է, որ պէտք է գնահատենք։

Մարդիկ միշտ պէտք է յուսան Աստուծոյ ողորմութեան վրայ, որովհետեւ Նա միայն կարող է զօրացնել մարդուս կամքը բարեգործութեան համար։

ՆԱՎԻԼ 1784—1846. Հայր Ժիրարի գրուածքները կարող են համարուել Նաւիլի մանկավարժութեան ամենալաւ յառաջաբան։ Նաւիլը, որ Վ.Էրնիկում գտնուած ուսումնարանի տեսուչն էր, մի նոր ուղղութեամբ ուսումնարան չէր հիմնել, այլ շարունակումէր Ժիրարի ուղղութեամբ, որի մանկավարժական գաղափարներն ըն-

գունել էր։ Այդ ուսումնարանում, որ նշանակուած էր 17—18 տարեկան երիտասարդների համար, մայրենի լեզուն սովորցնումէին Հայր Ժիրարի ձեռվ ու նրա անտիպ տետրակներով, միայն թէ փոքր ինչ փոփոխած, որովհետեւ նրանք աւելի մեծ աշակերտների համար էին նշանակուած։ Լեզուին վերաբերեալ դասաւութիւնն ընթանումէր մեծ յառաջադիմութեամբ։ Այդ տեղ դաս էին տալիս օգտաւէտ գիտութիւններ, զարգացնումէին աշակերտների բոլոր ընդունակութիւնները և ներշնչում էին երիտասարդներին բարոյական և կրօնական ուղղութիւն, որոնց յարակցեցին լատիներէն, յունարէն, գերմաներէն, անգլիերէն, իտալերէն լեզուները, թուաբանութիւնը, բնագիտութիւնը, աշխարհագրութիւնը, պատմութիւնը, կրօնը և բարոյագիտութիւնը որքան կարելի էր։ Եթէ այդ բոլորի վրայ աւելացնենք հայրական կանոնաւոր խնամքը, գերդաստանական կեանքը, մարզութիւններն ազատ օգումմարմինն ամրացնելու համար, կունենանք նավիլի ուսումնարանի բաւականին ճիշտ պատկերը։ Նավիլը ոչ միայն կազմակերպեց այդպիսի մի օրինակելի ուսումնարան, այլ և ներկայացրեց զանազան գրուածքներ։

ՓՐԵՕԲԵԼ

Առաջուստ — Վիլհելմ — Ֆրիդրիխ Ֆրէօբէլը, մանկական պարտիզի ստեղծողը, ծնուեց 21 ապրիլի 1782 թ։ Ծնողների անհոգութեան պատճառով սկզբում նա ընկաւ վատ հասարակութեան մէջ։ Նրա երկու եղբայրները, որոնք նրանից մեծ էին, սկսեցին հոգալ նրա մասին։ Յետոյ նրա քեռի Հօֆմանը, որ Իլմ քաղաքում պատօր էր՝ պարտաւորուեց կրթել նրան։ Հօֆմանը մի

ողորմած և մեղմ բնաւորութեան տէր մարդ էր։ Նա Ֆրէօբէլի հետ բարեսրտութեամբ էր վարւում և երեխան իրեն ամեն տեսակ բռնութիւնից ազատ զգալով՝ որ առաջ գործադրումէին իր վրայ, սովորումէր քաղաքային ուսումնարանում թուաբանութիւն, աշխարհագրութիւն և փոքր ինչ էլ լատիներէն լեզու։

Նա առանձին ձգտումն չ'ունէր դէպի ուսումն, այդպատճառով էլ նրան տուին մի անտառապետի մօտ անտառատածութիւն և երկրաչափութիւն սովորելու։ Ազատ միջոցին նա կարդումէր բուսաբանութեան և երկրաչափութեան վերաբերեալ գրքեր, բոյսեր էր ժողովում զբօնսւմէր անտառներում։ Նա շատ էր սիրում բնութիւնը, բայց և ասումէր, որ այն ժամանակ նա գեռչէր հասկացել բուսականութեան ներքին կեանքը։ Երկու տարի անտառապետի մօտ մնալուց յետոյ, ցանկանալով ուսումնը շարունակել, մտաւ Ենայի համալսարանը, ուր մնաց նա մի տարի և կէս, լսեց մաթեմաթիքայի, հանքարանութեան, ֆիզիքայի, քիմիայի, վարչկան իրաւաբանութեան, անտառատածութեան և ճարտարապետութեան դասախոսութիւնները։ Նրա նիւթական միջոցները շուտով սպառուեցին և չը կարողանալով շարունակել իր ուսումնը համալսարանում։ Վերադաշտ Օբէրվէյսբախ, ուր նրա հայրը շուտով վախճանուեց։ Այդ ժամանակ նա գեռ չէր հետաքրքրում մանկավարժութեամբ։ Նա մտածում էր վարչական կառավարութեան մէջ ծառայել։ Պարապմունք չը գտնելով, նա գնաց Ֆրանկֆուրտ և մտաւ մի ճարտարապետի մօտ։ Կարձ միջոցից յետոյ նրա բարեկամներից մէկը ծանօթացրեց նրան Գրիւնէր մանկավարժի հետ, որ կառավարում էր մի նորաձև ուսումնարան, ուր Պէտալօցցու եղանակով

(մէտօդ) էին սովորցնում։ Գրիւներին մի ուսուցիչ էր հարկաւոր, նա այդ տեղն առաջարկեց ֆրէօբէլին, որ փոքր ինչ տատանուելուց յետոյ՝ ընդունեց Գրիւնէրի այդ առաջարկութիւնը։ Այդ պատահեց 1805 թ. Ապրիլին։ Մի քանի օրից յետոյ նա իր եղբայր Քրիստօֆին գրեց հետեւեալը, «զարմանալի է, թէ որքան իմ այժմեան գործն ինձ հաճելի է, հէնց առաջին դասի ժամանակ ինձ թւում էր, թէ միշտ այս գործով եմ զբազուած եղել և կարծես թէ սրա համար եմ ստեղծուել, չը գիտեմ թէ ինչպէս բացատրեմ այն բոլորը, որ կատարւում էր իմ մէջ։ Չեմ կարող երեւակայել, որ ես մտածած լինեմ մի ուրիշ գործով պարապելու, բայց պէտք է տաեմ, որ չէի մտածել, որ ես կարող եմ ուսուցիչ դասնալ։ Քանի որ դաս եմ տալիս՝ ես ինձ զգում եմ ինձ համար նախասահմանուած վիճակի մէջ։

Երբ Գրիւնէրը ֆրէօբէլին պատմեց Պէստալոցցու մասին, նրանում ծագեց մեծ ցանկութիւն տեսնել այդ մեծ մանկավարժին գործի մէջ, աշակերտներով շրջապատուած։ Հենց որ ամառուան դասերը վերջացան՝ նա ուսուվ գնաց Իվերդօն։ Վերադառնալուց յետոյ նա աւելի աշխայժով էր պարապում աշակերտների հետ և աշխատում էր գործադրել Պէստալոցցու մանկավարժական եղանակը։ Տարուայ վերջին քննութեան ժամանակ նրա աշակերտներն այնպէս յաջող քննութիւն տուին, որ Գրիւնէրը շնորհաւորեց նրան։ Ֆրանկֆուրտ գալուց փոքր ինչ յետոյ նա յանձն առաւ գերմաներէն լեզուի և թուաքանութեան մասնաւոր դասեր տալ մեծատուն Զօլցհառուգէնի երեք որդուն։ Դուրս գալով Գրիւնէրի ուսումնարանից՝ մտաւ այդ պարոնի գերդաստանը որպէս տնային ուսուցիչ և շուտով Զօլցհառուգէնից համաձայնութիւն

ստացաւ. իր այդ երեք աշակերտների հետ Իվերդօն գնալու։ Այդ երիտասարդները պէտք է ուսանէին Պէստալոցցու մօտ։ Ֆրէօբէլը յաճախելով այդ նշանաւոր մանկավարժի ուսումնարանը՝ սովորեց նրանից այն՝ ինչ որ պակասումէր նրան։ Ֆրէօբէլն իր աշակերտների հետ 2 տարի մնաց Իվերդօնում։

Իր կենսագրութեան մէջ, որ նա գրեց 1827 թ. հաստատումէ, թէ նա ներքին միութիւն չը գտաւ Պէստալոցցու ուսումնարանում և նրա աշխատակիցների մէջ, բայց և աւելացնումէ, թէ այն ժամանակը, որ նա անցրեց Իվերդօնում՝ վճռական էր նրա կեանքի համար։

Նա նորից ցանկացաւ համալսարան մտնել։ Երբ ֆրանկֆուրտ վերագարձաւ (1810 թ.), մտածումէր դուրս գալ Զօլցհառուգէնի տնից, որ գնայ Գէօտինգէն, բայց ստիպուած էր էլի մէկ տարի շարունակել իր ուսուցչութիւնը։ Մանկավարժութեան և կրթութեան վերաբերեալ այն թերի գիտութիւնը, որ ես ունէի, ասում է ֆրէօբէլը, այն աստիճան չնշին էին թւում ինձ, որ ես ինձ երջանիկ էի համարում, երբ կարողացայ թողնել իմ ուսուցչական պաշտօնը։

1811 թ. յունիսի սկզբում ֆրէօբէլը մտաւ Գէօտինգէնի համալսարանը։

1811 թ. ամառը յայտնուեց այն գիսաւոր մեծ աստղը, որ գրաւեց ֆրէօբէլի ուշագրութիւնը և ստիպեց նրան պարապել աստեղաբաշխութեամբ, որպիսի ուսումնասիրութիւնը յղացրեց նրա մէջ այն գաղափարը, որ նա անուանումէ գնուպիչն օրէնտ (la loi sphérique) և որ նշակումէ կլորութեան, ամբողջութեան, կատարելութեան, միութեան, միաձեռութեան օրէնք։ Այդ օրէնքը նա ընդունեց որպէս ընդհանուր ֆիզիքական և բարոյական

օրէնք։ Այդ բոպէից սկսած հաստատուեց նրանում; որ տիեզերքն ունի միութեան ընդհանուր (unité universelle) գործարանաւոր կապ, որ միացնումէ բոլոր իրերը և ենթարկումէ ամեն ինչ մի օրէնքի։ Նա համոզուեց, որ գունդն է (sphere) սկզնական միութեան տիպարը, խորհրդաւոր նշանը (symbole), որով արտայայտումէ այդ աստուածային օրէնքը։ Նա ասումէ, թէ սկզբում բոլոր երկնային մարմինները կազմել են մէկ տիեզերական գունդ։ որ բաժանուել է զանազան մասերի և այդ մասերը կըրկին զանազան մեծութեան գնդերի ձեւ են ստացել։ Այդ գնդերի ձեւերիցն էլ հետեւումէ, որ դրանք միասին առաջ մի գունդ են կազմել։

Գունդն ընդհանուր ձեն է, տիեզերքի մասերի ձեն է. անհատական ձեն է, այսինքն տիեզերքի ընդհանուր, անհատական ձեն է։ Ամեն մի գունդ ներկայացնումէ կատարելութիւն, ամբողջութիւն, իսկ որպէս ընդհանութեան (տիեզերքի) մասն՝ կազմումէ թերութիւն, անկատարութիւն։ Որպէս զի մի մարմին կազմակերպի իր գնդական ձեր, նա պէտք է ինքը ձգտի արտայայտելու իր գոյութիւնն իր մէջ և ինքը պէտք է ձգտի դէպի միութիւնն, անհատականութիւնն, այլակերպութիւնը (ձեւափոխութիւնը)։

Ամեն մի էակ ինքն է ձգտում այդ երեք առանձնայտկութեանցը, որոնցով նա ինքն իրեն որոշում է և դառնումէ ճշմարտին գիւրընկալ։

Հէնց գրանցով է գունդը համում իր նպատակին, իր բարձր գիրքին (նշանակութեանը)։ որպէս ընդհանութեան մի գործարանաւոր մասնիկ։

Մարդկութեան հասարակ առաւելութիւնը հէնց նրանում պէտք է լինի, որ նա աշխատի մշակել, զարգա-

ցնել, ձեւակերպել, կատարելագործել, ամբողջացնել ամենից առաջ իրեն յատուկ գնդական բնաւորութիւնը (իր առանձնական բնաւորութիւնը), իր գնդական (ընդհանուր) էութիւնը և յետոյ որպէս մարդկութեան մի մասնիկ՝ կատարելագործել իր առանձնայատկութիւնն, անհատականութիւնը, որ նա ինքն իրեն որոշի, ձեւակերպի իրեն յատուկ բնաւորութիւնը, իրենից ձեւացնի մի ամբողջութիւն, կատարելութիւն, աստեղաբաշխական լեզուով խօսելով կարելի է ասել, ձեւացնի իրենից կլորութիւն, ամբողջութիւն, կատարելութիւն, միութիւն։

Աշխատել զարգացնելու մի էակի գնդական բնաւորութիւնը՝ կը նշանակէ կրթել այդ էակին։

Գնդական օրէնքն ամբողջովին, իսկական կրթութեան հիմնական օրէնքն է։

Ֆրէօբէլի խորհրդաւոր գաղափարները գնդական օրէնքի վերաբերութեամբ՝ կազմում են նրա մանկավարժական ուսումն հիմքը, որ ինքնուրոյն և անձնական է։

Բէրլինի հանքաբանական թանգարանում որպէս պրօֆէսօրի օգնական ժամերով շարունակ աշխատելով և բիւրեղների ձեւերը ուսումնասիրելով, ֆրէօբէլը մոածումէր բիւրեղների վրայ իշխած օրէնքների մասին։

Մենք տեսանք, թէ որքան նա անհեթեթ, անսովոր կերպով որոշեց գնդի յատկութիւնները և ընդունեց երկրաչափական ձեւերի նշանաբանական (symbolique) գաղափարները, և ինչպէս և միշտ աշխատում էր բոլորը վերածել, վերագրել մի բարձրագոյն միութեան, որ պէտք է կազմէր սկզբնակէտն ու վերջնակէտն երկրորդական ձեւերի։

Բէրլինում նա նորից, բայց հաստատապէս վճռեց նուիրել իրեն մանկավարժական գործին։ Այդ միջոցին, երերել

ւի 1816 թ. ամառը հրաւիրեցին նրան Ստօքհօլմ՝ որպէս հանքաբանութեան պրօֆէսօր, բայց նա հրաժարուեց այդ պաշտօնից։

Ֆրէօբէլի եղբայր Քրիստօֆը, որ երիտասարդ ժամանակ նրա պաշտպանն ու առաջնորդն էր, վախճանուել էր 1813 թ. թողնելով իր այրին և Յորդի։ Ֆրէօբէլը վճռեց յանձնառնել այդ երեխաների կրթութիւնը և հիմնել Գրիգէնհէյմում մի ուսումնարան, որտեղ դրանք լինելու էին առաջին աշակերտները։ Միւս եղբօր երկու որդիքն էլ յանձնեցին նրան կրթելու և 13 նոյեմբ. 1816 թ. Ֆրէօբէլը բացեց իր ուսումնարանն՝ ընդհանուր գերմանական կրթութիւն տալու համար։ Նա հրաւիրեց Բէրլինից իր երկու բարեկամներին — Լանգէտալին և Միդդէնդրօֆին որպէս օգնականներ, որոնք երբեմն նրա աշակերտներն էին եղած։ Կարճ միջոցից յետոյ այդ ուսումնարանը Գրիգէնհէյմից տեղափոխեցին Քէյլհառու։ Այդ ժամանակ նրա աշակերտների թիւը 12 էր։

Կրօնական ուսմունքն առաջին տեղն էին բռնում այդ ուսումնարանի ծրագրում։ Ֆրէօբէլն ասումէր. որպէս զի կրթութիւնը պտղաբեր լինի, պէտք է յենուած լինի կրօնի վրայ, «Աստուած է սկիզբն ու զեկավարը բոլոր տիեզերքի։ Աստուած է ստեղծել ամեն ինչ՝ որ տեսնում ենք»։

Կրթութիւնն ընդհանրապէս կատարւում էր Պէստալոցու եղանակով։ Բայց Ֆրէօբէլն ու նրա աշխատակիցները մտադիր չէին մատակարարել աշակերտներին որոշ դրական գիտութիւն, այլ միայն գրդել նրանց գործունէութեան, առաջացնել նրանցում նախաձեռնութիւն (ինիցիատիվ) և ընդունակութիւնների ազատ արտայատումն։ Ֆրէօբէլը կարծումէր, որ եթէ աշակերտները

կանոնաւոր աշխատանքի սովորեն, լրիւ կատարեն ամեն մի գործ՝ նրանք վերջացնելով իրենց ուսումը Քէյլհառուի ուսումնարանում՝ չեն ունենայ սիստեմատիքաբար սովորած գիտութիւն, բայց կեանքի համար պիտանի կը լինեն։

Լանգէտալը և Միդդէնդրօֆը սկզբում Ֆրէօբէլի առաջնորդութեամբ ուսումնասիրեցին մանկավարժական եղանակները։

1826 թ. Ֆրէօբէլը հրատարակեց «Մարդու կրթութիւնը»։ Դժուար է համառօտ բացատրել այդ գոքի մէջ բովանդակած վարդապետութիւնը։ Դա մի այնպիսի գիրք է, որ դժուար է քննութեան ենթարկել։ Ֆրէօբէլի յարգողները համաձայնում են, որ այդ գրքում չի յայտնուած մի որոշ սիստեմ, մի բովանդակ վարդապետութիւն, ասում են, որ դա աւելի անկապ գաղափարների մի հաւաքածու է։ Մեզ թւում է, որ կարելի է այդ գրքում զետեղուած գլխաւոր գաղափարները ձեակերպել հետևեալ կերպով։ Երեք գործիչ տարրեր (facteur) պէտք է զարգացմանը նպաստեն, այն է՝ կրօնը, բնական գիտութիւնները և լեզուն, որ միացնում է այդ երեք մասերը, որոնք նշանակում են 1, Աստուած, 2, բնութիւն, 3, մարդ։

Մարդուն ստեղծել է Աստուած, նա կայ Աստուածոյ համար և Աստուածոյ շնորհովն է ապրում։ այդ պատճառով էլ պէտք է ձգտի բարձրանալու մինչև Քրիստոսին գաւանելու աստիճանը։ «Ուսումնարանն, ասում է նա, ամենից առաջ պէտք է տայ քրիստոնէական կրթութիւն»։ Բնական գիտութիւնների վերաբերութեամբ Ֆրէօբէլը խորհուրդ է տալիս ուսուցիչներին, ծնողներին, որ այդ գիտութիւնները, սովորցնեն ոչ թէ գրքերով, այլ բնու-

Թիւնը գործնական կերպով զննելով—ցուցական ձեռվէ:
Նա ասումէ. «Արա այնպէս ինչպէս երեխան է անում:
Երբ նա մի բան չը գիտէ՝ հօրը կամ մօրն է հարցնում:
Դու էլ տեղեկութիւնները ժողովիր մայր բնութիւնից
և Հայր Աստուծուց՝ բնութեան մէջ։ Ուղղապէս դիմիր
դէպի այն աղքիւրը, որից ամեն ինչ բղխումէ»։

Ահա թէ նա ինչ է ասում իր երրորդ ենթադրութեան
(գաղափարի) մասին, որ մարդուն է վերաբերում։ «Կրօ-
նը յայտնում է էութեան մասին, բնութիւնն՝ ոյժի և
գործողութեան մասին, իսկ մարդկային լեզուն խօսում
է մարդու մասին՝ ինչպէս որ նա է՝ իսկապէս»։

Ֆրէօբէլը Քէյլառուի ուսումնարանը յանձնեց Լանգէ-
տալին և Միդգէնդօրֆին, որովհետև մտադիր էր մի
նոր ուսումնարան բանալու։ Ֆրէօբէլն իր խօսակցու-
թեանց ժամանակ կրառուզէ փիլիսօփայի հետ։ Տանօթա-
ցել էր Կօմէնիուսի գաղափարների հետ և նրանումցան-
կութիւն էր յղացել մասնագիտաբար պարապել փոքր
երեխաների կրթութեամբ։ Հենց այդ ժամանակ Ֆրէօբէ-
լը սկսեց զբաղուել կրթութեան այդ մասով, որի հետ
անբաժան է մնալու նրա անունը։ Նա ամեն միջոց գործ-
դրեց այդ միտքը գործնականապէս իրագործելու։ Մի
օր զբունելիս նա տեսաւ, որ երեխաները թօփ են խա-
զում, այդ բոպէին նրանում մի միտք յղացաւ—երեխան
առաջին անգամ յայտնումէ իր գործունէութիւնը խա-
զով. թօփը որ գնդաձեւ է՝ միութեան խորհրդական նը-
շանն է, պէտք է որ նա լինի երեխայի առաջին խաղա-
լիկը։

Գնդակից (թօփից) երեխան կանցնի դէպի խորանար-
դը, որ առաջին խորհրդական նշան է միութեան ձեռ-
փոխութեան մէջ։ Այդտեղ Ֆրէօբէլը որոշեց կրթութեան

մասնաւոր միջոցներն, այն է՝ ընծաները (les dons), պա-
րապմանց կերպը և խաղալիկը։

Ուստի այն հասակում, երբ հարկաւոր է հսկել երե-
խայի առաջին տպաւորութեանց վրայ՝ կարելի է նրան
տալ խաղալիկի մի ամբողջ հաւաքածու։ որ աստիճանա-
բար դասաւորուած լինէր, որ նա կարողանայ իր դեռ
անգիտակցաբար և չը գործադրուած ընդունակութիւն-
ները գարձնել բնական օրէնքների վրայ, որոնք կառա-
վարումեն տիեզերքը և այդ կերպով ծանօթացնել նրան
Աստուածային օրէնքների հետ, որոնք հիմքն են ամեն բա-
նի, որոնք նրա (երեխայի) գոյութիւնն են հաստատում։

Ֆրէօբէլի այս գաղափարը կազմում է նրա մի նոր
սկզբնակէտը և նրա գործունէութեան վերջին շրջանը։

Սկսած 1835 թ. Ֆրէօբէլը հաստատեց վերոյիշեալ հի-
մունքը. որի վրա նա պէտք է հիմնէր իր յօրինած ման-
կական կրթութեան եղանակը։

Ֆրէօբէլն իր բնակութիւնը հաստատեց Բլանքէնբուր-
գում, որ հիմնէ իր մտածած ձեի ուսումնարանը և որ-
պէս զի իր մանկավարժական գաղափարները տարած-
ուեն՝ սկսեց հրատարակել մի շաբաթաթերթ՝ հետեւեալ
վերնագրով.—«Եկէք, ապրենք մեր երեխաների համար»։

Բլանքէնբուրգում Ֆրէօբէլի ուսումնարանը սկզբում
անուանւումէր. «փոքր երեխաների ուսումնարան», ինչ-
պէս սովորաբար անուանումէին ըոլոր այդ տեսակ ու-
սումնարանները։ Բայց Ֆրէօբէլը ցանկանումէր իր ձեի
ուսումնարանին մի առանձին անուն տալ։ Նա երկար
ժամանակ որոնումէր մի այնպիսի անուն, որ համապա-
տասխանէր նրա գաղափարին։ Մի օր Մէդգէնդօրֆի և
մի այլ բարեկամի հետ գնումէր նա Քէյլհառուից դէպի
Բլանքէնբուրգ և իշնելով մի նեղ ճանապարհով, որ տե-

զից յանկարծ երևումէր գեղեցիկ ձորում զետեղուած Բլանքէնբուրգը, նա, որ քայլում էր մոտածմունքի մէջ խորասուզուած՝ յանկարծ կանգնեց, նրա երեսը մի առանձին փայլ ստացաւ ու բարձրաձայն գոչեց—«գտայ»:

Այս ասացուածքը, ի հարկ է, այլաբանական մոքով պէտք է հասկացուէր:

Այն ժամանակ, երբ Բլանքէնբուրգի ուսումնարանը մեծ տոկունութեամբ մաքառում էր ամեն տեսակ դըժուարութիւնների դէմ, լոյս տեսաւ Ֆրէօբէլի ամենաժողովրդական շարադրութիւնը, «Մօր երգերը»:

Այդ միջոցին Ֆրէօբէլը գուշակում էր մի նոր գաղափար, այն է՝ «Հակադրութիւննաց հաղաւանիւնը». որ հէգէլեան տրամաբանութիւնը արտայայում է հետեւեալ խօսք երով.—յառաջադրութիւն (these) (գնդակ), հակառակադրութիւն (հակապատկեր) (antithese) (խորանարդ), համադրութիւն (synthesis) (հաշտեցուցիչ) (գլան): Հակառակորդների, (այն է գնդի և խորանարդի ձեւերի) հաշտութիւնը կարեւոր էր Ֆրէօբէլին, որպէս իր փիլիսոփայութեան լրացուցիչ մասն: Որպէս զի այս գործնական օրէնքին կարելի լինէր տալ մի շօշափելի տեսական արտայայտութիւն՝ նա խորանարդի և գնդի (երկրորդ ընծայ) *) վրայ աւելացրեց հաշտեցուցիչ գլանը, որ միացնումէ իր մէջ գնդակի և խորանարդի բնաւորսւթիւնները և ինքը կազմում է այդ երկուսի մէջ համագրութիւն, այսինքն ներկայացնումէ վերոյիշեալ երկու (գընդակ և խորանարդ) առաջին մարմինների միաւորութիւնը:

*) Ընծաների մասին յետոյ առանձին կը խօսենք:

Ինչպէս վերեւը յիշած է՝ երկրորդ ընծան (le don) կազմում են գունդը, գլանը և խորանարդը: Պէտք է ցոյց տալ այն կապը, որ կայ թէ այդ երեք առարկաների մէջ և թէ այն կապը, որ կայ գնդի և թօփի մէջ: Հասկանալի է թէ ի՞նչ կապ կայ այս վերջին երկու խազալիկների մէջ: Երբ գունդը թօփի մեծութեան է՝ այն ժամանակ դրանց հաւասարութիւնը, նմանութիւնը այնքան մեծ է, որ դրանք շատ մօտ են միմիանց: Գնդի հետ բոլորովին հաւասար լինելու համար թօփին հարկաւոր են երկրորդական որպիսութիւններ, զորօր. խիստ հարթութիւն, ծանրութիւն, խփուելուց ձայն արձակելը, կարծրութիւն, իսկ գոյն տալը ցանկութեան գործ է: Գունդը պարունակում է թօփի բոլոր որպիսութիւնները, միայն կարծրութիւնն է աւելանում վրան: Այն իրերը, որոնք մի առարկայի հետ ընդհանուր որպիսութիւններ ունեն և ունեն նաև այնպիսի որպիսութիւններ, որոնք ընդհանուր չեն, զորօր. գունդը և թօփը, Ֆրէօբէլն անուանում է հակադիր—հաւասար առարկաներ (Entgegengesetzt—gleiche): Ում որ խորթ թուի այս գաղափուածքը, նա պէտք է մոտաբերէ այն կրթական օգարձուածքը, որ ասումէ, թէ՝ յայտնիէ հետ կյէր անյայտն, այսինքն ըէնքը, որ ասումէ, թէ՝ յայտնիէ հետ կյէր անյայտն, այսինքն յայտնից անցիր գէպի անյայտը՝ գտնելով դրանց մէջ յայտնից անցիր գէպի անյայտը՝ գտնելով դրանց մէջ կապ, որ թոյլ է տալիս անյայտը հետեւյնել յայտնի կապ, որ թոյլ է տալիս անյայտը հակադիր—հաւասար է գնդին, ունիից: Գլանը նոյնպէս հակադիր—հաւասար է գնդին, որպիշետեւ ունի գնդի նման կոր մակերեսոյթ և կարող է գլորուել: Այդ որպիսութեան հետ միասին գլանն ունի գլորուել: Այդ որպիսութեան հետ միասին գլանն ունի գլորուել: Պէտք գնդի որպիսութիւններ, որոնք գնդի որպիսութիւններից տարբեր են և երեխայի հասկացուղութեանը, երեացից տարբեր են և երեխայի հասկացուղութեանը, երեա-

կու կլոր, շրջանաձև եղերք։ Եթէ գլանը դնենք իր մի հարթ մակերեսոյթներից մէկի վրայ՝ նա անշարժ կը մը-նայ։ Այստեղ յայտնին (կոր մակերեսոյթ) կցուած է ան-յայտի (հարթ մակերեսոյթ) հետ։ Եթէ քննենք խորանար-դը՝ կը տեսնենք, որ դա որոշ մտքով նմանում է գլա-նին, այսինքն ունի մակերեսոյթներ և եղերք։ Բայց խո-րանարդն ունի 6 հաւասար հարթ մակերեսոյթ, 12 ուղիղ կողեր, 8 անկիւն, որոնք (ընծաների ընթացքին նայելով) երեխայի համար գեռ նորութիւններ են։ Ֆրէօբէլի ե-ղանակն այնպէս է կարգաւորուած, որ յայտնիին հե-տեսումէ անյայտն, այն է՝ վերոյիշեալ երկրաչափական արդուածները դրուած են հետեւեալ կարգով՝ թօփը, գունդը, գլանը, խորանարդը։ Աւելորդ չի լինիլ բացատ-րել, թէ ինչո՞ւ գունդը, գլանը և խորանարդը մէկ ըն-ձայի մէջ են զետեղուած։ Դրանք երեքն էլ դրուած են մէկ ընծայի մէջ այն պատճառով որ ուսուցչին կարելի լինի ցոյց տալ աշակերտին հակառակորդների հաշտու-թեան օրէնքը։ Գունդը և խորանարդը հակադիր են մի-մեանց և երեխայի համար էլ հակադիր կերեան։ Որպէս զի գունդը և խորանարդը հաշտուեն՝ պէտք էր դրանց մէջ գնել մի երրորդ առարկայ, որ կարողանար հաշտե-ցուցչի գերը կատարել և այդ հաշտեցուցիչը՝ գլանն է, որ ունի գնդի և խորանարդի որպիսութիւնները։ Այդ նոր մոքին նա մեծ նշանակութիւն էր տալիս և իրեն այդ մտքի ծնողն էր համարում։

Տիկին Մարէնհօլցը պատմում է, որ 1857 թ. ամառը՝ մի մարդ եկաւ ֆրէօբէլի մօտ բացատրութիւն խնդրե-լու նրա մանկավարժական եղանակի մասին։ Ֆրէօբէլը սկսեց բացատրել նրան իր վիլիսովիայական եղանակի հի-մունքը։ Բայց այդ ունկնդիրն ընդհատելով՝ ասեց նրան։

«Ես արդէն գիտեմ հակառակորդների հաշտութեան օ-րէնքը, որովհետեւ դրա մասին Հէգէլը խօսել է»։ Զը գիտեմ, պատասխանեց Ֆրէօբէլը, առանց շփոթուելու, թէ Հէգէլն ի՞նչ է ասել դրա մասին, ես երբէք ժամա-նակ չեմ ունեցել ուսումնասիրելու նրա վիլիսովիայու-թիւնը։ Այդ միտքը ինքնուրոյն կերպով յղացել է իմ մէջ։ Ֆրէօբէլի մահից յետոյ Միդդէնդօրֆը և տիկին Մա-րէնհօլցը ցանկանալով իրենց բարեկամի (Ֆրէօբէլի) գե-րեզմանի վրայ մի այնպիսի խորհրդաւոր արձան կանգ-նեցնել, որ ներկայացնէր նրա վիլիսովիայութեան հիմ-նական գաղափարը՝ համաձայնեցին դնել նրա գերեզմա-նի վրայ նրա երկրորդ ընծայի երկրաչափական երեք մար-մինները, այն է՝ խորանարդի վրայ խորհրդաւոր գլանը դնել, իսկ որա վրայ՝ գնդակը։

1844 թ. ֆրէօբէլը ստիպուած եղաւ փակել Բլանդէն-բուրգի ուսումնարանը նիւթական միջոցների պակասու-թեան պատճառով։ Նա վճռեց ձանապարհորդել ամբողջ Գերմանիայում և քարոզել իր մանկավարժական գաղա-փարների մասին, բայց Գերմանիայում լաւ ընդունելու-թիւն չը գտաւ։

Ֆրէօբէլը կրկին գնաց Քէյլհաու և երկու ձմեռ շա-րունակ գասախօսեց իր մանկավարժական եղանակի մա-սին այն կանանց համար, որոնք ցանկանում էին իրենց երեխաների կրկթութեանը նուիրել։

Տիկին Մարէնհօլցի միջնորդութեամբ, որ ֆրէօբէլի եռանդալից աշակերտուհիներից մէկն էր, ֆրէօբէլը ստա-ցաւ գուքս Սաքսէն—Մէյնինգէնից Մարիէնթալի փոք-րիկ ամրոցը իր տրամադրութեան ներքոյ, ուր և տեղա-ւորեց իր ուսումնարանը։

Քէպէտեւ ֆրէօբէլն արգէն 68 տարեկան էր, բայց

պահպանել էր իր մէջ երիտասարդական եռանդը և ուժախութեամբ ղեկավարում էր մանկական պարտէզի խաղերը։ Այդ միջոցին Գերմանիայի ամենայն կողմերից գալիս էին երիտասարդ կանայք նրա դասերը լսելու։ Տիկին Մարէնհօլցն իրեն ամբողջապէս նուիրել էր Ֆրէօբէլի նոր գաղափարը տարածելուն և նրան յաջողուեց հետաքրքրել ազդեցութիւն ունեցող շատ անձանց։ Ամեն ինչ նպաստում էր նրան, բայց յանկարծ պարզ երկնքից կայծակ թափեց—Օգոստոսի 7-ին պրուսացւոց լուսաւորութեան նախարարը—Բրունէրը արգելեց պրուսացւոց թագաւորութեան սահմաններում հիմնել մանկական պարտէզներ։ Այդ արգելքը շարունակուեց մինչև 1860 թ. Ֆրէօբէլը դրանով շատ վիրաւորուեց, բայց չը կորցրեց եռանդը և Մարէնհթալում աւելի մեծ աժխուժով սկսեց աշխատել կրթութեան գործի համար։ Նա անցրեց 1851—1852 թ. իր աշակերտների հետ, որոնք նրան երկրպագում էին։ 1852 թ. յունիսի 6-ին հիւանդացաւ և վախճանուեց նոյն ամի յունիսի 21 ին։

Տիկին Մարէնհօլցը, որ 3 տարի շարունակ ուսել էր Ֆրէօբէլի մօտ և նրա ամենասիրելի աշակերտուհին էր, ընդունեց ուսումնարանի տեսչութիւնը։ Այդ կինն էր, որ վերջին 30 տարուան ընթացքում իր ամբողջ հոգով աշխատեց տարածելու այդ մեծ մարդու գաղափարները։ Պէտք է երախտագէտ լինել այդ կնոջից, որ գրեց մանկական պարտէզին վերաբերեալ ամենալաւ գրքերը։

1855 թ. տիկին Մարէնհօլցը գնաց Պարիզ, ուր մնաց 2 տարի։ Այդտեղ նա զանազան հասարակութեան մէջ մեծ համակրութիւն գտաւ։ Պարիզի որբանոցների կենդրոնական ժողովը, որի նախագահը ինքը կայսերուհին էր, ընդունեց նրա առաջարկութիւնը և կարգադրեց,

որ նա փորձնական գասեր տայ որբանոցում։ որ կառավարում էր տիկին Պապ—Քարպանտիէն։ Նա համահաւասար կերպով գրաւեց մի քանի յայտնի անձանց նաև փիլիսոփայ Կոնտի ուշադրութիւնը։ 1856 թ. Պարիզում կազմուեց մանկական պարտէզների պահապան մի ընկերութիւն, որ մանկական պարտէզներ հիմնեց ուր պէտք է գործադրէին Ֆրէօբէլի մանկավարժական գաղափարները։

1857 թ. Տիկին Մարէնհօլցը ներկայացրեց միջազգային բարեգործական համաժողովին, որ գումարուել էր Ֆրանկֆուրտում (Մայնի վրայ) մի աշխատութիւն, որ տպագրուեց հետեւեալ վերնագրով։ Տիկին բարօնուհի Մարէնհօլցը ներկայացնում է Ֆրանկֆուրտի համաժողովին մանկական պարտէզը։

Հետեւեալ տարում նա գնաց Բէլգիա, Հոլլանդիա, ուր մեծ համակրութիւն գտաւ։ Տիկին Մարէնհօլցի ազդեցութեամբ Բելգիական մատենագիր Եակօրսը գրեց Փրանսերէն լեզուով մանկական պարտէզի մի դասագիրք Վարժուհիների և մայրերի համար։ Այդ միջոցին պարոն Կոմբրիւդը հրատարակեց Ֆրէօբէլի երկու գլխաւոր շարագրութիւնների թարգմանութիւնները «Մօր գրոյցները» և «Մարդու կրթութիւնը»։

1859 թ. Տիկին Մարէնհօլցը գնաց Ալգաս, Փրանսիան Զուիցարիա և 1860 թ. գասախօսեց Ժընէվում, Կողանում, Նէուշտաէլում և այլ քաղաքներում։ Դրանից յետոյ Զուիցարիայում սկսեցին հիմնել մանկական պարտէզներ և ի միջի այլոց տիկին Պօրտուգալը հիմնեց Ժընէվում այն յայտնի մանկական պարտէզը, որ մինչեւ այժմ գոյութիւն ունի վերակացութեամբ նրա մի աշակերտուհու։

Տիկին Մարէնհօլցի անխոնջ աշխատութեամբ ստացուեց այն արդիւնքը, որ այսօր տեսնում ենք։ Նրա ճանապարհորդութիւնները շատ նպաստեցին ծանօթացնելու գիտնականներին մանկական պարտէզի նշանակութեան հետ։ Նրան յաջողեց հիմնել Բէրլինում առաջին ընկերութիւնը, որ յանձն առաւ իրագործել Ֆրէօբէլի դաշտափարները։ Կարծ միջոցում այդ գաղափարները տարածուեցին մեծագոյն քաղաքներում և Բէրլինում հիմնուեց մանկական պարտէզի վարժուհիների համար մի մեծ վարժապետանոց։

1871 թ. Տիկին Մարէնհօլցը պրօֆէսօր Ֆիխտէի (ֆիլիսոփայի որդիին) և պ. Լէօն Հարդի՛ի օգնութեամբ հիմնեց Դրէզդէնում «Կրթութեան ընդհանուր ընկերութիւնը» (Allgemeiner Erziehungsverein), որ պէտք է ծառայէր որպէս կենտրոն։

Դժուար է վիճակագրական տեղեկութիւններ տալ մանկական պարտէզների վերաբերութեամբ, որովհետեւ այդ ուսումնարանների մեծամասնութիւնը մասնաւոր էր, այդ պատճառով պաշտօնական տեղեկութիւնները՝ շատ չնշին են։ Կարելի է միայն ասել, որ 1875 թ. Հանշմանն իր գրքում «Ֆրիդրիխ Ֆրէօբէլ» ցոյց է տալիս 170 քաղաք Եւրոպայում և Ամերիկայում, որոնցից իւրաքանչիւրում կային մէկ կամ մի քանի մանկական պարտէզներ։

Զուհցարիայում 1881 թ. այդ ուսումնարանների թիւը հասնում էր 180-ի։ Վաշինգտօնի կրթութեան դիւանն յայտնեց, որ 1886 թ. Ամերիկայի միացեալ նահանգներում կային 524 մանկական պարտէզներ։

Պէտք է մի քանի խօսք ասել, թէ մանկավարժները ինչպէս էին վերաբերում դէպի քրիստոնէութիւնը։

Աւետարանն ներկայացնում է Քրիստոսին որպէս երե-

խաների բարեկամ։ Նա ասումէ, քանի որ երեխաները փոքր են, պէտք է խնամել նրանց մանկավարժական տեսակէտից։ Երբ նա օրհնում էր երեխաներին՝ ցանկանում էր նրանց ֆիզիքական, մտաւոր, բարոյական, կրօնական բարգաւաճումնն։ Քրիստոս ինքն ասում էր, որ չը կայ աւելի ազնիւ և արժանաւոր պարապմունք՝ քան երեխաների մասին հոգալը։ Նա ասում է. երկնային թագաւորութիւնը կը պատկանի այն անձանց, որոնք կը նմանեն երեխաներին, այսինքն դիտմամբ մեղք չեն գործի, կը լինեն բարի, ազնիւ, աշխատասէր։

Կրթութեան գործում հէնց այդ քրիստոնէական գաղափարներին էին հետեւում Ֆրէօբէլի աշակերտները և աշխատում էին սովորցնել երեխաներին աստուածապաշտութեան։

Աւետարանն արծարծում է նոյնպէս անձնական ազատութեան և բարեգործութեան գաղափարները, նա պահանջում է, որ ամեն մարդ կատարէ՝ ինչ որ ուղիղն է, բարի է, որովհետեւ այդ գաղափարները տանում են դէպի անձնական ազատութիւնը։

Մանկավարժներն աշխատում են երեխաների մէջ զարգացնել անձնական ազատութեան և բարութեան սկրզբունքն, ազնուացնել երեխայի ձգտումները, զարգացնել նրա բոլոր ընդունակութիւնները և հաստատ կամքի տէր դարձնել։ Երեխայական ամեն մի գործում, ձգտման մէջ, պէտք է կարողանալ հասկացնել բարին, ազնիւը, որպէս զի ժամանակով նա բարի պտուղներ տայ։ Ամեն ինչ պէտք է կատարուի առաքինութեան համար և առաքինութեամբ, ահա այդ է ուղիղ Աստուածապաշտութիւնը, որ քարոզում էին Ֆրէօբէլեան ուսումնարաններում։





Փ ՐԵ Օ Բ Ե Լ Ի

ԿՐԹԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ցրեօթէլի կրթական եղանակն ազնուացնումէ երեխայի ձգտումները և զարգացնումէ նրա ընդունակութիւններն սկսած նրա առաջին տարուց։

Կրթութեան այս նոր եղանակը, որ մենք ներկայացնում ենք և առաջարկում ենք նրա հիմնական գաղափարներն ուսումնասիրելու և իրագործելու՝ կարելի է անուանել մի եղանակ՝ որ լաւ է մշակուած։ ԶԵ կարելի ասել թէ՝ աւելացնելու բան չի մնում և գործադրելու համար չի կարելի փոփոխութիւնների ենթարկել։ Նոյն եղանակը հետաքրքիր է ամեն մարդու համար, որ զբաղուել է երեխայի հետ, նրա ծնուելու օրից սկսած և ստիպուած է կատարել ծանր պարտաւորութիւններ մի էակի վերաբերութեամբ, որ սկզբում ոչ կամք ունի՝ ոչ էլ ցանկութիւն։ Կրթութեան հիմնական գաղափարը հէնց սկզբից պէտք է գործադրութիւն գտնի, եթէ չեն կամենում, որ փոքր երեխան պահանջող ու կամակոր լինի։ Կարեռը է ծանաչել երեխայի բնաւորութիւնը և այն խնամքը, որ հարկաւոր է նրա առողջութեան և կազմակերպութեան համար։

Մի խելացի և փորձուած մայր հեշտութեամբ կարող է հետեւել այս նոր եղանակին և դրա համաձայն կրթել իր որդուն։

Այս եղանակը համապատասխանում է յառաջադիմութեանը և գրանով կարելի է կանոնաւոր կերպով զարգացնել երեխային։

Եթէ մի քանի ժամանակից յետոյ կրթութեան հիմունքը կը տարածուեն ցուցական եղանակին համաձայն, այն ժամանակ հարկաւոր կը լինի աւելի հետեւել որ այդ գործը զարգանայ և համնի իր գագաթնակէտին։

Այժմ ուսումնասիրելով և գործադրելով այդ եղանակը՝ կարելի է անցնել զարգացման բոլոր աստիճաններով, որպէս զի մարդ կարողանայ համապատասխանել իր բարձր նշանակութեանը և երբ այդ եղանակի գաղափարն այնպէս կը հասկացուի, ինչպէս հարկն է, կը զարթեցնի ամենամեծ հետաքրքրութիւն։

Ահա պրօֆէսօր Դագօի ճառը, որ նա արտասանեց, երբ Նէուշատելում այդ եղանակի մասին վարժուհիների համար դասախոսեց։

Հին ժամանակներում, ասաց Դագօն, երեխային յանձնումէին ստրկի խնամատարութեանը։ Քրիստոնեայ երկրներումն էլ, ըստ նայելով այն գեղեցիկ օրինակներին, որ մի քանի սուրբ հայրեր տալիս էին, երեխան չէր խնամւում այնպէս՝ ինչպէս պէտք է խնամուէր։ Միջին դարերումն էլ կրթութիւնը շատ տարօրինակ է եղել։ Երեսնամեայ պատերազմի ժամանակ էլ զարմանալի գրութեան մէջ էր կրթական գործը, երբ յայտնուեց սլաւօնական յայտնի մանկալարժ Կոմէնիուսը, որին անուանում են «հայր ցուցական եղանակի», որին Միշլէն անուանում է «Մանկավարժութեան Գալիլէյ»։

Ցուցական եղանակով հրապուրում է Ռուսսօն, Եմիլի Հեղինակն, առարկայական (ցուցական) եղանակի նորագոյն քարոզիչը։ Ռուսսօն ուղղակի առաջարկեց ցուցական եղանակը։ Այդ եղանակն էլ ընդունեց ժողովրդական ուսումնարանի հիմնագիր Պէստալօցցին, նոյնը Ֆըրէօբէլն էլ ընդունեց իր մանկական պարտէզի համար։ Ֆըրէօբէլը Կօմէնիուսից և Պէստալօցցուց յետոյ յայտնուեց, բայց կարողացաւ իրագործել մանկական պարտէզըն, ուր մայրերը կարող են և պէտք է գործեն։ Հէնց այդ տեսակ ուսումնարանի մասին էին երազում առաջընթաց մանկավարժները։

Զարգացնել երեխայի խելքը, մարզել նրա աչքը, կատարելագործել նրա ձեռավարժութիւնը, զարթեցնել, վարժել, կազմակերպել նրա բոլոր ընդունակութիւններն երկրաշափական արգուածներով (ֆիգուր), որոնց Պէստալօցցին շատ մեծ նշանակութիւն է տալիս, դրանք երեխային դէպի քննադատութիւնը, սովորցնել նկարչութիւն, ձեռագործութիւն, խնամքով շինութիւններ կառուցանել, պարտէզպանութիւն, ահա դրանք են գործնական ուսման հիմքերը։ Դաղափարական բաները սովորցնում են երգերով, պատմելով բանաստեղծական և արձակ գրուածքներից։

Գերմանիայի Բլանքէնբուրգ քաղաքումն էր, ուր բացուեց Ֆըրէօբէլեան առաջին մանկական պարտէզը։ Այդ ժամանակից սկսած, այդ տեսակ ուսումնարանները տարածուեցին գերմանական Զուհցարիայի գանգան մասերում, զորօր։ Յիւրիխում, Սէն—Դալէնում, Լիւցերնում, Ֆընէվում։

Մի յայտնի գիտնական, որ մանկական պարտէզի մասին օրիորդաց դասախոսում էր՝ ասեց. «այն անձինք, ո»

քոնք իրենց նմաններին են կրթում՝ կը փայլեն որպէս աստղեր երկնակամարի վրայ, օրիորդներ որքան արդեօք ձեր աստղերն աւելի գեղեցիկ պէտք է փայլեն՝ քան մերը՝ գիտէք ինչու համար, որովհետև մենք միայն պատանեկութեան և երիտասարդութեան ուսուցիչներն ենք, այն ինչ դուք կոչուած էք քնքոյց, մատաղ, անկեղծ խելքի ու սրտի մէջ ցանել առաքինութեան և ճշմարտութեան սերմեր։ Այս. մեր գործը գեղեցիկ է և կարեռ, բայց ձեր գործը կարող է լինել աւելի մեծ, եթէ լիովին և սրբութեամբ կատարէք։

Եւրոպայի բոլոր քաղաքակրթուած երկրներում զանազան ճիւղերի մասնագէտները հաւանութիւն են տուել Ֆըրէօբէլի մանկավարժական նորաձև փոփոխութիւններին, բայց կասես թէ մի կերպ աննշմարելի են մնացել բժիշկների կարծիքները։ Սակայն բժիշկների վկայութիւնները պէտք է շատ ծանրակշիռ նշանակութիւն ունենան, որովհետև նրանք մի որոշ կողմից շատ աւելի բարձր են՝ քան ուսուցիչները, ծնողները և ուսումնարանների վարչութեան անդամները, նրանք աւելի լաւ գիտեն աւողջապահութիւնն ընդհանրապէս և մանաւանդ բարոյականութեան առողջապահութիւնը, որ առաջնի հետ սերտ կցուած է։ Այդ պատճառով էլ բժիշկների կարծիքների վրայ հրաւիրում ենք առանձին ուշագրութիւն գարձնել։

Կարելի է մեծ հատորներ կազմել այն բոլոր կարծիքներից, որ գերմանական, անգլիական, ֆրանսիական, հոլանդական, զուլիցարական բժիշկները գրել են մանկական պարտէզի ֆիզիքական, բարոյական մտաւոր առաւելութեանց մասին, բայց բաւական է յիշել նրանցից միայն մի քանիսի կարծիքները։

Նէուշատէլի բժիշկ Գիւլեօմն ասումէ . «Մանկական ուսումնարանների մէջ պէտք է անպատճառ ներմուծել ֆրէօբէլի կրթական եղանակը : Պէտք է կառավարիչներին ստիպել հիմնելու և հովանաւորելու ֆրէօբէլի եղանակի ուսումնարաններն . այդ գործին պէտք է մասնակցեն և օգնեն բարեգործական ընկերութիւնները և մասնաւոր անձինք» :

Բժիշկ Քօէնդէն՝ ասում է . «Մեծարգոյ ֆրէօբէլն իր կեանքը նուիրեց ստեղծելու մի ուսումնական հիմնարակութիւն, որ կարելի է հասարակական բարեգործութիւն անուանել : Այդ հիմնարակութիւնը կրումէ «Մանկական պարտէզ», անունը : Ֆրէօբէլը զանազան խաղեր, երգեր, պարտէզպանական աշխատանք գործադրելով՝ միշտ ձըգտել է դէպի մի բարձր և օգտաւէտ նպատակ այն է՝ զարգացնել երեխայի մէջ օգտաւէտ և ազատ գործունէութիւն : Երբ երեխաներն ուսումնարանի նստարանների վրայ նստած լսումեն այնպիսի դասեր, որ ոչ հասկանալ կարող են, ուրեմն ոչ էլ առարկան սիրել կարող են՝ սկսումեն սաստիկ ձանձրանալ, անուշադրութեամբ են սովորում՝ որ յետոյ շատ գիւղար է ուղղել, այն ինչ ֆրէօբէլի պարտէզում երեխաների երեսների վրայ երեւումէ հետաքրքրութիւն, բաղդաւորութիւն և առողջութիւն» :

Բժիշկ պրօֆէսօր Յօնսագրիվը, որ յայտնի է առողջապահական գրուածքներով՝ ասումէ, որ այժմեան կըրթական եղանակը (մէտօդ) վտանգաւոր է առողջապահական և բարոյական տեսակէտից, պէտք է որքան կարելի է շուտ փոխարինել ֆրէօբէլի եղանակով : Ֆրէօբէլի կրթական եղանակն ուղղապէս բղխում է Հուֆէլանդի և Պէստալոցցու գաղափարներից, որ իր մանկավարժա-

կան եղանակներով երեխային մօտեցնումէ բնութեանը : Պրօֆէսօրն շարունակելով ասումէ . Ֆրէօբէլը նմանումէ բնութեան մեծ քրմապետին, որ առաջարկումէ աշխատել բաց օդում, չոր ու ցամաք ուսման եղանակը փոխարինումէ խաղերով, ձեռագործութեամբ, մարմնամարզութեամբ, երգերով: Այդ կրթական եղանակը պէտք է տարրական կըրթութեան ամենալաւ եղանակը համարել : Կրթութիւնը պէտքէ մեզանում (Փրանսիայում) այդ ճանապարհով ընթանայ, որովհետեւ առողջութիւնը զոհուած է փառասիրութեանը : Հասարակութեան համար ինչ տեսակ անդամներ պէտք է գառնան այդ տկար, նուազած, նեարդային երեխաները, որոնք դեռ կեանքի մաքառումից առաջ այդպէս տարաբախտ դրութեան մէջ են : Բարենորոգումն կարեսը է, որ արդէն սկսուել է : Այդ է ապագայի ծրագիրը, որ երանի շուտ իրագործուէր» :

Բժիշկները շատ նպաստաւոր վկայութիւններ են տուել ֆրէօբէլի մանկական պարտէզի առողջապահական և բարոյական առաւելութեանց մասին և եթէ գրանց վրայ էլ աւելացնենք այն բոլոր վկայութիւնները, որոնք բերանացի խօսուել են՝ կողմնակիցներն աւելանալու են ամեն կողմից: Եթէ մարդկանց ծանօթացնէին այդ կըրթական եղանակի հետ, այն ժամանակ ծնողները և ուսումնարանական վարչութիւնները կարելի է, որ վերջապէս իրենց աչքերը բանային և տեսնէին, որ այժմեան կրթական եղանակը վտանգաւոր է և հասկանային որ ուսումնարանական եղանակի բարեփոխութիւնն անհրաժեշտ է:

Պէտք է ուսումնասիրել ֆրէօբէլի կրթական եղանակը էական գաղափարն, այն ժամանակ կը ստացուի մի ընդհանուր գաղափար այդ եղանակի մասին և հասկա-

նալի կը լինի, որ երեխային հէնց սկզբից ղեկավարելու համար կարեւոր է այդ եղանակը։ Պէտք է ուսումնասիրել այդ եղանակը, մանաւանդ, որ դա պահանջում է լաւ տեղեկութիւններ ունենալ բնախօսութեան (ֆիզիոլոգիա) բնագիտութեան և հոգեբանութեան մասին։

Պէտալօցցին և հայր Ժիրարը մեզ ցոյց են տուել, թէ ինչ ուղղութեամբ պէտք է զարգացնել երեխայի ընդունակութիւնները։ Ֆրէօբէլն իր կողմից տալիս է մեզ ամենալաւ միջոցներ այդ զարգացումը թեթևացնելու և յարմարացնելու երեխայի ճաշակին և ոյժերին։

Պէտք է գիտենալ ուղղապէս գործադրելու երեխայի վրայ կրթական գաղափարները և գիտակցաբար օգուտ քաղել այդ կրթական միջոցներից, այդ գործադրական մասի նիւթն է, որ ուղղապէս իրագործումնեն երեխաների վրայ դասատան մէջ կամ ընտանեացշնչանում։

Այդ տեղ է, որ վարժուհուն միջոց է տրւում մշակել, վարժել իր մանկավարժական տաղանդը, աւելի և աւելի լաւ իրագործել տեսական մասը, գիտակցաբար գործադրել այն միջոցները, որոնք նշանակուած են գործադրական մասում։

Ֆրէօբէլի ԱնջնԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ։

Մի քանի մատենագիրներ հետեւալ կերպով են նկարագրում ֆրէօբէլի անձնաւորութիւնը։

Ֆրիդրիխ Ֆրէօբէլը, նախապատրաստական ուսումնարանների վերանորոգիչը, կրթութեան այն բնական եղանակի հնարողն է, որ ներդաշնակութեամբ զարգացնում է երեխայի մարմինը և խելքը հէնց ծննդեան առաջին օրից սկսած։

Ֆրէօբէլը ծնուեց Օբէրվէյսբախում, որ գտնւում է նվարցբուրգ՝ ուգոլիք՝ շտատիշխանութեան սահմաններում

21-ն Ապրիլի 1762 թ։ Նրա հայրը Գիւղական մի համեստ պատոր էր, որ կրթեց նրան քրիստոնէական հոգով։ Դեռ երեխայութեան ժամանակ՝ նրա մայրը վախճանուեց և նա զրկուեց մայրական խնամքից, որ երեխայի համար մի պահանջ է։ Կարելի է հէնց այդ էր պատճառը, որ նա իր վարդապետութեան մէջ այնքան ցերմ կերպով պաշտպանումէր մայրական կրթութեան գաղափարը։

Նա իր հօր հետ գնում էր նրա աղքատ ժողովրդին այցելելու, ծանօթանում էր նրանց ընտանեկան ցաւերի, պիտոյքների հետ։ Այդ տեսարանները զարգացրին նրա մատաղ սրտի մէջ սէր գէտի մարդկութիւնը և նրանում յղացաւ ցանկութիւն դրանց համար գարման պտուելու։

Նա իր առաջին ուսումնարանն հիմնեց Քէյլհառում, դա մի փոքրիկ քաղաք է Տիւրինգէնում։ Ուր նրա ուսումնարանը մինչեւ այսօր էլ ժողովրդի հոգացողութեամբ է պահպանում։

Քէյլհառում վարձած տունը շատ նեղուածք էր նրա աշակերտների համար։ Սպասելով իր նոր տան կառուցման աւարտելուն, խեղճ Ֆրէօբէլը առ ժամանակ՝ բնակւումէր հաւաքնում։ Նա շաբաթը միայն երկու հայով էր կերակրում և իր ամեն օրուան ուտելու բաժինը կաւիճով նշանակում էր պատի վրայ, որ աւելի չուտի։ Կինը մասնակցում էր նրա աշխատանքին և զրկանքներից իր բաժինն էր ստանում։ Իր կրթական եղանակը ժողովրդականացնելու համար, արած ճանապարհորդութեանց ժամանակ նա շատ անգամ գուրսն էր քնում։ Որ կարողանայ փողի խնայողութիւն անել և գործադրել աղքատ երեխաների կրթութեան համար։ Երկար տարիներ փորձուելուց յետոյ նա իր կրթական եղանակը կա-

բեռ համարեց գործադրելու աւելի մատաղ երեխաների վրայ։ Այդ պատճառով նա իր ուսումնարանն յանձնեց իր աղքականներից մէկին և աշխատեց իրագործել իր մտածած մանկական պարտէզը։ Նա մանկական պարտէզի մասին շատ քաղաքներում դասախոսեց և այդպիսի պարտէզներ հիմնեց գերմանական զանազան քաղաքներում, այն է՝ Համբուրգում, Դրէզդէնում, Լէյպցիգում, Գոտտայում ևն։ Մահը չը թողեց նրան շարունակել իր այդ մարդասիրական գործունէութիւնը։ Ֆրէօբէլը որդի չունէր և կարծես թէ մխիթարուելու համար նա իր բոլոր հայրական խնամքը գործադրում էր ուրիշների երեխաները կրթելու համար։ Նա վախճանուեց 1852 թ., յունիսի 21-ին Մարիէնթալում, ուր և հիմնել էր մի ուսումնարան մանկական պարտէզպանուհիք պատրաստելու համար։

Հասարակ բարք ու վարքի տէր էր նա և անչափ բարեսիրու, երեխայի նման համեստ էր, նրա կերպարանքը անմեղ ու միամիտ տեսք ունէր, որին նրա սպիտակ մազերը տալիս էին մի առանձին պատկառելի գեղեցկութիւն։ Միւնյոն ժամանակ շատ եռանդու և հաստատամիտ էր՝ երբ հանգիպում էր գժուարութիւնների կամ արգելքների։ Ինչպէս և հանճարներին մեծ մասամբ պատահումէ՝ նա առ ժամանակ անյայտ մնաց, բայց ունենալով հաստատ հաւատ առ Սստուած՝ միշտ և ամեն տեղ յաղթումէր։ Նա անձնատուր էր իր գաղափարներին, փառք չէր որոնում սիրումէր գիտութիւնները և մանաւանդ բնութիւնը, որ հիմնովին ուսումնասիրել էր։ Ֆրէօբէլն աշխատում էր բնութեան օրէնքները գործադրելով զարգացնել մարդկային հոգին։ Նա բնական մարդէր, չէր կորցրել իր ինքնուրոյնութիւնը, միշտ ընդունակ էր լսել ու հասկանալ Ստեղծողին և քարոզել ստեղ-

ծուածներին իր գործերով, իր խղճմտանքով։ Ահա այսպէս մարդ էր ֆրէօբէլը։

Նա չէր որոնում ոչ պատիւ՝ ոչ էլ հոչակ, գլխաւորապէս զբաղուած էր իր մանկավարժական գործով։ Գոհ էր, որ հաւանութիւն էր գտնում իր մի քանի բարեկամներից և աշակերտներից։ Կը գայ ժամանակ և մարդիկ կը ճանաչեն, որ նա կրթութիւնը գրեց հաստատուն և ուղիղ հիմքի վրայ և նրա գործունէութեամբ, ինչպէս նա ինքն ասում էր, կանայք կը գառնան երեխաների համար պարտէզպանուհիք, կը խնամեն մարդկային այդ բոլոր բոյսերն իրենց սիրոյ ջերմով և կը ծաղկացնեն առանց մնչում գործելու, կը զարգացնեն նրանց բնական ձանապարհով առանց կեղծելու և Սստուծոյ կամքին համաձայն։ Նա միւս մանկավարժներից նրանով է զանազանում։ Որ հիմնովին ուսումնասիրել էր մարդկային բնութիւնը։ Նա մեզ ցոյց է տալիս երեխայի բոլոր յատկութիւնները, ձգտումները և մարդկային զարգացման հիմնական օրէնքները։ Այդ տեղեկութիւնները նա ձեռք բերեց գործնականապէս ուսումնասիրելով երեխաների կեանքն, անգադար քննելով մարդու բնազդումը սկսած նրա ծննդեան օրից։ Նա ապրումէր երեխաների հետ և երեխաների համար, որոնց հետ խաղալով գտաւ այն բնական ձանապարհները, որ երեխաներն իրենք էին ցոյց տալիս թէ նրանց հարկաւոր է գործունէութիւն և շարժողութիւն։

Երեխայութեան ժամանակուայ տանջանքը, ձանձրոյթը, անգործունէութիւնը և այն ջերմ սէրը, որ նա ունէր մարդկութեան համար, յորդորեցին նրան ուսումնասիրել վերոյիշեալը։ Նա աշխատումէր բարւոքել իր աղքակիցների վիճակը ցոյց տալով նրանց բարօրութեան

անշարժ հիմքը, խնամքով զարգացնելով երեխայի ընդուռնկութիւնները՝ սկսած նրա ծննդեան օրից։

ՖՐԵՇԵԼՆ ԻՆՉ ԷՐ ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒՐԵԼ։

Դիտողութեան ընդուռնակութիւնն յատուկ էր Ֆրէօբէլին։ Զանազան գիտութիւնների մասնագիտորեն ուսումնասիրութիւնն շարժառիթ եղաւ նրան կազմակերպելու իր մանկավարժական եղանակը։ Նա առանձին սիրով ուսումնասիրեց բնական գիտութիւնները—փիզիքան, մաթեմաթիքան, երկրագործութիւնը, ճարտարապետութիւնը, քիմիան ևլն։ Մի ժամանակ կատարեց նա անտառապահի պաշտօն, յետոյ գարձաւ Բէրլինի հանքաբանական թանգարանի տեսուչ, մասնակցեց Գերմանիայի ազատութեան պատերազմին, կատարեց ուսուցչի պաշտօն և վերջապէս որպէս մանկավարժ 1816 թուականից սկսեց ուսումնասիրել և մշակել կրթութեան գաղափարը։

Այդ տեսակ ուսումնասիրութիւնները և ձեռք բերած գիտութիւններն ու նրա բազմատեսակ գործունէութիւնը պէտք է իրենց կնիքը գնէին նրա մանկավարժական նոր եղանակի վրայ։ Դժուար կարող էր նրա նախագծած կարգը խանդարուել։ Ընտրած եղանակի գաղափարները պէտք է լինէին նրա վարդապետութեան սկզբնակէտը, յարմարեցրած և հասկանալի լինէին երեխաների համար և օգնէին անհատական զարգացմանը։

Թէալէտ Ֆրէօբէլի եղանակն սկզբից կատարեալ է թըռում, բայց և կարօտ է զանազան տեսակ կատարելագործութեանց։ Նրա ուսման գլխաւոր նախագծերը որոշ են, այդ պատճառով էլ կատարելագործելը չէ կարող հանդիպել դժուարութեանց։

Պէստալոցյու հետ ունեցած յարաբերութեանց մասին շատ վէճեր են եղել, թէ արգեօք ֆրէօբէլը Պէստալոցյու աշակերտներից է՝ թէ ոչ Ֆրէօբէլն իր երեք աշակերտների հետ (Հօլցհաուզէնի որդիքը) երկու տարի մընացել է Իլէրդօնում Պէստալոցյու, այդ պատկառելի մանկավարժի մօտ, որին և յարգումէր նրա դէպի մարդկութիւնն ունեցած սիրոյ համար։ Ֆրէօբէլին նախադասեցին շատ մանկավարժներից, որոնք նրանից առաջ էին գործել։ Ռուսօն իսկապէս միայն քննութեան ենթարկեց կրթական հին եղանակը և մաքառեց դրա դէմ։ Նա պարզ կերպով ցոյց տուեց, որ երեխային պէտք է ծանօթացնել առարկաների հետ, այսինքն պէտք է գիտութիւնները սովորցնել ցուցական եղանակով, բայց ցոյց չը տուեց, թէ այդ եղանակն ինչպէս պէտք է իրագործել։

Բազէգօվը չիրագործեց Ռուսօնի գաղափարները, նա առարկաներ տեսնելու, քննելու տեղ, ցոյց էր տալիս նրանց պատկերները։

Պէստալոցյին ըմբռնելով Ռուսօնի գաղափարները հնարեց ցուցական եղանակը, որ պահանջումէ առարկաներ ցոյց տալ և այդ կերպով նա գարձաւ նախապատրաստական, ժողովրդական ուսումնարանի հիմնադիրը։ Բայց այդ եղանակը յարմար չէր փոքր երեխաների համար, նա չը հասկացաւ գործունէութեան և հնարագիտութեան կարիքը, որ փոքր երեխաների համար մի տեսակ բնական պահանջ է։

Պէստալոցյին մի տեսակ նախազգացմունք ունէր, նա կարծումէր, որ կարելի է աշակերտին արդիւնաբերութիւն սովորցնել, բայց նա դրա եղանակը չըտուեց, նա միայն նախագուշակումէր այն, ինչ ստեղծեց Ֆրէօբէլը։ Պէստալոցյին Ռուսօնի և Բազէգօվի նմաննկարձում էր,

որ ուսուցանելն է կրթութեան միայնակ միջոցը, մոռա-
նալով, որ երեխան ունի շարժողութեան կարևորութիւն
և նախաձեռնութիւն (ինիցիատիւ): Պէստալոցցին իր
վերջին ճառերից մէկում ասեց.—ես ձեզ սովորցնում
եմ Ա. և Բ., որ կարողանաք դործել և կարողանաք
կատարել:

Ֆրէօբէլն առաջուց պատրաստուած էր Պէստալոցցու
գաղափարները հասկանալու: Նա իր գործն ուղղում էր
Պէստալոցցու հետ զուգընթացաբար, բայց և աւելի՝ կա-
րողացաւ մօտենալ կրթութեան իսկական նպատակին:



ՖՐԷՕԲԷԼԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Ս Կ Զ Բ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ը

Օրիորդ վիւադնօն Ֆրէօբէլի սկզբունքի մասին հետե-
ւեալ հետաքրքիր տեղեկութիւններն է տալիս.—Ֆրէօբէլն
երեխայութիւնից սկսած թէև արտայայտում էր մտա-
խոհութիւն և ունէր կտրուկ խելք, բայց և այնպէս
փոփոխամիտ էլ էր նա: Այդ փոփոխամտութիւնն էր
պատճառը, որ նա երկար ժամանակ չը կարողացաւ ո-
րոշել իր կոչումը: Նա իր մանկավարժական գործու-
նէութիւնն սկսեց միայն 1816 թուականից:

Երկար ժամանակ խորհելով ու բնութիւնը քննելով
Ֆրէօբէլն հասկացաւ, որ Աստուած յայտնում է փոքր
և մեծ բաներում և վերջապէս այն եղբակացութեան
եկաւ, թէ մարդս երեխայութիւնից սկսած պէտք է ծա-
նօթանայ բնութեան հետ և նրա զարգացումը պէտք է
հիմնուած լինի տիեզերքի ընդհանուր կազմակերպու-
թեան ուսումնասիրութեան վրայ:

Այն քննադատութիւնները, որ արել են նրա գրուածք-
ների մասին, չի կարող նսեմացնել նրա գործնական աշ-
խատանքը: Մինչդեռ Ռուսասն և Պէստալոցցին թափա-
ռումէին տեսականութեանց մէջ, այդ խորհրդաւոր ե-
րազողն իր գաղափարներին ձև տուեց, ուսումնասիրեց
երեխայի բնութիւնը, կարեւոր համարեց շարժողութիւ-
նը և եղբակացրեց, որ երեխայի անմիտ շարժողութեան
կարևորութիւնից պէտք է յառաջացնել խելացի գոր-
ծողութիւններ: Այդ մտքով էր, որ նա հնարեց առար-
կաներ, որոնց ոչ թէ պէտք է ցոյց տային երեխային, այլ
և պէտք է նրա ձեռքը տային: Այդ առարկաներն ու-
նեն մաթեմաթիկական յարաբերութիւն միմեանց հետ և
իրական արժէք: Դրանցից մի քանիսը կարող են համա-
րուել խաղալիկ, բայց ոչ անմիտ և ոչ էլ ապարդիւն,
այլ սովորցնում և զարգացնում են երեխային: Այդ ա-
ռարկաների օգնութեամբ երեխան հնարում է, ձեւափո-
խում է, միջոցէ գտնումիր գործունէութեամբ և աշխա-
տանքով իրագործել իր մտքերը և այդ աշխատանքը հե-
ռացնումէ երեխային ստրկական կերպով նմանեցնելուց,
ստիպումէ նրան ստեղծել և երեխային գարձնումէ մը-
տածող էակ: Պարագելով երբեմն արուեստով, երբեմն
հնարագիտութեամբ նա պատրաստումէ մեր ժամանա-
կի պահանջին համաձայն հնարագէտ արուեստաւոր դառ-
նալ: Ամեն գործում հնարագիտութիւն մտցնել՝ կը նշա-
նակէ զարգացնել երեխայի ճաշակը գէպի գեղեցիկը, որ
յետոյ ներգործելու է նրա մտաւոր և բարոյական կեան-
քի վրայ, որ կրթութեան նպատակի մի մասն է:



ՖՐԵՒԹԵԼԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Տիկին Վան—Քաղքարը պատուական տեղեկութիւններ է տալիս; Ֆրէօբէլը ճանաչելով մարդկային բնութիւնը և ընդունակութիւնները, տուեց իր մանկավարժական եղանակին բոլորովին հասարակ, բնական, ներդաշնակ տեսք։ Նա իր ուշադրութիւնը չի դարձնում միայն մարդու ընդունակութեանց վրայ, այլ և ամրացնումէ նրա հոգին ու մարմինն։ Ֆրէօբէլը ոչ մի բան մոռացութեան չի տուել. նա աշխատում է զարգացնել մարդու ֆիզիքական մտաւոր և բարոյական կողմերը։ Ֆրէօբէլը դրել է իր կրթական եղանակը զուտ մարդագիտական հիմքի վրայ։ Զարգացման իւրաքանչիւր շըջանից խղճի մտօք հարցնումէ. թէ ինչ է հարկաւոր երեխային, ո՞րն է այն օրէնքը, որ որոշում է ընդունակութիւնների զարգացման կանոնաւոր ընթացքը։

Ֆրէօբէլը կարողացաւ ցոյց տալ ամենալաւ եղանակը, որ պահանջում է մարզել մկանները և գործարանները առանց արգելելու կամ նուազացնելու սրտի, երեակայութեան և ճաշակի զարգացումը։

Նա աշխատում է իւրաքանչիւր մարդուն տէր դարձնել իր այն ընդունակութիւնների, որ բնութիւնը տուել է նրան, նա կամենումէ պահպանել ամեն մի մարդու ինքնուրոյնութիւնը, տալով նրան միջոց զարգացնելու այն ձիրքը, շնորհը, որով նա ուրիշներից զանազանում, որոշումէ։ Չը կայ երկու մարդ, որոնք ունենային մի- և նոյն ընդունակութիւնները, միևնոյն ոյժերը։ Մարդիկ

աւելի ընդունակութիւն ունեն, քան թէ սովորաբար կարծումեն, բայց չեն երեսում որովհետեւ նրանց ոյ- ժերն, ընդունակութիւններն իր ժամանակին, հէնց սկզբ- բում չեն զարգացրել։

Արմատացած նախապաշարմունքները կուրացնում են ծնողներին, ի զուր կորցնել են տալիս երեխայի առաջին վեց տարիները, որոնք շատ թանկագին են։ Նատ ան- գամ ոչնչացնում են երեխայի ամենագեղեցիկ ձգտում- ների սերմերը և տաղանդը, կորցնել են տալիս երեխայի եռանդը, բնական գործունէութիւնը, որ ամենալաւ մանկավարժն էլ երբեմն չի կարող վերադարձնել հետե- ւեալ 7 տարիներում։

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

Տիկին Մարէնհօլցն ասումէ. սովորաբար չեն աշխա- տում կրթել երեխային փոքր ժամանակ, այլ այդ կըր- թութիւնն սկսումէ, երբ նա մտնումէ ուսումնարան, ուր գլխաւորապէս գիտութիւններ են սովորցնում։ Քան թէ կրթութիւն են տալիս,

Առաջին 6 տարիները, մինչև ուսումնարան մտնելը չը պէտք է երեխային դէպքի խնամքին թողնել, այլ պէտք է գիտենալ, որ հէնց կեանքի այդ առաջին շըջանից սկսած երեխան ստանում է տպաւորութիւններ, ո- րոնք դառնում են նրա զարգացման սկզբնակէտը։ Յան- կալի է, որ մայրերը, դայեակները և բոլոր այն անձինք, որոնք խնամում են երեխային՝ ընդունակ լինեն կատարելու այդ սուրբ ու կարեւոր պարտաւորութիւնը։

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ մարդկութեան կէսը չը հասած 6—7 տարեկան հասակին՝ վախճանում է։ Այդ յառաջանում է խնամատարների տգիտութիւ-

նից։ Մի՞թէ դրանք կարող են իրենց մեղաւոր չը համարել՝ երբ իրենց տգիտութեամբ այդ քան մահ են պատճառում։

Այն տպաւորութիւնները, որ երեխան ստանումէ հէնց սկզբում իր ծնողներից՝ երբէք բոլորովին չեն անհետանում։ Երբեմն ծնողներից աննկատելի կերպով վա տօրինակ է վերցնում։ որ յետոյ կարող է նրա կորստեան պատճառը դառնալ։ Ուրեմն որքան կարեւոր և անհրաժեշտ է մայրերի համար ճանաչել կրթութեան եղանակը և կարողանալ կրթութեան վերաբերեալ իրենց պարտաւորութեանն ուղղութիւն տալ։

Տխուր ճշմարտութիւն է, բայց այնուամենայնիւ պէտք է խոստովանուենք, որ չը կար մի խելացի եղանակ, որ մարդու կրթութիւնը դնէր բնական և օրինաւոր հիմքի վրայ, երբ Ֆրէօբէլն ուսումնասիրելով մարդուս բնութիւնը, և յատկապէս երեխայինը, ստեղծեց այն ցանկալի գիտութիւնը, որ իրաւամբ կարելի է անուանել ճայլէլի գիտութիւն։

Այս գիտութիւնը Ֆրէօբէլը գործադրեց մանկական պարտէզում, նրա ուսումնարանի անունն արդէն որոշումէ, թէ գա ինչ տեսակ ուսումնարան է։ Պարտէզում, այսինքն բացօգուտմ, բնութեան ծոցում պէտք է կրթել երեխային, հոգալ նրա մասին որպէս մի բոյսի մասին, որին կարելի է մարդկային բոյս անուանել և տալ նրան բնութեան բարօրութիւնը։ Բայց ի նկատի ունենալով, որ եթէ սկզբում անհոգ լինենք, այդ բոյսը յետոյ պէտք է վնասուի և երբէք կանոնաւորապէս չի զարգանայ։ Պէտք է բոլոր ուշադրութեամբ հետեւենք Ֆրէօբէլին, երբ նա մեր առաջն է դնում այն գաղափարը, որ ուղղութիւն է տալիս կրթութեանը, երբ պարզ

կերպով բացատրումէ իր նպատակը և միջոցներ է առաջարկում այդ նպատակին հասնելու համար։

Պէտալոցցու և Ֆրէօբէլի կարծիքով սկզբնական կըրթութիւնը շատ կարեւոր է։ Այդ կրթութիւնն ուսումնարանում չի կարելի ստանալ, եթէ առաջին տարիներում չ'աշխատենք կանոնաւոր կերպով զարգացնել երեխայի գործարանները, ոյժերը, խելքը, բարոյականութիւնը և աստուածպաշտութեան սկզբունքը։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ՆՊԱՍՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ.

Ինչու Ֆրէօբէլն իր ուսումնարանն անուանումէ մանկական պարտէզ և ոչ ապաստանարան կամ երեխաների ուսումնարան կամ խնամատարութեան ուսումնարան։

Ֆրէօբէլն իր մանկավարժական եղանակը չը հնարեց երեխային պահպանելու համար, որ նրանք ջրի կամ կրուրակի մէջ չընկնեն, այլ ուսումնարանի համար նպատակ դրեց աստիճանաբար զարգացնել երեխայի գործարանները, անդամները, խելքը, բարոյականութիւնը։

Սկզբնական կրթութեան համար «ուսումնարան» խօսքը նրան յարմար չէր թւում։ Երեխայի վրայ չը պէտք է նայել որպէս մի գատարկ ամանի վրայ, որի մէջ պէտք է որքան կարելի է շուտ լցնել մեր գիտութիւնը։ Ամեն է մի փոքր երեխայ ունի իր «եսը» որ հաստատումէ թէ նա ունի մտաւոր անհատականութիւն և իր սեպհական յատկութիւնները։

Ֆրէօբէլն իր ուսումնարանն անուանեց «Մանկական պարտէզ», որ չը կարծեն՝ թէ գա մի հին ձեւի ապաստանարան կամ սովորական ձեւի ուսումնարան է, այլ

դրանով կամեցաւ ցոյց աալ, որ դա մի նոր ձեհ հիմնարկութիւն է՝ հիմնուած նոր գաղափարների վրայ:


«Ապաստանարան» և «ուսումնարան» խօսքերը պարունակում են երկու սխալ գաղափար, այն է լոկ պահպանելը և երեխայի գլուխը գիտութիւններով լցնելն. առանց նրան հարկաւոր գիտութիւնը տալու: Ֆրէօբէլն ամենից առաջ ցանկանում է ունենալ պարտէզ, բաց օգնականաց խոտ, ծաղիկներ, ծառեր, մի խօսքով լի բնութիւն, ուր կեանք կայ, ուր երեխաները կարող են զարդանալ ֆիզիքապէս և բարոյապէս:

Ֆրէօբէլը ցուցական եղանակի կողմնակից էր, նրա կարծիքով որ բանի մասին էլ որ խօսեն երեխայի հետ պէտք է այդ բանը նրան ցոյց տան. բայց այն էլ պէտք է գիտենալ, որ կեանքը, բնութիւնը մի թանգարան չէ, որի միջով կարելի լինի շուտ անցնել և ամեն մի բան էլ շուտ տեսնել: Կեանքը մի արուեստանոցի է նմանում, ուր ամեն մարդ իր տեղն ունի և միջոց՝ աշխատանքով զարգացնելու իր ոյժերը և ընդունակութիւնները: Պէտք է գործնական մարդիկ պատրաստել և ոչ այնպիսի դատաւորներ, որոնք կարողանան ամեն բանի մասին խօսել, դատավճիռ կարդալ և չը կարողանան ոչ մի գործ կատարել: Որպէս զի երեխան սկսի զարգանալ, ամենից առաջ պէտք է, որ նա սկսի ձեռագործներ հնարել:

Պէտք է գիտենալ, որ այդ ուսումնարանը չեն անուանել մանկական պարտէզ, որպէս զի ցոյց տան, թէ որքան պարտէզը կարեւոր է և ինչ որ նա պարունակում է անհրաժեշտ է երեխաների համար: Այդ անունն այն մտքով է տուած, որ ցոյց տան թէ ինչպէս պէտք է նայել երեխայի վրայ: Ֆրէօբէլը կամենում է, որ երեխայի վրայ նայեն որպէս մի բոյսի վրայ, որ պէտք է խնամել:

Պարգացնել, ինչպէս որ նրա պիտոյքը պահանջում է և ոչ թէ խնամել նրան մեր քմահաճութիւններին համեմատ: Ինչպէս որ բոյսը զարգանում է որոշ ժամանակամիջոցում: և որոշ հանգամանքներում, նոյնպէս էլ երեխան ունի զարգացման որոշ շրջաններ: Նա արտայայտում է իր անձնական պիտոյքը, որին մենք պէտք է բաւականութիւն տանք:

Պէտք է մի քանի նկատողութիւններ անել ֆրէօբէլի առաջարկած խաղերի մասին: Այդ խաղերը բարոյապէս և ֆիզիքապէս ամրացնում են երեխաներին, ցոյց են տալիս նրան, թէ նա ինչպէս պէտք է գործադրէ և օգտագութիւն իր ընդունակութիւններից: Այդ խաղերն երեխային չեն դարձնում անխաղաղասէր, այլ սովորյնում են քննողութեան, խորհեցողութեան, մարզում են նրա աչքը, ձեռքը, սովորյնում են զգոյշ լինելուն արագաշարժութեանց, գործավարութեանց ժամանակ և ապրելու եղանակին:



ՊԱՐՏԷԶՊԱՆՈՒՀԻՔ.

Մանկական պարտէզի կառավարութիւնն աւելի լաւ է յանձնել վարժուհիներին, թէպէտ և Պէտալօցցին և ֆրէօբէլը ապացուցել են, որ վարժապետն կարող է կառավարել մանկական պարտէզը:

ԱՅՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՏԱՂԱՆԴԱ ՈՐ ՊէՏՔ Է ՈՒՆԵՆԱՆ ՊԱՐՏԷԶՊԱՆՈՒՀԻՔ.

Պարտէզպանուհի դառնալու համար պէտք է ունենալ ձիբք: Այդ ձիբքն կայ այն մարդու մէջ, որ հրապուրում է մանկական աշխարհով, որ ցանկութիւն և սէրունի երեխաներով զբաղուելու, խաղալ նրանց հետ, հաս-

կանալ նրանց ձգտումները և դրանց ուղղութիւն տալու սրի սիրտը բարախումէ երեխաների որտերի հետ և որը առանձին րնդունակութիւն ունի զարգացնել նրանց ազնիւ զգացմունքները:

ՊԱՐՏԷԶՊԱՆՈՒՀԻՄ ՊԵՏՔ Է ԿՐԹՈՒՑԾ ԼԻՆԵՆ:

Տիկին Վան—Քալքարը, որի կարծիքները յարգանքի արժանի են, պարտէզպանուհուց հետեւեալն է պահանջում:

Պարտէզպանուհուց պէտք է պահանջել, որ նա լինի պատկառելի, կրթուած, գիտուն, ունենայ լաւ ձեւեր, արդար գատողութիւն, սիրող սիրտ, լաւ գիտենայ իր մայրենի լեզուն, կարողանայ անսխալ գրել ու կարգալ, հետաքրքրութեամբ պատմել, գրութեան ձեւը լինի գեղեցիկ, կարողանայ Ֆրէօբէլի ձեռվ նկարել, ձեռքը վարժուած լինի զանազան գործողութեանց համար, ճանաչի զանազան առարկաների ձեւերը: Պէտք է այնքան մարմնամարզութիւն գիտենայ, ինչքան որ հարկաւոր է երեխաների մարզութիւնները զեկավարելու համար: Պէտք է բաւականին տեղեկութիւն ունենայ մարդկային մարմնի, նեարդերի և մկանների մասին, որքան որ հարկաւոր է առողջապահութիւնը հասկանալու համար, պէտք է լաւ ճանաչի, երկրաչափական արդուածները (ֆիգուրա): Բաւական է գիտենալ թուարանութեան չորս գործողութիւնը և կոտորակները, պէտք է գիտենալ ամենահսարակ և հեշտ ձեւերը և պարզ կերպով կարողանայ բացատրութիւն տալ երեխային թուերի մասին: Նրա ձայնը պէտք է լինի գուրեկան, ներդաշնակ: Նա պէտք է լաւ լսողութիւն ունենայ և կարողանայ ճիշդ երգել: Պէտք է լաւ ուսումնասիրի Ֆրէօբէլի մանկավարժական

եղանակը, որովհետեւ այդ եղանակը համապատասխանումէ կրթութեան բոլոր պահանջներին: Երբ գիտեն այդ մանկավարժական եղանակը, կարելի է պարտէզպանուհի գառնալ, բայց բաւական չէ, ինչպէս շատերը կարծում են, որ պարտէզպանուհին կարողանայ կատարել որոշ փոքրիկ ձեռագործներ: Պէտք է հիմնաւոր կերպով ուսումնասիրել Ֆրէօբէլի ուսման սգին և գաղափարները, որ կարողութիւն լինի երեխային ուղղութիւն տալ նրա գործունէութեանց մէջ: Պէտք է այդ բոլորը գիտենալ բայց և կարողանալ գործադրել:

Այս դրանք են ամենակարեւոր պահանջները և որքան մի պարտէզպանուհի աւելի գիտութիւն ունենայ, այնքան աւելի լայն գաղափար կունենայ այդ գործի մասին և աւելի լաւ կարող կը լինի զարգացնել երեխային և ուղղութիւն տալ: Պէտք է շատ գիտութիւն ունենալ և լաւ գիտենալ: Վերջապէս պէտք է կարողանալ այդ բոլորն իրագործել:

Ֆրէօբէլի կրթական եղանակն երեխային դրդում, ստիպում է կանոնաւոր գործունէութեան, արագութեամբ և հնարագիտութեամբ գործ կատարելու:

Այն ինչ որ յիշեցինք՝ հիմնուում է մի կարեւոր յատկութեան վրայ, և առանց այդ յատկութեան՝ պարտէզպանուհու ոչ տաղանդը, ոչ գիտութիւնը և ոչ էլ գործակատարութեան ընդունակութիւնը ոչ մի հետեւանք չեն ունենայ, այդ յատկութիւնն է լիովին և կատարեալ անձնուիրութիւնը:

ԵՐԵԽԱՅԻ ՍՅՆ ՊԻՏՈՅՔՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՊԵՏՔ Է ԲԱԽԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՏԱԼ, ԵՒ ՈՐՈՆՔ ՄԵԶ ՄԱՏՆԱՑՈՅՑ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԹԵ ԻՆՉՊէՍ ՊԵՏՔ Է ԿՐԹԵԼ.

Տիկին Վան—Քալքարն ասում է, ինչպէս բոյսին հար-

կաւոր է օդ, լոյս, ազատութիւն, որ կարողանայ տարածել իր ճիւղերը և բաւարար տարածութեամբ հող արմատների համար, նոյնպէս և երեխային է հարկաւոր օդ, լոյս, շարժողութիւններ իր մարմինն ամրացնելու համար; Կրթութեան մէջ զարգացումն անուանւում է երեխայի մարմնական, բարոյական և մտաւոր ոյժերի զարգացումն: Այդ զարգացումը կատարւում է խաղալով, շօշափելով, առարկաներ քննելով: Այդ կերպով է, որ երեխայի անդամներն ամրանում են, տպաւորութիւններն աւելի որոշ և հասկանալի են դառնում, նա սովորում է դիտել, զանազանել և գործել:

Երեխային չը պէտք է իր կամքին թողնել: Նա կարող է մարդ դառնալ յարաբերութիւններ ունենալով իր նըմանների հետ:

Պէտք է զեկավարել երեխայի ձգտումները դէպի շարժողութիւն և գործունէութիւն:

Ֆրէօբէլի կրթական եղանակը մեզ սովորցնում է թէ լո՞նչ սլէտք է անել, որ կարելի լինի օգնել և ուղղութիւն տալ երեխայի բնական պահանջներին: Ֆրէօբէլը մեզ ապացուցանում է, որ բնութիւնն երբէք չի գործում առանց նախագծի, նա մեզ ցոյց է տալիս իր օրէնքները և մեզ սովորցնում է նրանց հնազանդել: Մենք պէտք է հետեւենք բնութեան հրահանգին և երբէք չաշխատենք կատարել մեր քմահաճութիւնները: Ի նկատի առնելով բնական օրէնքների հոսանքը մարդու մէջ և ուսումնասիրելով նրա զանազան փոփոխութիւնները, հեշտութեամբ նկատում է, որ նա պիտոյքներ ունի: Երեխան սովորութիւն ունի յայտնել իր պիտոյքը. նա սիրում է սպառել իր ոյժերը, շարժողութիւններ անել և ամեն մի առարկայ շարժել իր տեղից: Դրանով երեխան փորձում

է անել այն, ինչ որ տեսել է իր շուրջը, այդ անուանումէ խաղալ, այդ տեսակ խաղերով արտայայտւում է նրա երեակայութիւնը և հնարագիտութեան ոյժը: Նա ընտրում է մի որեւէ առարկայ, որ ըստ իր ցանկութեան ձեւափոխի: Ֆրէօբէլն օգտագում է այդ բնական խաղերից և դրանց զարձնում է կրթական միջոց մատաղ հասակի համար:

ՄՏԱԿՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆ.

Առաջին տպաւորութիւններն անկասկած մեծ ազդեցութիւն ունեն երեխայի խելքի զարգացման վրայ: Փոքր երեխայի խելքը սկսում է քննել և գիւտեր անել, կազմում է իր համոր ուղիղ կամ սխալ, պարզ կամ անորոշ կարծիքներ. այդ կերպով կազմակերպում է իր համար մի փոքրիկ աշխարհ: Նրա գաղափարները կախուած են այն առարկաների պարզութիւնից, բազմամասնութիւնից, պայծառութիւնից կամ խառնակութիւնից, որոնք նրան շրջապատում են: Որպէս զի կարողանայ պարզ և որոշ գաղափար տալ առարկաների մասին՝ ֆրէօբէլն ընտրում է այնպիսի խաղալիկներ, որոնք ունեն որոշ և հասարակ ձեւեր ու պարզ գոյներ: Նա այդ տեսակ ընտրութիւնը կարեւոր է համարում, որովհետեւ բաղադրեալ խաղալիկները և գոյներն երեխան չի կարող ըմբռնել:

Օրէնքն այն է, որ ինչքան երեխան շատ խաղալիկներ ունի՝ այնքան աւելի պակաս է քննում: պակաս է խորհում ու մուածում դրանց մասին:

Շարժողութեան ցանկութիւնը, որ երեխաներն ունեն կարեւոր է համարում, որովհետեւ դրանով նրանք աշխատում են մարզել իրենց մկանները, սիրում են առարկաներ շօշափել և այդ կերպով աւելի զարգանում են:

Ֆրէօթէլը կամենում է, որ հէնց ծննդից սկսած երեխայի վրայ նայենք որպէս մի խելացի և զգայուն էակի վրայ, որ աշխատումէ յարաբերութիւն ունենալ արտաքին աշխարհի հետ, որպէս զի կարողանայ իր համար կազմել մի ներքին աշխարհ։ Փոքր երեխայի վրայ չը պէտք է միայն նայել որպէս մի նիւթական էակի վրայ (կտոր միս), որովհետեւ երբ նա սկսում է տպաւորութիւններ ստանալ, նա փորձումէ մտաւոր կեանք վարել և գաղափարներ կազմել։ Ախորժելի կամ անախորժ տպաւորութիւններն ստանումէ առարկաներից և այդ զգացմունքները նեարդերի և ուղեղի միջնորդութեամբ հաղորդումնեն հոգուն։

Մենք պէտք է գիմենք երեխայի զգայականութեանը, որ կարողանանք զարթեցնել նրա մէջ ուղիղ և պարզ գաղափարներ, պէտք է գէպքեր որոնենք, որ կարողանանք տալ նրան պարզ և որոշ տպաւորութիւններ նրան շրջապատող առարկաների մասին, որոնց նա հեշտութեամբ կարողանայ զանազանել միմեանցից։ Ֆրէօթէլը մեծ մտախոչութեամբ, երկար քննադատութիւններից և բազմազան փորձերից յետոյ ընտրեց երեխաների համար որպէս խաղալիկ գունդը, յետոյ գեղեցիկ բիւրեղների ձեւերը, զորօր. խորանարդը, հատուածակոզմն և այլն։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ.

Երեխան սկսում է մտածել, երբ նկատուում է, որ նա գործադրելով զանազան միջոցներ՝ աշխատում է հասնել իր որոշ նպատակին և երբ նրա գործերը ցոյց են տալիս, որ նա բաւական է, հասել է իր նպատակին։ Այդ ժամանակ էլ նա սկսում է զարգանալ որպէս բարոյականութեան և պատասխանատութեան ընդունակ էակ։

Այդ ժամանակն է, որ կրթողը պէտք է զգուշանայ տալ նրան սխալ կամ միմեանց հակառակ գաղափարներ, մասնաւանդ այն անձանց մասին, որոնք շրջապատում են երեխային։

Դեռ լեզուն բացուելուց շատ առաջ նա լաւ գիտէ որ ինքն իր տէրն է, նոյնպէս լաւ գիտէ որ լալով կամ ձըշալով ու կամակորութեամբ ումնից կարող է ստանալ իր ցանկացածը։ Այդ գիւտն անելուց յետոյ դժուար է լինում նրան կարգի բերելը։ Բայց երբ հէնց սկզբից նրան ապացուցանում են, որ իմաստութեամբ են վարում նրա հետ հէնց նրա բարօրութեան համար, առանց ուշադրութիւն դարձնելու նրա ձչոցի վրայ, նա յօժարութեամբ հնազանդումէ։

Կրթական գործում ամենամեծ դերը խաղումէ սովորութիւնը։ Առաջին տպաւորութիւններն ամենախիստ կերպով են ներգործում։ Երեխային այսօր չը պէտք է այնպիսի բանի սովորցնել, որից նրան վաղը պէտք է հրաժարել։ Կրթութեան գործում ընդունուած լաւ սովորութիւններն ամենալաւ նեցուկն են, իսկ վատ սովորութիւնները դաւնումեն ամենավտանգաւոր արգելք։ Երեխային չը պէտք է իր կամքին թողնել, որովհետեւ նա շատ անգամ լաւը վատից չի կարող զանազանել, նա կընտրէ վայրկենական զուարձութիւնը, որ կարող է վնասակար լինիլ նրա համար։ Նա կը դառնայ քմահանոյ, կը սկսի պահանջանձի հակառակն անել։ Նա այլ ևս չի հաւատայ, չի ունենայ շնորհակալութեան զգացմունք, կը լինի անհնազանդ, անվայել, կամակոր, անբաւական, նրա բնաւորութիւնը կը փշանայ, կապականուի։ Սովորցնելով հնազանդութեան՝ կը սովորի կարգի։ Նա կընկատի այն խնամքը, որ տանումեն նրա համար ընդհանրա-

պէս, ևս առաւել խաղերի ժամանակ կը նկատի, որ ամեն բան ունի իր ժամանակը, չափը և որոշ եղանակը։ Պէտք է ամենայն միջոց գործ դնել, որ երեխան ընդհանրապէս սիրի կարգը, որ ամենակարեւորն է բարոյական կարգի և կանոնաւոր կենցաղավարութեան համար։ Կանոնաւոր ուղղութեան վարժեցրած երեխաները սովորում են սիրել այն ինչ որ փորձել և սիրել են նրանց դեկալարները։ Այն ժամանակ երեխաների սէրն ընդունում է երախտագիտութեան ձև, նրանք լինում են ուշադիր և կարող են ցոյց տալ անձնուիրութեան գեղեցիկ օրինակներ։ Երեխաներն իրենց երջանիկ կը զգանք երբ կարողանան փորբ ինչ զրկողութեանց ենթարկել իրենց և փոքրիկ զոհաբերութիւններ անել իրենց զեկավարների համար։ Այդպէս է սկսում երեխայի բարոյական կեանքը, երբ նա յարաբերութիւն ունի ծնողների ուսուցիչների հետ, եթէ դրանք իրենց գործը կարողանում են յաջողութեամբ կատարել իրենց զաւակների, աշակերտների վերաբերութեամբ։

ԿՐՈՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ.

Պէտք է երեխային ներշնչել հաւատ, սէր, երախտագիտութեան զգացմունք։ Կրօնական գաղափարները լրացնում են բարոյական կեանքը։ Կրթութեան նպատակն է բարոյական և կրօնական զգացմունքներ տալ երեխային, այդ պատճառով էլ պէտք է գլխաւորապէս նրա հոգին կրթել կրօնական տեսակէտից, ներշնչել նրան Աստուծոյ խօսքը։

Խսկապէս չարութիւնը և բարութիւնը բնութիւնից է տրուած երեխային. նոյնպէս և գեղեցկութեան և տգեղութեան գաղափարները նրան անյայտ չեն։ Զարու-

թիւնը պէտք է հալածել նրանից ամենայն հաստատամութեամբ, պէտք է երեւան հանել և արմատախիլ անել Բարութիւնը պէտք է սիրով ինամել, խրախուսել, նաև վարձատրել։ Բարին կերջանկացնի երեխային, նա պէտք է սիրի և պտուի բարութիւնը, բարոյական գաղափարները։



ՖՐԵՕԲԵԼԻ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ.



Ֆրէօբէլը ցուցական եղանակի հնարողը չէ, այլ իր աշխատանքով ուժեղ կերպով գործակցեց այդ եղանակի զարգացմանը։ Այն գիտութիւնը, որ նա ձեռք բերեց երեխայի ընութեան վերաբերութեամբ, նրա ֆիզիքական, բնախօսական (ֆիզиологический), հոգեբանական գործողութեանց մասին, նրան տեղեկութիւններ տուեցին գտնել ամենալաւ, ամենահասարակ միջոցներ, որոնցով կարելի է զարգացնել երեխայի ընդունակութիւնները։ Ուսումնասիրելով այդ միջոցները, Ֆրէօբէլը յայտնի դարձաւ մանկավարժական գիտութեանց մէջ։

Եթէ Ռուսօն աշխատում էր մարդուն մօտեցնել բնութեանը, եթէ Պէտուալօցցին ճանաչեց երեխայի ֆիզիքական, մտաւոր և բարոյական ընդունակութիւններն, եթէ հայր Ժիրարը կրթութեանը տալիս էր բարոյական և կրօնական ուղղութիւն, Ֆրէօբէլն ուսումնասիրելով և ընդունելով այդ յայտնի մանկավարժների գիւտերն, սկսեց միջոցներ պտուել իր ցուցական եղանակը մշակե-

լու, որպէս զի երեխայի ուրախութիւնը, զուարձութիւնը, երջանկութիւնը խանգարուած չը լինեն:

Ֆրէօբէլը ի նկատի ունի երեխայի ճաշակը, գործունէութեան և շարժողութեան կարեորութիւնը, դաշտային զուարձութիւնները և խաղերը: Նա նայումէ երեխայի վրայ որպէս իր ուղեցոյցի վրայ, որ նրան ցոյց է տալիս այն ճանապարհը և միջոցները, որոնցով պէտք է զարգացնել նրան, հետեւելով այդ ուղեցոյցին՝ կորովամիտ մանկավարժն ընտրողութեամբ պատրաստեց երեխայի համար կրթիչ խաղալիկներ, հարկաւոր համարեց երգել, խաղալ նրա հետ: Նա զարթեցնումէ հարցեր և ինքը պատասխանումէ: Այդ կերպով քաղցրացնումէ երեխայի կեանքը. սովորցնումէ նրան բարեգործութեան և բարեպաշտութեան:

Ֆրէօբէլի մանկավարժութեան առաջին հասում դըրուած են Ֆրէօբէլեան ընծաները, որոնք կրթութեան ամենալաւ միջոցներն են, որոնցով երեխան ազատ գործումէ և իր ուղեցոյցի հետ աշխատելով զարգանումէ:

Երկրորդ հասում զետեղուած են այնպիսի աշխատութիւններ, որ երեխան ինքը պէտք է կատարէ: Այդ Ֆրէօբէլեան խաղերն են, որոնք սկզբում մի տեսակ գործնական կապ են կազմում I և II մասերի մէջ: Այս խաղերը կատարւումեն երգերով և գործողութիւններով, որոնց ժամանակ երեմն երեխան ուժգին կերպով մարզումէ իր մկանները: Այս խաղերի ժամանակ նա բնականապէս ստիպուած է լինում անգիր սովորել զանազան բանաստեղծութիւններ, երգերի եղանակներ և մարմնամարզութիւն անել:

Ֆրէօբէլի եղանակով նկարչութիւնն արտայայտումէ որպէս երեխայի անձնական աշխատանք, որ կաղապարեց

ընդօրինակութիւն չէ, այլ երեխան ինքն է ստեղծում: Նկարչութեան հետ կապւում է գրելը, որ տառերի և թուանշանների մի տեսակ նկարչութիւն է: Գրել կարգալը, հաշուելը, երաժշտութիւնը, թուաբանութիւնը մասնագիտական դասերին են պատկանում:

Երրորդ հասում զբաղւումէ Ֆրէօբէլեան զրուցատրութիւններով, որոնք այս մասումն են զետեղուած, որովհետեւ աւելի ուղղապէս են ցոյց տալիս կրթական հիմունքը և կազմում են որպէս յառաջաբան բոլոր աշխատանքների և Ֆրէօբէլեան ուսումունքի, առանձնապէս վերաբերում են կրթութեան մասնագիտական դասերին, զորօր. լեզուագիտութեան, հաշուետեսութեան, բնական պատզուածութեան, սրբազն պատմութեան, աշխարհագրութեան, բարոյականութեան և կրօնի դասերին:



ՖՐԷՕԲԷԼԵԱՆ ԸՆԾԱՆԵՐ.

Երեխոյի առաջին գործողութիւնները և առաջին վայրեւնները կազմունեցնելով, մակարդակների, մակարդակների, գծերի և կետերի վերաբերութեան մասին:

Ֆրէօբէլեան ընծաների գլխաւոր նպատակն է ճիշտատեղեկութիւններ տալ հիմնական արդուածների (ֆիտութիւնների, նիւթի և թուերի մասին, ի նկատի գուրա), գոյների, նիւթի և թուերի մասին, ի նկատի ունի նաև գործողութիւնները: Երբ երեխան զբաղւում ունի նաև գործողութիւններով, արտայայտումէ իր սեպհական գործ այդ ընծաներով, արտայայտումէ իր սեպհական գործունէութիւնը, նա անձամբ զբաղւուած է որպէս և նըկարչութեան ժամանակ, նա հնարումէ մի բան և հենց կարչութեան ժամանակ, սովորել զանազան հետեայդ է աշխատանքի սկզբնակէտը, որով նրա ոյժերը հետեապէտ է աշխատանքի սկզբնակէտը, որով նրա ոյժերը հետեապէտ է այդպէս է Ֆրէօբէլի կրթական եղանակի միջում: Այդպէս է Ֆրէօբէլի կրթական եղանակի միջում:

բունքը։ Այստեղ գործ ունենք ամենատարրական բաների հետ և երեխայի սկզբնական ճաշակի հետ։ Այդ բոլորից պէտք է այնպէս օգտուել, որ կարելի լինի երեխային գործի դնել։ Երեխան սկզբում խաղում է իր ոտերի, ձեռների հետ և մայրը խաղում է նրա հետ, որ զարգացնի նրա գործունէութիւնը, նրա ոյժերը։ Երեխան ղախում է իր շորերի, իր օրօրոցի վարագոյրի հետ և ամեն մի առարկայի հետ, որ նրա ձեռքն է ընկնում, ամեն առարկայ բռնում բարձրացնումէ, ճօճումէ, գրցումէ, նրան գուրեկան է մի առարկայ վայր ձգել, նրա ձայնը լսել, գիտել, այդ նրա զուարձութիւնն է։

Ի հարկ է խաղերը պէտք է համապատասխան լինեն նրա ոյժերին և զարգացմանը, այն ժամանակ ամեն մի շարժողութիւն նրան նոր տպաւորութիւն կը տայ և կը ստիպէ նրան նոր ջանք գործադրել։

Ֆրէօբէլի եղանակով առաջանում են աստիճանաբար։ Այդ հիման վրայ մենք ունենք վարժութիւնների զանազան կարգեր (սերիա), որոնք գործադրուում են ամենահասարակ առարկաների միջնորդութամբ։ Որոնք իրենց ձեւով տիեզերական առարկաների հիմքն են ձեւացնում և մաթեմատիքական գիտութիւնների սկզբնակէտն են կազմում։ Այդ հասարակ առարկաներն են ֆրէօբէլեան ընծաները։ Ընծաները կազմում են կարծր հարցներ, հաներոյներ, գիտեր ու հետեր։

Ֆրէօբէլեան 6 ընծաներն էլ կազմուած են կարծր մարմիններից։

ԿԱՐԾՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Առաջնա ընծան է նոյն

Թոփի տուած է երեխային որպէս առաջին ընծայ, որովհետեւ ներկայացնում է տիեզերքի սկզբնական ձեր,

որ կազմում է սկզբնակէտ բոլոր միւս ձեւերի։ Թոփի ամենահասարակ առարկան է, որ կարող է աւելի հասկանալի լինել երեխային, քան թէ միւս բոլոր առարկանները, որոնք շրջապատում են նրան։ Թոփի միջնորդութեամբ երեխային կը տրուի տեղեկութիւն արդուածների մասին, այնէ։

1. Նիւթի մասին,
2. Գոյների մասին (պարզ և բարդ),
3. Թոփի գրութեանց մասին, երբ նա կախ է արածթելից։
4. Շարժողութեանց մասին առհասարակ,
5. Շարժողութեանց մասին (ուղիղ կամ կոր գծերով):
6. Նիւթի մասին (կարծր թէ փափուկ),
7. Առաձգականութեան և կարծրութեան մասին։
8. Ծանրութեան և թեթեռութեան մասին։

Երեխաներին թոփեր բաժանելիս պէտքէ համապատասխան երգ երգուի, որ ցայց է տալիս թէ ինչ են անում։ Թոփերի բաժանելը պէտք է կատարուի կարգով, կանոնով և ներգաշնակութեամբ։

Ֆրէօբէլը միաժամանակ երեխայի ձեռքը չի տալիս զանազան տեսակ առարկաներ, այլ միայն մի տեսակ, բայց զանազան որպիսութեանց, զոր օր. այլ և այլ գոյների թոփեր։

Երեխով ընծան է գնդակը, խորանարդը և գլանը ի միասին առած։

Առարկաներն ըմբռնելու համար պէտք է համեմատել նրանց միւս առարկաների հետ։ Այդ համեմատութիւնը հեշտացնու համար ֆրէօբէլը միշտ ներկայացնում է երկու ներհակ առարկաներ, զոր օր. խորանարդը և գնդակը։ Առաջինը որոշում է նրանով, որ ունի մակերևոյթը,

եղբներ, անկիւններ և կայուն է, այն ինչ գնդակը ներկայացնում է միութիւն, ունի միշտ և ամեն տեղ նոյն ձեզ և շարժողութեան ներկայացուցիչն է: Այս երկու կարծր մարմինների միջինը (հաշտարարը) գլանն է: Սա ունի մի քանի հատկութիւններ, որոնք կան թէ խորանարդում և թէ գնդակում: Գլանն ունի երկու ուղիղ մակերեսոյթ, ինչպէս և խորանարդը, մի կլոր մակերեսոյթ էլ ունի որ յատուկ է գնդակին, բայց չունի խորանարդի նման եղբներ, ոչ էլ սնկիւններ: Որոշ մոքով, և որպէս միջանկեալ մարմին կարելի է համարել կոնը, որ ունի բնդ ամենն երկու մակերեսոյթ, որոնցից մինը ուղիղ է (հիմքը), իսկ միւսը գլանաձև է (կոր մակերեսոյթ): Եռակողմ բուրգն ունի չորս մակերեսոյթ: Այս բուրգը, որ ունի երեք կողք աւելի է մօտենում կոնին, ինչպէս և խորանարդը մօտենում է գնդին, եթէ կողքերը և անկիւնները տաշեն:

Այդ ընծաները կամ դրանց նմանները կարելի է շինել նաև զանազան գունաւոր առարկաներից և ցոյց տալ երեխաներին:

Երրրորդ ընծան է խորանարդը, որ բաժանուած է 8 փոկորիկ խորանարդների:

Երկրորդ ընծան ցոյց տուեց երեխային կարծր մարմինների զանազան ձեւեր, իսկ երրորդ ընծան ցոյց է տալիս միայն խորանարդը, որ բաժանուած է փոքրիկ խորանարդների: Խորանարդը գործադրուում է առաջնորդելու երեխային յայտնիից դէպի անյայտը, ծանօթից անծանօթը: Այս ընծայով կարելի է երեխային գաղափար տալ վերլուծութեան (բաժանման) մասին, առարկաների քակման մասին հանելով կամ բաժանելով: Պէտք է ցոյց տալ հանման և բաժանման նմանութիւնները,

մասերի թիւը, յետոյ նորից միաւորել այդ մասերը, որ մի գաղափար ստացուի կանոնաւոր յօրինուածութեան մասին, վերլուծութեան և գումարման մասին և աւելի մեծ երեխանների համար բազմապատկութեան մասին: Դրանով կը տրուի բացադրութիւն տարածութեան, խորութեան, հաստութեան, լայնութեան մասին: Նպատակայարմար է սովորական չափերի մասին տեղեկութիւն տալ արշինով կամ աւելի լաւ է՝ մէտրով: Մի փոքրիկ կշեռք իր կշռաքարերով տեղեկութիւն կը տայ ծանրութեան մասին: Մեծ տարածութեանց մասին գաղափար տալու համար լաւ կը լինի փոքրիկ ճանապարհորդութիւններ անել:

Երեխանները ցանկութիւն ունեն քանդել, ձեւափոխել, նորից շինել, այդ պատճառով էլ այս ընծան նրանց բաւականութիւն կը տայ և հետաքրքիր կը լինի նրանց համար:

Այն արդուածները (փիգուրա), որ կարելի է կազմել երրորդ ընծայից, նրէօքէլլ բաժանուած է հետեւեալ երեք կարգերի:

1. Մաթեմատիքական արդուածներ, որոնք վերաբերում են մեծութեանը և թուերին:

2. Գեղարուեստական արդուածներ, որոնք կանոնաւոր են կազմուած և գեղեցկութեանն են վերաբերում:

3. Սովորական արդուածներ, որոնք վերաբերում են զորոր կարասիքին, շինութիւններին և այլն:

Զրորդ ընծան կայացած է 8 աղիւսից (հատուածակողմեր):

Որոշել որա յարաբերութիւնը և զանազանութիւնն առաջընթաց ընծաների հետ:

Հինգրորդ ընծան բաժանուած է 3 կարգի և բաղկացիւթիւն բաժանուածութեան (բաժանման) մասին, առարկաների քակման մասին հանելով կամ բաժանելով: Պէտք երկու մասի և Յ-ն չորս մասի, մնում են 21 ամբողջ

խորանաբդներ։ Ուրեմն կան 6 հատ կէս խորանաբդներ, 12 քառորդ խորանաբդներ, այս պէս ընդամենն անում է 39 կտոր։ Այս ընծայով շինում են արդուածներ և զանազան շինութիւններ ու լուծում են նաև թուարանական խնդիրներ։

ԱԵՅԵՐԻՐԴ ընծան իր ամբողջութեամբ որպէս խորանաբդ, հաւասար է հինգերորդ ընծային, բայց բաղկացած է 27 աղիւսներից, որոնցից 3-ը (իւրաքանչիւրը) բաժանուած են 2 սիւնի, 6-ը (իւրաքանչիւրը) լայնութեան համաձայն կիսած են, երկու մասերի և կազմում են քառակուսի աղիւսներ։ Մնացած 18 երկարաւուն աղիւսները մնում են ամբողջ։

Ուրեմն վեցերորդ ընծան բաղկացած է 6 սիւնից,

12 քառակուսի աղիւսներից,

18 երկարաւուն աղիւսներից,

իւրաքանչիւր երկու սիւնը միասին կազմում են մէկ երկարաւուն աղիւս։ Այս ընծան գործադրում է որպէս հինգերորդ ընծան և համեմատում են մասերը միմեանց հետ։

ՄԱԿԵՐԵՒՈՅԹՆԵՐ

ՎԵՐԺՆԵՆՔ միայն գնդակի, գլանի և խորանաբդի մակերևոյթները և միայն դրանցով գբաղուենք։

Քառակուսի ճակերեայն։

1. Բացադրել թէ ինչ է քառակուսին և ցոյց տալ։ Քառակուսին համեմատել սովորական զանազան առարկաների ձևերի հետ։ Քառակուսու եզերքը։ Եզերքի ուղաձիգ և հորիզոնական դրութիւնը։ Քառակուսու անկիւնները և դրանց տեսակները։

2. Ուղանկիւն քառանկիւնին ծագում է աղիւսից։ Ցոյց

տալ կողքերը, անկիւնները, կողքերի զուգաչափութիւնը (սիմէտրիա)։

3. Եռանկիւնին և նրա տեսակները։ Եռանկիւնին, քառանկիւնին և հաւասարասրունք եռանկիւնին։ Եթէ քառակուսին բաժանենք անկիւնագծով (դիագոնալ) 2 մասի՝ կըստացուի երկու մակերեայթ, այն է՝ երկու ուղանկիւն եռանկիւնիք, որոնք կըլինեն հաւասարասրունք եռանկիւնիք։

Անկիւնների թիւը, տեսակը, կողերի թիւը։ Սուր անկիւններ։ Հաւասարակող եռանկիւնի։ Համեմատել սորան միւս եռանկիւնների հետ։ Հաւասարութիւն սրա կողքերի և անկիւնների։

Երկու հաւասարակող եռանկիւնի միացրած մի կողքով կազմում են շեղանկիւն (րօմք)։ Բացադրել դրա ձևը և անկիւնները։ Դնելով երեք հաւասարակող եռանկիւնիք միմեանց կողքի՝ կը կազմուի սեղան (տրապէզ)։

Տրապէզի զուգահեռական և ոչ զուգահեռական կողքերը։

Չորս հաւասարակող եռանկիւնի միացրած մի կողքով կը կազմեն զուգահեռական ձև (պարալէլօգրամ)։ Դրա անկիւնները, կողքերը։

Բութ եռանկիւնին համեմատել միւս եռանկիւնների հետ։ Դրանց նմանութիւնը և զանազանութիւնը։

Ուղանկիւն եռանկիւնին համեմատել նախընթաց եռանկիւնների հետ։ Ուղանկիւն քառանկիւնի շինել։ Ցոյց տալ դրա անհաւասար կողքերը։

Ցոյց տալ այն գեղարուէստական, մաթէմատիքական և սովորական արդուածները, որ կարելի է կազմել վերոյիշեալ մակերեայթներից։

4. Մակերեայթների ուսումնասիրութիւնը ֆրէօբէլի եղանակով այն է ծալելը։

Ցալելն ուղղապէս կապուած է մակերեսոյթների հետ։ Մալելը մարզում է աչքը և ձեռքը, պահանջում է ուշադրութիւն, համբերութիւն, ճշտութիւն։ Աս մի զբաղմունք է երեխայի համար։ Թղթից կարելի է ծալել երկրաչափական զանազան արդուածներ և եթէ թղթի երեսները զանազան գոյների լինեն, կարելի է ծալելով հնարել զանազան գեղարուստական արդուածներ։ Թուղթը ծալելով ծանօթացնում են երեխային երկրաչափական հարթ արդուածների հետ։

Կարել և կաղնել։

Կտրելը կայանում է նրանում, որ բութ ծայրեր ունեցող մկրատով գոյնգգոյն թղթերից կտրում են երկրաչափական գլխաւոր ձեւերը։ Ստացած մակերեսոյթները պէտք է դասաւորել գեղեցիկ կերպով, միմեանց հետ յարմարացնել և կպցնել մի առանձին թղթի վրայ, որով ստացւում է գեղարուստական սիրուն և մողայիքական արդուածներ։

Գ Ծ Ե Ր

1. Զողիկներ (batonnets)

Ֆրէօբէլն ուղղում է մեր միտքը նիւթական երկրից գէպի վերացականը։ Այդ կերպով մենք խորանարդից անցանք գէպի մակերեսոյթները, այժմ ցոյց է տալիս մակերեսոյթի եղերքը որպէս գծեր ձողիկների միջոցաւ։

Որպէս նախապատրութիւն նկարչութիւն սովորելու համար, նա գործադրում է ձողիկներ։ Երեխային շինել է տալիս բոլոր արդուածները 3, 4, 5, 6 ձողիկներով։

Այդ կերպով ուղիղ գծերի համար երեխայի մէջ կը կազմակերպուի այն գաղափարը, որ կարենը է նկարչու-

թեան համար։ Նոյն կերպով և նոյն նպատակի համար օղակների միջնորդութեամբ կը ճանաչեն կոր գծերը։

Զողիկների գործածութիւնը հաշուի համար։

2. Կաւարներ (¹) (lattes)։ Կաւարները նոյնպէս ներկայացնում են գծեր և ուղղութիւն, որ իւրաքանչիւր ուղիղ գիծ կարող է ընդունել տարածութեան մէջ և անկիւն կազմել։ Կաւարի գիւրակորութիւնը թոյլ է տալիս զանազան վարժութիւններ անել զոր օր. Հիւսել։ որ հմտութեան և ճշտութեան է սովորցնում։

Զը պէտքէ մոռանալ, որ կաւարներով էլ կարելի է հաշուել սովորցնել։

3. Հիւսուանք (Tressage)։ Հիւսելու հետ կցւում՝ են նսե գծերը, գոյները, որոնց զսւգաւորութիւնը երկերկու կամ երեք երեք և այլն գեղեցկացնում է հիւսուանքը և լաւ տպաւորութիւն անում։ Այս գէպքում ձեռքի հմտութիւնը, աչքով տեսնելը, ճաշակով ընտրելը, նկար հնարելը զարգացնում է երեխային և մեծ զուարձութիւն է պատճառում։ Այս աշխատանքը մեծ նշանակութիւն ունի հետեւեալ գործողութեանց համար, որ երեխան յետոյ պէտք է կատարէ ասեղով, մատիտով և դրանցով կարող է նախագծեր պատրաստել իր գործունէութեան համար։ Դա միջոց կը տայ ասել երեխաներին՝ թէ շուտով գուք կը կարողանաք շատ գեղեցիկ և օգտագութաներ շինել, ինչպէս մի լաւ արհեստաւոր և ուրախացնել հայրիկին և մայրիկին։

4. Օղակներ։ Զը նոյնպէս մի գիծ է՝ միայն թէ կոր գիծ է, որ մեծ գեր է խաղում նկարչութեան մէջ։ Յոյց տալ ուղիղ և կոր գծերի զանազանութիւնը։ Համեմատել օղը, գունդը, գլանը քառակուսու հետ։ Յոյց տալ օղի

¹⁾ Փոքրիկ ճկում քանոներ։

կենտրոնը և այն տարածութիւնը, որ կայ կենտրոնից
մինչև շրջապատք։ Բաժանել օղը։ Թելով կամ թղթով
շրջան քաշել կենտրոնից։

5. Զառածէր (էլիպս)։ Նկարել մի ձուածիր։ Ցոյց տալ
ձուածիրի և շրջանի զանազանութիւնը։

Ա Է Տ Ե Ր

1. Կէտերի հետ պէտք է ծանօթացնել գծերից յետոյ։
Ֆրէօբէլի եղանակին համաձայն կէտը ներկայացնում է
մերաղը⁴ (ժըտոն), ուլունքը, կոճակը, ասեղի ծակածը։
Մերաղով կարելի է շատ արդուածներ կազմել։

Գոյնզգոյն մերաղներ։ Գոյներ զանազաններ։ Մերաղնե-
րով կտրելի է ուսումնասիրել համաչափութիւնը (սիմէտրիա)
նաև թուաբանական հաշիւներ անել։

Գունաւոր ուլունքներով կարելի է թուաբանական զա-
նազան խնդիրներ լուծել, կատարել գումարումն, հա-
նումն, բազմապատկումն, բաժանումն։

2. Ծակունքը (Piquage) կայանում է նրանում, որ թղթի
վրայ քաշած գծերն ասեղով ծակում են և վրան կա-
րում են։ Այդ գործողութիւնը նկարչութեան համար նշա-
նակութիւն ունի։

Ոչքի և ձեռքի ճշտութիւն։

Զուգահեռականութիւն ուղիղ և կոր գծերի։

Գիծը ներկայացնել կէտերը միեանց մօտ դնելով։

3. Ասեղնագործութիւնը կարի հիմքն է։ Երեխան պէտք
է սովորի թել ու ասեղով միացնել մասերը։ Կարել կը
նշանակէ միաւորել, յօրինել, որ հակագիր է վերլուծման
կամ քանդելուն։

Այս վարժութիւնները և պարապմունքը, որ զանազան

⁴⁾ 15 կոպէկանոցի չափով կլոր ու տափարակ իրեր վայսեց կամ ստուգա-
բղթից շնած։

կողմանէ բաւականին զարգացնում են երեխային միայն
նախապատրաստութիւններ են գործնական վարժութիւն-
ների համար։ Դրանք ծառայում են որպէս հիմք նկար-
չութեան, հաշուետեսութեան և այնպիսի զրուցատրու-
թիւնների սկզբնակէտն են, որոնք հետզհետէ զարգա-
ցնում են երեխային։

Երեխայի լեզուն մարզելու, խօսել ոսկորցնելու համար
տալիս են նրան առարկաներ և պահանջում են նրանից
նկարագրել այդ առարկաները։

Նկարչութեամբ սովորցնում են արդուածներ, իրեր
ներկայացնել թղթի վրայ։

Լեզուի ուսումնասիրութիւնը սկսւում է միայն բա-
նաստեղծութեան միջնորդութեամբ, այդ նպատակավ սո-
վորում են բանաստեղծութիւններ, երգեր, որ գործա-
գրում են խաղերի ժամանակ, որոնց մասին արգելն
խօսուել է։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երեք երգերի կրթական նշանակութիւնը և բնաւո-
րութեան վրայ ներգործութիւնը շատ մեծ է։

Երգելիս ոչ միայն զարգանում է կուրծքը, լսողու-
թիւնը, ձայնը, այլ և զարգանում են հոգեկան շարժում-
ները, զգացմունքները։

Մի հասարակ, բայց գեղեցիկ եղանակ ուրախացնում է
երեխային, ներշնչում է նրան բանաստեղծական սգի,
ազնուացնում է նրան։

Երգեցողութեան վրայ մեծ ուշագրութիւն պէտք է
գալը ձնենք, որովհետեւ մանկական պարտէզում երգը մեծ
գեր է խաղում։

Մարդուս ականջը լսում է ամեն մի ձայն, բայց հեշ-
տութեամբ լսում, լմբունում է երաժշտական հնչիւնները։

Հեշտութեամբ որոշում է մարդկային ձայնի երաժշտական ելեկջները, նոյնպէս ըմբռնում է այն տարբերութիւնները, որոնք կան ձայնի ամբողջ և կէս աստիճաններում: Երեխայի լսողութիւնը շատ վաղ է կազմակերպում և կանոնաւոր ձայնի սովորում: աւելի վաղ, քան երեխան կարողանում է իր ձայնը երգեցողութեան յարմարեցնել: Լաւ կը լինի, որ երեխային թոյլ չըտան լսել անկանոն, վատ երաժշտութիւն, երգեցողութիւն, որ դայակները սխալ կատարում են երեխային զբաղեցնելու համար, որովհետեւ երեխաները կանոնաւոր և անկանոն ձայները կը խառնեն միմեանց հետ: Երբեմն ասում են, թէ երեխայի լսողութիւնը ընդունակ չէ կանոնաւոր ձայներ ըմբռնելու: Ի հարկէ այդպէս էլ պէտք է լինի, որովհետեւ նրա լսողութիւնն ուղղելու տեղ աղաւաղում են: Երեխայի ձայնը պէտք է զգուշութեամբ կրթել: Երաժշտութեան մի փորձուած վարժուհի, ձայնի վերաբերութեամբ հետեւեալ խորհուրդներն է տալիս.—Երբէք չը պէտք է թոյլ տալ, որ երեխան դժուար հնչիւն հանի, եթէ նրա ձայնի գործարանը դեռ զարգացած չէ: Զը պէտք է երգէ ոչ շատ բարձր, ոչ շատ ցածր ձայնով: Զը պէտք է թոյլ տալ երգեցողութեան ժամանակ բզաւել, առհասարակ ձայնը յոգնեցնել, մանաւանդ՝ երբ մարմնամարզութեան ժամանակ են երգում, պէտք է զգոյշ և հանդարտ շարժողութիւններ անել տալ, որ ձայնը չը հոգնի: Եթէ երեխան ունի հարբուխ կամ հազ և կամ նրա ձայնը խզուած է՝ պէտք է երգելն արգելել: Կարեւոր է նկատել ևս, որ երգելիս երեխայի բերանը պէտք ունենայ կանգնած Օ-ի և ոչ պարկած Շ-ի ձեւ, որ շատ կարեւոր է երաժշտական տեսակետից, որով շատ սխալների և վատ սովորութիւնների առաջը կառնուի: Վ.եր-

ջապէս հարկաւոր է յիշել, որ երաժշտական չափի բախումները պէտք է տալ մի նշանով և ոչ թէ սեղանին փայտով խփելով կամ ոտով յատակին զարկելով: Կուշտ փորով երգելն արգելուած է, որովհետեւ շնչառութիւնն ընդհատում է, այլ հարկաւոր է ճաշելուց յետոյ առնուազն Յ ժամ անցնի: Երբ օդը խոնաւ է, բացօդեայ չերգել:

Երաժշտութեան կրթական ազդեցութիւնը մեծ է: Երաժշտութիւնն ուղղապէս ներգործում է երեխայի զգացմունքների վրայ և գործադրւում է նրա հոգեկան ոյժերը զարգացնելու, ազնուացնելու համար: Վ.երոյիշեալից երեւում է երաժշտութեան կրթական նպատակը, ուրեմն պէտք է ընտրել գեղեցիկ ևնպատակայարմար երգեր, որ զբաղեցնեն, հրապուրեն, ուրախացնեն երեխային: Պէտք է այդ երգերի սահմանը որոշել, որովհետեւ կան վատ երգեր և վատ եղանակներ, որոնք կարող են վատ ներգործութիւնն ունենալ երեխայի զգացմունքների և բարոյականութեան վրայ: Պէտք է աշխատել, որ երեխան երաժշտութեան միջնորդութեամբ էլ սկսէ սիրել ինչ որ լաւ է, բարի է, ազնիւ է:

Երգի բանաստեղծական ոգին մեծ նշանակութիւն ունի կրթութեան գործում: Դնելով երեխային բնութեան մէջ, յարուցանում ենք նրանում, ինչպէս մի թռչնի մէջ, երգեցողութեան ցանկութիւնը: Նա կերգէ այն երգը, որ նորան ուրախութիւն է պատճառում: Նա ուրախութեամբ կերգէ գեղեցիկ եղանակի, ծաղիկների, անասունների, երեխաների, աշխատանքի, առաքինութեան, երջանկութեան, իր ծնողների, բարերարների և Ստեղծողի մասին: Երեխաներն այդ ուղղութեամբ մեծանալով կունենան խղճմուանք, սէր գէպի բարին, սիրալիր բնաւորութիւն, կը լինեն երջանիկ: Առհասարակ այդ կերպով եր-

գելու և բանաստեղծութեան շնորհիւ առաջ կը գան
ազնիւ զգացմունքներ և կը կազմակերպուի երեխաների
անձնաւորութիւնն, իսկ հնարագիտական ոգին նբանցում
հետզհետ է երեան կը գայ:

ՖՐԵՇԵԼԻ ԽԱՂԵՐԸ

Խաղալը երեխայի համար մի բնական ցանկութիւն է:
Խաղալիս նա ազատ ընթացք է տալիս իր զարգացող
ոյժերին, ընդունակութիւններին, որոնք հետզհետէ
երեան են գալիս և որոշում են, թէ այդ երեխան ինչ-
պէս մարդ պէտք է դառնայ: Պէտք է օգտուել երեխայի
այդ ձգտումներից և ծառայեցնել դրանց թէ երեխայի
կրթութեան և թէ նրա մտաւոր ոյժերի զարգացման
համար: Խմբովին խաղերի ժամանակ յայտնում է երե-
խայի բնաւորութիւնը, քաղաքացիական առաքինութիւնը,
որոնք իրենց համար գործադրութիւն են գտնում: Այդ
կերպով նա խաղերից անցնում է գէպի մտաւոր աշխա-
տանքը և ստանում է հոգեկան ու մտաւոր բաւակա-
նութիւն ամբողջ կեանքի ընթացքում:

ԽԱՂԵՐԸ և ԱՇԽԱՆՔԸ

Եթէ խաղին տան գեղարուստական ձեւ ու ճաշակ, պէտք
է աշխատանք գործադրուի: Խաղը պահանջում է խիստ կար-
գապահութիւն (հրահանգ), որ ունի նաև իր հրապոյրքը:
Հարկաւոր ջանքը թեթեանում է, եթէ զբաղմունքին տա-
լիս են գեղարուստական բնաւորութիւն, միւնոյն ժա-
մանակ պէտք է ի նկատի ունենալ երեխայի ֆիզիքական
և մտաւոր գործունէութիւնը, որոնց բաւարարութիւն է
տրուելու: Զէ կարելի ասել, որ այդ ջանքը կը լինի մի
գուարճութիւն, թէ պէտ և շատերի համար դա մի կո-

չում է, բայց եթէ այդ ջանքի վրայ նայենք լուրջ կեր-
պով, կըտեսնենք որ դա ունի մի տեսակ հրապոյրք, որ
թեթեացնում է աշխատանքը և մեծ զուարճութիւն
պատճառելով, դառնում է բարերարութիւն: Վերջապէս
պէտք է նկատել, որ Յ տարր կազմում են խմբական խա-
ղերի հիմքն, այն է բանաստեղծութիւնը, երգը և գոր-
ծողութիւնը:

Խմբական գործողութիւններից առաջ, այս տարրերից
ամեն մէկը պէտք է առանձին մշակուի: Առաջ պէտք է
երեխային ծանօթացնել բանաստեղծութեան հետ, որ
գործողութեան հիմքն է, յետոյ սովորցնել երգը, որ
գործողութեան հետ միասին պէտք է ընթանայ, որ և
տալիս է գործողութեանը դրաւիչ բնաւորութիւն: Վեր-
ջապէս պէտք է երեխային պատրաստել խաղի համար,
տալով նրան բացադրութիւն խաղի գլխաւոր մտքի վե-
րաբերութեամբ:

ՆԱՐԴՈՒԹԻՒՆԸ (ՖՐԵՇԵԼԻ ԵՂՋԱԿՈՎ)

Նկարչութիւնը մեծ նշանակութիւն և կարեւորութիւն
ունի Ֆրէօբէլի վարժութեանց մէջ:

Այն երեխան, որ բնական ձիրք ունի նմանեցնելու և
հնարելու, կարող է իր այդ նկարչական ձգտումներին
և ցանկութիւններին ազատ ընթացք տալ: Երեխան սի-
րում է գծեր քաշել և զանազան արդուածներ նկարել
թղթի, աւազի, պատերի վրայ: Եթէ նրա ձեռքն ընկնի
մատիտ կամ կաւիճ, ամեն տեղ կը գտնէք նրա նկարները,
կարտայայտեն երեխայի նկարչական ճաշակը: Այդ
որոնք կարտայայտեն տրամադրութիւնից պէտք է օգտուել երե-
խանկագին տրամադրութիւնից պէտք է օգտուել երե-
խայի աչքը զարգացնելու համար, նրա ձեռքը վարժուցնե-
լու համար, նրա ուշադրութիւնը զանազան ձերի վրայ

գարձնելու համար, նրա երեակայութիւնը զարգացնելու և ուղղութիւն տալու զանազան ստեղծագործութեանց համար։ Այդ կերպով շուտ կը զարգանայ երեխայի ճաշակը դէպի գեղեցիկը։ Զը պէտք է մոռանալ հասկացնել ու երեխային, որ այդ նմանեցնելն ու հնարագիտութիւնը օգտաւէտ են լինելու նրա համար, ինչով էլ որ նա պարապելու լինիւ Պէտք է նա զգայ այն կապը, որ կայ արտաքին գեղեցկութեան և ձեւերի ու վարքի գեղեցկութեան մէջ։ Գեղեցիկն առաջացնում է բարութիւն, որ իսկապէս բարոյական գեղեցկութիւն է։

Ուրեմն նկարչութիւնն ունի կրթական մեծ նշանակութիւն, այդ պատճառով էլ պէտք է խնամել այդ գեղարուեստը, որ նա ունենայ երեխայի վրայ իր բարեբեր ազդեցութիւնը։

Անկարելի է չընկատել երեխայի մէջ այն թերութիւնը, որ կարող է առաջանալ, երբ այդ գեղարուեստն անհոգութեամբ են սովորյննում։

Մանկական պարտէզում նկարչութիւնը սովորցնում են երկու զանազան եղանակով։

1. Աստիճանաբար նկարչութիւն ուղիղ գծերով (մէկ կէտից քաշել մինչև միւս կէտը մեծ կամ փոքր գծեր)։

2. Նկարչութիւնը ըստ ցանկութեան և ազատ։ *) ըստ ցանկութեան՝ միայն ուղիղ գծերով և ամենայն ուղղութեամբ, միշտ համաչափ։ **) նոյնը կատարել կոր գծերով. ֆ) բնութիւնից նկարել տեսարաններ և այլն. Դ) բնութիւնից նկարել տերեւներ, մրգեր, բոյսեր, նա և ծառեր, անասուններ, վերջապէս պէրսպէքտիւով (հեռանկարական) տեսարաններ։ Հետզիետէ փորձում են այդ նկարները գոյներով ներկել։

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ,

Զրուցատրութիւնները զարգացնում են մոռաւոր ընդունակութիւնները և սիրտը (զգացմունքները) և մանկական պարտէզում ունեն երենց կարեսութիւնը։

Երեխան ամեն բանով հետաքրքրում է։ Իր շրջապատողներին տալիս է անթիւ հարցեր։ Ինչպէս չը պատասխանես նրան, երբ նա մի անհագ ցանկութիւն ունի գիտենալ ամեն բան, որ ապացոյց է նրա սկսող զարգացման։ Զրուցատրութիւնները տալիս են նրան տեղեկութիւններ։ Երեխայի բարոյական կեանքն այդ զրոյցներով զարգանում է, նրանում կազմակերպում է առողջ գատողութիւն, նոյնպէս կատարելագործում են նրա կրօնական համոզմունքները։ Ինչ զրոյցներ էլ որ ունեն երեխայի հետ, պէտք է զգոյշ լինել, որ նրան սխալ գաղափարներ չըտան։ Այդ գաղափարներն պէտք է լինեն որքան կարելի է ճիշտ։

Առարկայի մասին որ խօսում են երեխայի հետ զրոյցների ժամանակ, պէտք է երեխան տեսնի, ճանաչէ այդ առարկաները, դրանց ձեւերը, գոյները և ձեւափոխութիւնները, պէտք է առարկաները շօշափէ, ձայնը լսի, եթէ հարկաւոր և կարելի է՝ համը տեսնի, պէտք է առարկայի մասերը քանդէ, տեսնի կազմուածքը։ Հարկաւոր գէպօւմ պէտք է մանր առարկաները ցոյց տալ խոշորացոյցով։ Երբեմն պէտք է ցոյց տալ առարկաների զանազանութիւնները, զոր օր. ջուրը՝ որ հեղուկ է՝ պէտք է ցոյց տալ որպէս շոգի և կարծր մարմին, մի խօսքով պէտք է տալ ճիշտ տեղեկութիւններ և ամեն բան սովորցնել ցոյց տալով ու այդ կերպով նրան ընդունակ գարձնել հետազոտելու, որով նրան կը տրուի զարգացման հնարաւորութիւն։ Թէ ինչ տեսակ զրոյցներով պէտք

է երեխային սովորցնել՝ երեխան ինքը ցոյց կը տայ: Վարժուհու պարտքն է նկատել, թէ իւրաքանչիւր երեխային ինչ է հետաքրքրում:

Ամենից առաջ երեխային զբաղեցնում են տնային առարկաները, որոնք նրա աչքին են ընկնում կամ նրա ձեռքն են ընկնում, որոնց մասին էլ նա բացադրութիւններ է պահանջում, զոր օր. հարցնում է ինչից և ինչով են շինում թուղթը, ապակին կամ այսինչ բանը ո՞րտեղ են շինում: Իվ է շինել այս ինչ առարկան և այլն: Այդ կերպով մի առարկայ կարող է հետաքրքիր, կրթիչ խօսակցութեան նիւթ դառնալ երեխայի համար: Բայց կարող են ասել թէ ով որ կամենում է երեխայի ամեն մի հարցին պատասխանել, պէտք է շարունակ պարապէ զանազան գիտութիւններով և շատ անգամ էլ երեխաները պէտք է զըրկուեն ճիշտ տեղեկութիւններ ստանալուց: Ասում են, որ մի երեխայ կարող է այնքան և այնպիսի հարցեր տալ, որ 10 գիտնական չեն կարող նրա հետաքրքրութիւնը յագեցնել: Բայց ոչ, այդ սխալ է. մի փորձուած վարժուհի միշտ կարող է երեխայի հետաքրքրութեանը բաւականութիւն տալ, որովհետեւ երեխան պահանջում է ոչ խոր, այլ ընդհանուր, նրան մատչելի, բայց ճիշտ տեղեկութիւններ, որ կարողանայ լուսաւորել իր մոտաւոր հորիզոնը:

Բոյսերը, ծաղիկները, մրգերը, դրանց գործածութիւնը, անասունները և գրանց կեանքը, բնական երեսյթները հետաքրքրում են երեխաներին և տալիս են զրոյցների մեծ պաշար: Պէտք է բնական առարկաներին տալ առաջին տեղը, որովհետեւ գրանց կիմնական որպիսութիւնները յետոյ կը ծագաւայեն որպէս դասաւորութեան (սիստէմա) հիմք և երեխաները կը կարողանան սեփականացնել այն ինչ որ հետաքրքիր և կարեռ է: Այդ կերպով երեխաները կը սովորեն հետազոտութիւններ անել:

Այն փոքրիկ ճանապարհորդութիւնները, որ պէտք է անել երեխաների հետ կամ որ նրանք առաջուց արել են, կը տան զրոյցների համար շատ նիւթ ոչ միայն բնական գիտութիւնների, այլ աշխարհագրութեան, տիեզերագրութեան վերաբերութեամբ: Հազար և մի բան կայ ասելու արեգակի, լուսնի, աստղերի, գիշեր ու ցերեկուայ մասին, բյուերի, քարերի, մարդկանց, մերենաների, գործիքների մասին, որոնք հետաքրքրում են երեխային: Զըկայ մի առանձին առարկայ, որ միայն կարողանար մի բաւարար նիւթ տալ այդ զրոյցների համար: Հարկաւոր է երեխային տեղեկութիւններ տալ ամեն բանի մասին, միայն թէ պէտք է այդ տեղեկութիւնների ձեւը յարմարեցրած և պարզ լինի նրա հասկացողութեան համար: Պէտք է ասել, որ իւրաքանչիւր զրոյցի ժամանակ չըպէտք է մոռանալ սերմանել հաւատ դէպի Աստուած, բացատրել Աստուծոյ ամենակարող զօրութիւնը, բարութիւնը, իմաստութիւնը: Պէտք է ամեն մի դէպքից օգտուել, որ բնականապէս հետաքրքրութիւն է շարժում և բացատրել Աստուծոյ անտեսանելի գործքերը, որոնք հետզետէ կը զարգացնեն երեխայի մէջ կրօնական զգացմունք: Բացի այդ, մի առանձին տեղ պէտք է տալ բարոյական և կրօնական բնաւորութիւն ունեցող զրոյցներին: Այդ տեսակ զրոյցներին մեծ նշանակութիւն են տուել այն գիտնականները, որոնք աշխատել են մանկական պարտէզի գաղափարի իրագործման համար: Բայց Ֆրէօբէլն առհասարակ խորհուրդ չէր տալիս զբաղեցնել երեխաներին այդ ուղղութեամբ: Այդ տեսակ զբաղմունքը համապատասխան չէր համարում երեխայի հասակի համար: Նա պնդում էր, որ երեխային պէտք է պատմել երեխաների կեանքից: Ֆրէօբէլն ասում է. երեխան երջանիկ է՝

երբ լսում է իր նմանների կեանքին վերաբերեալ մի լաւ պատմութիւն։ Պէտք է նրան ներկայացնել գերդաստանական կեանքից այնպիսի պատկերներ՝ որոնք ցոյց են տալիս, թէ նա որպիսի սխալներից պէտք է խուսափի, ցոյց տալ նրան վատ գործի տգեղութիւնը, պարտաւորութիւն կատարելու անհրաժեշտութիւնը, լաւ արժանաւորութիւնների սփոփանքը։

Հարկաւոր է երեխային պատմել այնպիսի բաների մասին, որոնք հետաքրքրում են նրան և ունեն բարոյական հիմք, պատմել հասարակ։ Ճիշտ և բնական կերպով։ Պատմութիւնը պէտք է ներկայացնէ բարոյականը՝ գործադրութեամ մէջ։

Սովորական պատմութիւններ լսելուց յետոյ, երբ երեխան փոքր ինչ մեծացած լինի, պէտք է պատմել ազգեցութիւն ունեցող պատմութիւններ ներկայից, ազգային պատմութիւնից, որոնց մէջ պէտք է գլխաւորապէս առաջ բերել զանազան տեսակ առաքինութիւններ և ապացուցանել, թէ պէտք է ատել՝ ինչ որ չար է։ Պէտք է ցոյց տալ որ բարի գործը վարձատրւում է իսկ վատը պատմւում։

Մենք արդէն ցոյց տուինք, թէ բարոյական տեսակետից որբան կարեւոր է նկարչութիւնը, երգը, խաղերը։ Զրոյցները պէտք է լինեն որոշ ուղղութեամբ, որպէս զի ծառայեն երեխաների հոգոյ, խելքի զարգացման համար, հասկացնեն երեխաներին գիտութիւնների նպատակը և ցոյց տան նոյնպէս մարդոյ գործողութեանց նպատակը։

Գիտութիւնը ցոյց կը տայ մեզ, որ պէտք է զարգացնենք մեր բոլոր ոյժերը, ձեռք բերենք միջոցներ, որոնցով կարելի լինի բարութիւններ անել, կատարենք մեր մարդկային պարտաւորութիւնները։ Հետաքրքիր է ման-

կական պարտէզի երեխանց տալ հետեւեալ հարցը։ Ի՞նչ կանէք՝ երբ մեծացած լինէք։ Նրանք կը պատասխանեն, որ կը կամենային մի որ և է տեսակ մարդ դառնալ, կը կամենային օգտաւէտ, բարեգործ մարդ լինել, կը զգան հրապոյրք գէպի ուսումնասիրութիւնն, աշխատանքը, նրանք կարեւորութիւն կըզգան, թէ պէտք է իրենց ցանկութեան համաձայն մի բան դառնալ Վարդուհին։ Պէտքէ հասկացնէ թէ հենց նրանց այդ ձգտումների համար է, որ նա օգնում է, կրթում է, սովորցնում է առաջնորդում է նրանց իրագործելու իրենց ցանկութիւնները և հոգում է իրենց նպատակներին հասնելու համար։ Երջանիկ կը լինի վարժուհին, եթէ կարողանայ երեխաների հայացքում տեսնել երախտագիտութիւն, այդ կը լինի նրա առաջին վարձատրութիւնը իր աշխատանքի համար։ Երեխաները այդ յորդորները տեսնելով՝ կը ոգեւորուեն, աւելի լաւ կաշխատեն և աւելի զուարձութիւն կը գտնեն իրենց աշխատանքում։ Պէտք է երեխաների հետ խօսել գեղեցիկ և օգտաւէտ կոչումների մասին։ Հետ խօսել գեղեցիկ և օգտաւէտ կոչումների մասին։ Պէտք է ապացուցանել, որ ամեն բան Զրոյցների մէջ պէտք է ապացուցանել, որ ամեն բան պէտք է գէպի բարեգործութիւն տանէ և թէ առանց Աստուծոյ կամքի ոչինչ չի կատարւում։ Երեխաները կը տան զանազան հարցեր Աստուծոյ գործողութեանց մասին և շատ անգամ կըստիպեն վարժուհուն բացատրել մին և շատ անգամ կըստիպեն վարժուհուն բացատրել, երկրագնդի ստեղծագործութեան մասին, Աստուծուծոյ խոստումների մասին և այլն։ Պէտք է նրանց հասկացնել, որ բնութեան մէջ գտնուող առարկաները, հասկացնել, որ բնութեան մէջ գտնուող առարկաները, բնական երեսիթները և ոյժերը, որոնց գործում են Աստուծուները տեսում ենք՝ ստեղծուել են և գործում են Աստուծոյ կարգագրութեամբ և թէ Աստուծած ցանկանում է մեր բարելաւութիւնը, որպէս զի երեխաներն ընդունեն

այդ բոլոր բացադրութիւնները, վարժուհին էլ պէտք է միայն բարի օրինակ ցոյց տայ նրանց, լինի արդար, բարի և ազնիւ: Զէ կարելի երեխաներին այսօր մի բարի գործ քարողել և վաղը դրա հակառակը գործել:

Ուսումնարանական կարգապահութիւնը, որ երեան է հանում երեխայի լաւ ու վատ յատկութիւնները, միջոց կը տայ նրան ուղղել իր պակասութիւնները: Պէտք է պահպանել երեխայի միամտութիւնն, անմեղութիւնը և ստիպել նրա նատելու ինչ որ չար է: Պէտք է սովորցնել նրան Աստուծուն դիմելու և օգնութիւն խնդրելու կարեռութիւնը, այն ժամանակ երեխայի մէջ կըսկսեն զարգանալ ինչպէս նրա կրօնական և բարոյական զգացմունքները, սերմերը՝ նոյնպէս և նրա մտաւոր ոյժերը:

Մեծ երեխան կըտայ Աստուծոյ մասին աւելի գժուար և հետաքրքիր հարցեր, որոնց պէտք է պատասխանել: Պատմութեան, բնագիտութեան և Աստուծոյ խօսքին վերաբերեալ զրոյցները միջոց կըտան բաւարարութիւն տալ նրա կրօնագիտութեան հետաքրքրութեանը: Ո՞րքան ուշադրութեամբ լսում են երեխաները ամեն մի հարցի մասին՝ երբ նրանց հետ սրտանց են խօսում: այդ տեսարանը շատ գեղեցիկ է և սրտաշարժ:

Կրօնական և բարոյական զգացմունքներ զարգացնելն առաջին տեղն է բռնում կրթական գործում:



ԳՐԵԼ ԵՒ ԿԱՐԴԱԼ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՏԱՌԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄՄԵ



Նատերը սխալմամբ կարծում են, որ մանկական պարտէզում տառերի և լեզուի ուսումնասիրութիւնն վերջն են սկսում: այն ինչ մանկական պարտէզում այդ գործը սկսում են ամենափոքր երեխաների հետ: Նկարչութեան վերաբերեալ բաղմազան զբաղմունքները վարժում են երեխայի ձեռքն ուղիղ և կոր գծեր քաշելու, որոնք հարկաւոր են գրել սովորցնելու համար: Այդ տեսակ պարապմունքները միևնուն ժամանակ զարգացնում են նրանց ընդունակութիւնները, ճաշակը, սովորցնում են ճշտութեան և ճարպիկութեան: Զրոյցները տալիս են ճիշտ գաղափար իրերի մասին, նոյնպէս և խօսքերի պաշար այդ իրերը նկարագրելու համար: Զրոյցները տալիս են նոյն պէս գիտութիւն և երեխային պատրաստում են ոչ միայն իրերն, այլ և խօքեր և լեզու ուսումնասիրելու համար:

Նորագոյն մանկավարժութիւնն ի նկատի ունի նաև յառաջադիմութեան վերաբերեալ բոլոր նպաստող միջոցները, ընդունակութիւնների զարգացումն և զարգացման յաջորդական փոփոխմունքը: Լեզուի այս առաջին տարերքն ամեն բանի մասին գաղափար են տալիս: Ահա որա վրայ է գրուել կրթութեան հիմքը: Ամենից առաջ պէտք է երեխային նախապատրաստել գրել և կարգալ սովորցնելու համար:

ԳՐԵԼ — ԿԱՐԴԱԼ ՍՈՎՈՐՑՆԵԼՈՒ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

1. Հնչիւն. Ամենից առաջ պէտք է երեխային ծանօթացնել այն ձայների հետ, որոնք կան բնութեան մէջ, զոր օր. այն ձայնի հետ՝ որ քամին հանում է անտառում ալիքների ձայնի հետ, երբ գրանք դիպչում են ծովի եղերքին, ամպերի գոռալու հետ։ Այդ բնութեան լեզուն է։

Հնչիւնների հետ (son) ծանօթացնելու համար ամենից առաջ պէտք է որ երեխաները լսեն անասունների ձայները, թռչունների երգերը, որոնք հասարակ հչիւններ են և երբեմն էլ լինում են յօդաւոր (ունին վաճկեր), զոր օր. կատուի մլառուիլ «մեառւ» անելը։ Յետոյ պէտք է խօսել լսողութեան մասին, որ մեզ ծանօթացնում է բազմազան հրաշալիքների հետ։ Առանց լսողութեան բնութիւնը մեզ համար լուռ կը լինէր և մարդկային խօսքն առանց արդիւնքի։ Այդ կերպով մենք մօտենում ենք ցուցականութեանը, գործնականութեանը, առանց որի ըրկայ ճշմարիտ և խելացի ուսումնասիրութիւն։

Վերջապէս պէտք է սովորցնել այն խօսքերը, որոնցով որոշում ենք զանազան անասունների միջը, ծանօթացնել անասունների լեզուի հետ, այսինքն հասկացնել թէ ինչպէս գրանք զանազան ձայներ, հնչիւններ հանելով միմեանց բան են հասկացնում, կամ առանձին շարժողութիւններով, միմիկայով, միմեանց յայտնում են տպաւորութիւններ, մոքեր զգացմունքներ։ Անասունները ունեն զանազան տեսակ որոշ ձայն, միջ, շարժութիւններ, որոնցով զարմանալի կերպով միմեանց բան են հասկացնում, այն ինչ մարդն ունի խօսք։ Այժմ դառնանք դէպի մարդկային ձայնի հնչիւններին։

2. Մարդկային յայնի հնչիւնները։ Երեխան առաջին անգամ խօսելիս աշխատում է զտնել լեզուի հասարակ հնչիւնները, որոնց թիւն է 7 (ձայնաւորներ), սոքա մեծ նմանութիւն ունին անասունների մի քանի հնչիւնների հետ։ Եթէ աշակերտին հարցնենք՝ թէ որոնք են այն առաջին հնչիւնները, որ իրեխան սկզբում իրենից հանում է, կը յայտնուի, որ դրանք մեր հասարակ հնչիւններն են և ունեն իրենց նշանակութիւնը։ Աշակերտները կը սովորեն կարգով համարել ձայնաւորները՝ սկսելով ա-ից, որ հընչում է կոկորդից և կը վերջացնեն ու-ով, որ հնչում է շրթունքով։ Այդ կերպով կը լսենք աշակերտից հետեւեալ հնչիւնները, — ա, ե, է, ը, ի, օ, ու։ Սրանց մէջ կան մի ձայնաւոր՝ ա, որ կոկորդային է, երկրորդը և է, որ քիմքային են, երրորդն է, որ ատամնային է և մնացած երկուսը (օ, ու) շրթնային են։ Երեխաները ու բախութեամբ և կատակներ անելով են սովորում այդ ձայնաւորները։

3. Երեխայի առաջնին խօսքերը։ Երեխայի առաջին խօսքերը համարեա բոլորն էլ բացագանչութիւններ են, որոնց կարելի է դասել անասունների ճշոցի և մարդկային խօսքի (լեզուի) մէջ, բայց այնու ամենայնիւ մարդկային հընչիւններ են։ Ստուգաբանական (ԷՏИМОЛОԳИЧЕСКИЙ) տեսակետից գրանք կազմում են բառի սահմանը և ունեն իրենց իմաստը։ Այստեղ պէտք է բացատրել բացագանչութիւնների նշանակութիւնը (ա, ահ, ախ, է՛, է՛խ, է՛խ, հէ, հի, հօ, հը, ո՛, հօ՛, հո՛, և այլն)։ Այս բացագանչութիւնները պարզ հնչիւններ են, որոնք կոկորդի, քթի, լեզուի, ատամների, շրթունքի միջնորդութեամբ ենթարկում են զանազան փոփոխութեանց։ Այդ կերպով կազմում են այն բոլոր խօսքերը, որոնք անուանում են պարզ հնչիւններ։

1. Պարզ հնչիւնի կոկորդային փոփոխութիւնը, օ-
րինակ՝ — — — — գարի,
 2. Քթային (ռնգային) — — — նա,
 3. Լեզուային — — — դար,
 4. Ատամնային — — — շատ,
 5. Շրթնային — — — պապ,
- Հնչիւնների այս դասաւորութիւնն ամենաբնականն է։

ՄՏԲԵՐ ԱՐՏԱՅԱՑՏԵԼՈՒ ԳՐԱԽՈՐ ՄԻԶՈՑՆԵՐ :

Պէտք է երեխաններին հասկացնել՝ թէ մեր մոքերն ար-
տայայտում ենք գծերով, գրերով։ Անասունները միմեանց
իրենց մոքերը հասկացնում են ոչ միայն ձայն հանելով,
այլ և շարժողութիւններով (նաև մրջիւնները, մեղու-
ները)։ Երեխայի ուրախութիւնն ու անբաւականութիւնն
արտայայտում է նրա երեսի շարժողութիւններով։ Ման-
կական պարտէզում երեխանների խաղերի ժամանակ մի-
միկան մեծ գործ է կատարում և այդ կերպով նրանց
աչքը սովորում է ըմբռնել զգացմունքներ, մոքեր, իսկ
ձեռքն սկսում է կարեռը գեր խաղալ։ Ձեռքի շարժողու-
թիւններով արտայայտում են շատ մոքեր, զգացմունք-
ներ, որովհետև մոքի արտայայտելու ցանկութիւնը
ընականապէս ստեղծել է ձեռքի պայմանական շարժողու-
թիւններ, որ մի տեսակ լեզու է այն մարդկանց համար,
որոնք չեն կարող իրենց միտքը խօսքով կամ գրով յայտնել։
Այդ բոլորն ի նկատի առնելով, մարդիկ աշխատել են այդ
նշանական շարժողութիւնները նշաններով, գծերով արտա-
յայտել։ Այդ նշաններից կարելի է առաջ բերել առարկա-
ներ նկարելը, զոր օր. ծառ կամ տուն գրելու տեղ՝ տալ
դրանց նկարները և հարկէ նկարչութիւնը և քանդակագոր-
ծութիւնն ունեն իրենց նշանակութիւնը՝ մոքեր և զգա-
ցմունքներ արտայայտելու համար։

Այս նշանների վրայ պէտք է տւելանային մի ուրիշ
տեսակ նշաններ, որոնք կարողանային լրացնել առարկա-
ներ նկարելու պիտոյքը։ Այդ էր պատճառը, որ հնարե-
ցին խորհրդաւոր (Էմբլեմատիկ) նշաններ, զոր օր-
նկարեցին աղաւնի, օձ, առիւծ, արծիւ, և այլն, որոնցից
իւրաքանչիւրն ունի իր խորհրդաւոր նշանակութիւնը։
Այդ տեղից ծագեց խորհրդաւոր նշաններին վերաբերեալ
գիտութիւնը (Էմբլեմատիկ)։

Հետաքրքիր է երեխանների ուշագրութիւնը դարձնել
այս խորհրդաւոր նշանների վրայ, նրանք շատ լաւ համե-
մատութիւններ են անում և ըմբռնում են մի բանի յա-
րաբերութիւնն այն գաղափարի հետ, որ այդ պատկեր-
ները ներկայացնում են։ Նրանք կը հասկանան թէ ինչ
նշանակութիւն ունի, խարիսխը, սիրոը, թեաւոր անհւը
և ազգերի խորհրդաւոր գրոշմները (Գերն)։ Այս խոր-
հրդաւոր, բնական նշանների պատկերների մոքի հետ
կցւում են մի այլ տեսակ պայմանական նշաններ, որոնք
նոյնպէս օգնում են մոքի արտայայտութեանը։ Երեխանն-
երին կարելի է ցոյց տալ պայմանական հասարակ նշաններ,
որոնք գործադրում են թուաբանութեան մէջ։ զոր օր.
փոքրիկ խաչը (+), որ անուանւում է պլիւս (աւելի), հորի-
զոնական գիծը (—), որ անուանւում է մինուս (պակաս),
այն նշանը՝ որ բազմապատկելու նշանն է (X), երկու
գէտը (:)։ որ բաժանման նշանն է և մուզիկայում գոր-
ծադրուող նշանները, որոնց նոտեր են ասում։


Այս փոքրիկ վարժութիւնները կը ծառայեն որպէս յա-
ռաջաբան այն նշանների, որոնք համապատասխանում են
հնչիւններին։ Այն ժամանակ երեխանները նշանների վերա-
բերութեամբ իրենք իրենց հաշիւ կը տան ինչպէս հար-
կըն է, չեն սովորի անգիր՝ այլ հասկացողութեամբ։

Այդ բոլոր իսորհրդաւոր և պայմանական նշաններն սկսած հին ժամանակներից՝ նպաստել են գրելու արուեստին, որից պայմանական ձևով առաջացել են այն գրերը՝ որ այժմ գործադրւում են:


ՆՇԱՆՆԵՐԸ, ՀՆՉԻՒՆՆԵՐԸ:


Բոլոր վերոյիշեալը պէտք է լինի որպէս հասարակ և բնական խօսակցութեանց առարկայ:

Պէտք է երեխային ցոյց տալ մեր լեզուի պայմանական՝ հիմնական նշանները, որոնց մասին խօսեցինք և այդ նշանները քարետախտակի վրայ նկարել տալ երեխաներին: Այդ գործը հեշտութեամբ կը կատարեն եթէ երեխաները գծագրութեան, նկարչութեան մէջ վարժուած լինեն: Որպէս զի երեխաների հնարագիտութեան և քննողական ոգին մարզուած լինի, պէտք է նկարել տալ այն նշաններից մէկը, որ երխաներն արդէն իրենք գծագրութեան, նկարչութեան ժամանակ նկարել են գրատախտակի վրայ: Այդ նշանն հետևեալն է:




Երեխաներին պէտք է սովորցնել այս արդուածը, լուծել, քանդել և այն ժամանակ իրենք կը գրտնեն զանազան ուղղութեան և մեծութեան գըծեր, որոնց միացնելով կը յայտընուեն արդի բոլոր հնչիւնների (լատինական և հայկական) հիմնական գծերը և բոլոր տառերը (թէ գլխառուերը և թէ մանըրները), նոյնպէս և թուանշանները:





Երեխաներն իրենք կը գտնեն տառերի հիմնական գլ-ծերն այդ քառակուսու արդուածի գծերում։ որոնց կլորացնում են շուտ գրելու համար, կը գտնեն նոյնպէս թուանշանները։



Աթէ վարժութիւններն յաճախ կրկնեն՝ կը գայ ժամա-նակ, որ երեխաներն իրենք կը նկատեն, որ տառերը, թուանշանները, պարզ հնչիւնները պարունակուած են այդ արդուածում, պէտք է բացատրել, որ մեր աչքի առաջ դրած այդ գծերը նոյնպէս բան են ասում, ինչպէս հնչիւնները, որ լսում ենք։ Պէտք է նոյնպէս հառկայնել, որ այդ-

գծերին մենք անուններ ենք տալիս և դրանց նայելով կարող ենք նրանց արտասանել։

Երեխաները կուրախանան, տեսնելով, որ իրենց քարե-տախտակի վրայի նկարը մի տեսակ խօսում է և իրենց քերանով կը կրկնեն այն հնչիւնները, որ նշանակելեն իրենց ձեռքով։ Այստեղից հետեւում է այն բնական և բանական օրէնքը, որի մէջ պէտք է տեղաւորել երեկ բան այն է՝ 1, լեզուի հնչիւնները. 2, գիրը, որ աչքով տեսնում ենք, 3, կարդալը, որ կատարւում է սկզբնական եղանակով։

Սրանց մասին կարելի է հետաքրքիր կերպով զրուցել երեխաների հետ, բացատրել կամ աւելի լաւ է, որ նրանք որպէս գիւտ անելով, հասկանան՝ թէ գրել իմանալը որքան կարեւոր է, նոյնպէս կարելի է բացատրել, թէ որքան ուրախալի է նամակ գրել և ստանալ։

Այն երեխաները, որոնք արդէն սովորել են ուղիղ և կոր գծեր քաշել կամ նկարել՝ հեշտութեամբ կը հասկանան և կը սովորեն տառեր նշանակելը։

1. Սկզբում նկարել տալ այն ձեռփ, որ կայ այդ քա-ռակուսի արդուածում մեծ և փոքր տառերը։

2. Յետոյ նոյն քառակուսուց նկարել տալ այն տառերը (մեծ և փոքր), որոնք գործադրւում են տպագրութեան մէջ։

3. Յետոյ տառերին տալ զանազան երեակայական ձեռք, այսինքն նկարել տալ բաղադրեալ նկարներ (Փիգուրներ), որոնք տառերի ընդհանուր ձեւն ունենային։

4. Վերջապէս ցոյց տալ այն տառերը, որոնք սովո-րաբար գրելիս գործադրւում են։

Առաջին երեք համարներում նշանակուած վարժութիւնները ծանօթացնում են գրի նշանների հետ, որ երեխաները կարողանան տառերը շուտ ճանաչել։ Դրանով կարելի է պարտապել այն ժամերին, որոնք նշանակուած են նկար-

Հութեան համար։ Իսկ Կ համարում նշանակուած վարժութիւնը կանոնաւոր գրելու համար է։

Երբ երեխաները ճանաչեն և գրել կարողանան պարզ հնչիւնները՝ պէտք է նրանց նոյն կերպով ծանօթացնել միւս զանազան տեսակ հնչիւնների հետ։ Այդ բոլորը սովորելուց յետոյ պէտք է գործադրել միայն տպագրեան կան և սովորական գրելու տառերը։

Օ Բ Ի Ն Ա Կ Ն Ե Ր

Այդ կերպով երեխաները կը սովորեն տպագրական և գրելու մեծ և փոքր տառեր և կը գիտենան իւրաքանչիւր տառի անունը։

1. Զայնաւոր և բաղաձայն տառեր,
2. Տպագրական (մեծ և փոքր) տառեր,
3. Գրելու (մեծ և փոքր) տառեր։

Երեխայի աչքը պէտք է սովորցնել զանազանելու բոլոր ձեւի և տեսակի տառերը։

ԿԱՐԴԱԼ ՍՈՎՈՐՑՆԵԼԸ

Կարդալ սովորցնելը պէտք է կատարել վանկերով։

Դրա մասին երկաօրքն գրելն աւելորդ համարելով՝
առաջարկում եմ մեր յայտի մանկավարժ Պ. Սեղրակ
Մանդինեանի «Ազգային ընտանեկան աշխարհ» աշխատա-
սիրութիւնը, որ կատարեալ բաւարարութիւն կը տայ
կարդալ և գրել սովորցնելու համար։

ՀՀ Ազգային գրադարան



NL0585941

